A brief grammar of the English language, explained in twenty lessons.
Kurken, A.
Venice, S. Lazarus Armenian College, 1853.

http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g

HathiTrust

www.hathitrust.org

Public Domain
http://www.hathitrust.org/access_use#pd

We have determined this work to be in the public domain, meaning that it is not subject to copyright. Users are free to copy, use, and redistribute the work in part or in whole. It is possible that current copyright holders, heirs or the estate of the authors of individual portions of the work, such as illustrations or photographs, assert copyrights over these portions. Depending on the nature of subsequent use that is made, additional rights may need to be obtained independently of anything we can address.

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Digitized by
INTERNET ARCHIVE

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Digitized by
INTERNET ARCHIVE
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Digitized by
INTERNET ARCHIVE

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Digitized by
INTERNET ARCHIVE

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Digitized by the Internet Archive
in 2007 with funding from
Microsoft Corporation

http://www.archive.org/details/briefgrammarofen00kurkrich

Digitized by
INTERNET ARCHIVE

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՀԱՄԱՌՕՏ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՈՅ

A BRIEF
GRAMMAR
OF THE ENGLISH LANGUAGE

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Digitized by
INTERNET ARCHIVE

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

ՀԱՄԱՌՕՏ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՈՅ

ԱՒԱՆԴԵԱԼԻ ՔՍԱՆ ԴԱՍՍ

Ի

Հ. Ա. ԳՈՒՐԳԵՆԵԱՆ Մ. Մ.



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1853

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Digitized by
INTERNET ARCHIVE

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

81750

A BRIEF GRAMMAR OF THE ENGLISH LANGUAGE

EXPLAINED IN TWENTY LESSONS

BY

REV. A. KURKEN M. M.

VENICE

S. LAZARUS ARMENIAN COLLEGE

1853

Digitized by INTERNET ARCHIVE

Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

The Armenian is a rich language, and would amply repay any one the trouble of learning it.

LORD BYRON

TO M.r MOORE, 5 *Dec.* 1816

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Digitized by INTERNET ARCHIVE

Original from UNIVERSITY OF CALIFORNIA

PK 8886
K8

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ նախապատիւ ընտրութիւն լեզուաց՝ որով խրախուսիմք յուսումն նոցին Թեւակոխել, 'ի բազմապատիկ յօգտակարութիւնս նոցին հաստատեալ է, ապա և անգլիականն բարբառ իրաւապէս դասեսցի 'ի շարս կարևորագունից իւրով յոքնագիմի շահաւէտութեամբքն, և արժանաւոր ընծայեսցի ջանից և վաստակոց՝ որոց յուսումն նորին պարապել ախորժեսցեն. և զոր զմերոյս բարբառոյ վկայեաց քերթող նոցին հռչակաւոր՝ եթէ «Ճոխ է բարբառս, և առատապէս փոխատրեսցէ զվաստակս յուսումն նորին տքնելոց», զնոյն մեզ 'ի դէպ է զլեզուէ նոցա համարձակագոյնս Թերևս բարբառել. որչափ զի վաստակ 'ի սմա ոչ այնչափ քրտնաջան պահանջի 'ի մերաղնեայց յըմբռնել զանգլիացին, որչափ յեւրոպացւոց անտի՝ որ յանսպառ գանձս Ճոխութեան մերոյս հպել միայն կամիցին։

Զանց զայլովքն արարեալ զբարեմասնութեամբքն՝ յերիս միայն նկատեսցուք զշահաբեր արդիւնս լեզուիս, 'ի բանագնացութիւնս տեսչութեանց, յարարս վաճառականութեան, և 'ի Ճոխութիւնս գպրութեան նոցա։

Ի յաճախել օր քան զօր արևմտեայց ընդ արևելեայսս կցորդութեան և մեր ընդ նոսա, մարթ է որոց գիտակ իցեն լեզուիս յազգէս մերմէ՝ 'ի բազմապատիկ կարևոր գործս պետութեանն լինել ձեռնտու, և յաջողել իսկ 'ի նոսին՝ յանձանց 'ի փառս և ազգիս 'ի պարծանս. որպէս 'ի թարգմանութիւնս ատենից, դեսպանատանց և պաշտօնատանց՝ 'ի մերում աշխարհիս 'ի մայր քաղաքաց պետութեանս. և եթէ յաշխարհի անդ Բրիտանական պետութեան՝ իբրու

Digitized by INTERNET ARCHIVE

Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

բանագնացս և նոտարս դեսպանաց Օսմանեան պետութեան։ Իսկ վասն այնոցիկ 'ի մերազնեայց որոց պանդխտեալ բնակիցեն յաշխարհս հեռաւորս՝ ընդ հզօր հովանեաւ անգլիականին պետութեան, որպէս 'ի Հնդիկս և 'ի Կղզիս հարաւակողմանցն Ասիոյ, միակ լեզու նոցա և 'ի կենցաղական կեանս իսկ՝ անգլիականն համարի բարբառ, և նովին վարին և ատեանք դատաստանաց և ակմբարանք շահավաճառուց. յորմէ ինքնին 'ի յայտ գայ կարևորութիւն բարբառոյս հնգկաբնակ ազգակցաց մերոց, որոց չէ բաւական հրահանգք ևեթ խօսից, այլ և անթերի ծանօթութիւն գպրութեան։

Իսկ ըստ երկրորդին զոր ասացաք, տեսանեմք զԱնգլիացին և զհամազգիս նոցա զԱմերիկացիս Միացեալ պետութեանցն՝ որոց լեզու զոյգ հասարակ անգլիականն է, տիեզերագրաւ վաճառաշահութեամբն՝ գերամբարձ անցեալ քան զամենայն ազինս աշխարհի, և ընդ ամենեցուն նոցա 'ի կցորդութիւն տուրևառութեան շաղկապեալ, և յամենայն քաղաքս արևելից հաստատեալ զհամբարս իւրեանց անսպառ ճոխութեանց։ Ասի ապա ակներև յանդիմանի՝ եթէ և մերոց համազգեաց՝ որոց ակն եդեալ է յարդիւնարար վաստակս տուրևառիկ վաճառուց, կարևոր է յոյժ բարբառս. և այնոցիկ որոց յաշխարհս նոցին և 'ի միջի նոցա պանդխտեալ իցեն, զի չմարթէ յօտար երկրի և անգէտ բարբառոյ ազգին յաջողել 'ի վաստակս՝ նիւթական ևեթ հրահանգաւ զուցցաւորութեան. և նոցա որք յիւրեանց աշխարհին մնալով՝ բարգաւաճել խնդրեսցեն 'ի շահավաճառս, և կամիցին ընդ հուչակաւոր վաճառատանց Եւրոպայ ունել կցորդութիւն տուրևառութեան։ Զասացեալս և վասն երիտասարդաց ազգիս թէ քանի՞ օգտամատոյց լիցի նոցա անգլիականն, յորժամ անբաւականք 'ի կանգնել զառանձինն վաճառատունս՝ կամիցին իբրև գործակալս և գպիրս արբանեկել մերազնեայց և օտարաց 'ի շահաստան քաղաքս մեր. ձեռնպատրաստ ունելով զերկոսին կատարելութիւնս, զարդարն ասեմ և զա-

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ջալուրջն տնտեսութիւն, որով իրաւամբ իսկ համբաւեալ է ազգս 'ի նոցունց իսկ յԵւրոպացւոց, և զարևելեան բարբառոյ իրիք զանվրէպ գիտութիւն, որ կարի կարևորն է այլ ազգեաց վաճառականաց յաշխարհս մեր գաղթելոց. որոց առ հասարակ անգէտք դոլով բարբառոյ արևելեայց, այնպիսեաց կարօտին յաջողակ և լեզուագէտ ստատարաց: Սովիմբ գիւրաւ հորդի և ճանապարհ կցորդութեան արևելեայցս ընդ հնդկաբնակ եղբարս համազգիս, որք թէպէտ բարգաւաճք 'ի տուրևառս վաճառուց ընդ եւրոպական ազինս, այլ ոչինչ կցորդութիւն է նոցա ընդ իւրեանց ազգակցաց, զոր և թախանձանօք ազդէր մեզ յայսոսիկ աւուրս ոմն 'ի մտերմաց մերոց 'ի ճաւայ:

Սակս ամենայնի այսորիկ կարևոր յոյժ համարիմք զուսումն անգլիական բարբառոյն 'ի վարժարանս ազգիս, որ վասն չպակասեն յազգիս և Քերականք և Բառագիրք և Թարգմանութիւնք. նախահոգակ քան զմեզ լեալ յայսմ բազմավաստակ հարց մերոց առաջնոց, որոց ջան և քիրան յանձին բերեալ է՝ գիւրել մեզ և այլոց ուսանելեաց զբարբառն «Դժուարին, այլ ոչ և անյաղթելի», որպէս զմերոյս վկայեաց գոլ աշխարհաքարոզն Պայրըն:

Նա և նոքին որք 'ի բանասէր հրահանգաց բերեալք գան յուսումն ազգ ազգ լեզուաց, ոչ և նոցա անշահաբեր հանդիպեսցի անգլիականին ծանօթութիւն. զի և բնախօսութեամբն հզօր է և գեղեցիկ, և ըստ մատենագրութեանն ճոխ, ընտիր և բազմազուարճ. որպէս յառաջիկայս է տեսանել 'ի սակաւամատնեայ ծանօթութենէս՝ զոր կարևոր համարեցաք կարդել զյառաջատութենէ բարբառոյ նոցին և դպրութեան:

Ի յօրինուած համառօտութեանս՝ սակս առաջնոյ մասին որ են Կանոնք քերականականք, առաջնորդ մեզ կալաք զՔերականութիւնն Վէրկանի, զտպագրեալն բազում անգամ յաւելուածովքն 'ի Սաուլերէ (1844), և զնոր քերականու-

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

թիւնն Պրիսիոյ (1841)։ ինչ ինչ զեղչեալ յաւելորդաց, և զայլ կարևորս յայլուստ ընդ նոցա փոխանակեալ, և իւրաքանչիւր դասուց բաց 'ի վարժիցն 'ի գործադրութիւն կանոնաց աւանդելոց՝ յաւելաք և կրկին կրթութիւնս։ Իսկ վասն երկրորդին՝ յորում են զանազան հրահանգք քերականաց կանք կամ կրթութիւնք լեզուագիտութեան, առաք յօրինակ զՔերականութիւնն Ռոպերթսընի (1846), որ սակս նոր բահաստատ գրութեանն ընդունելի յոյժ գտաւ այժմեան բանասիրաց, և որ օգտամատոյց յոյժ եղիցի և մերոյ ազգիս վարժապետաց և աշակերտաց։ Յայսմ մասին որչափ ինչ կարևոր թուեցաւ մեզ՝ ոչ խորշեցաք յերկայնութենէ օրինակացն և կրթութեանց։ զի անգլիական գիրք գժուարագիւտք են յարևելս 'ի պէտս մանկանց, և գժուարագոյն ևս նոցին ընտրութիւն։ և քանզի առանձինն իմն նիւթական պիտոյից շահաւոր գործել զբարբառս ակն եդեալ էր, վասն որոյ ոչ գանգաղեցաք զբազմապատիկ գործառնութեանց զյեղանակս գրութեան յաճախել 'ի սմա։ Սակս Առոգանութեան և Ուղղագրութեան և հնչման տառից և բառից՝ որ գոգցես գժուարագոյն մասն է անգլիականին, զկ'ենդանի ձայն վարժապետի ազգաւ անգլիացւոյ և մայրաքաղաքացւոյ ունէաք մեզ երախտաւոր օժանդակ, բաց 'ի Բառագրոցն ՀԵՌՆՏՈՒՐԹԵՆԷ։ որպէս և վասն մանրախոյզ ուղղագրութեան անսայթաք տպագրին՝ զսիրայօրդոր մտադիր Ջանս հոգեհարազատ սիրելեաց։ — Պատշաճագոյն գատեցաւ բազմաց 'ի բարբառ գրոց զսա աւանդել։ մի զի գիւրագոյն իցէ զուգակշիռ բաղդատութիւն կանոնաց կրկին լեզուաց՝ հայկականին և անգլիականին։ և երկրորդ անգամ զի և լսութեան ազգիս լիցի ընտել և գիւրահաս։ զի աշխարհիկ բարբառ մեր ըստ գաւառաց դաւառաց առեալ փոփոխումն, և ամենևին իսկ այլակերպեալ՝ անհաս ընծայի բազմաց։ իսկ գրոցն ամենայն ուրեք նոյն է և անփոփոխ, և ամենեցուն առ հասարակ զնոյն միտս ընծայէ։ Որոյ վասն և պարզագոյն զշարադրածն կարգեցաք, զի գիւ-

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

բալուր իցէ ամենեցուն. և մանաւանդ 'ի վարժս իւրաքանչիւր դասուց կամակար իսկ խոտորեցաք 'ի Հայացի վայելչութենէն, զի հեշտին իցէ աշակերտաց յանգլիացի բան շրջել զնոսա. զի ոչ եթէ զառաջնոյն զգեղեցկութիւն առաջի կայր մեզ ածել 'ի հանդէս, այլ զերկրորդին զբնախօսութիւն և ըստ կազմութիւն. և 'ի ցուցանել անդ զնախիրն որ ընդ մէջ երկուց լեզուացս, հնոյն ասեմ և նորոյս, առաւել արժան էր խոնարհել 'ի պարզաբանութիւն վերջնոյս, քան ընդ առաջնոյն բարձրաթռիչ ամբառնալ։

Ակն ունիմք զի կարօտութիւն աղգիս մանաւանդ, քան դոյզն գործոյս կատարելութիւն, արդահատեսցէ զներումն թողութեան սակս թերութեանցն սպրդելոց. և զարդիս սովին շատացեալ, կատարելագունի վաստակոց ակնկալել 'ի նոցին իսկ յուսանելեացն ջանից, ըստ անկեղծաւոր բանիցն Որատեայ

Si quid novisti rectius istis,
Candidus imperti; si non his utere mecum.
Horat. Epist. lib. I, 6, 68.

ԲԱՐԲԱՌ ԱՆԳԼԻԱՑԻՈՑ

ԲԱՐԲԱՌ անգլիական՝ որ վարի 'ի գիր և 'ի բան յԱնգլիա, յարևելեան և 'ի հարաւայինն Սկոտիա, 'ի մասն մի Իռլանտայ, 'ի հրահանգեալ դասուէ բնակչաց Բրիտանական կղզեացն Հէթլէնտ, Թէրսի և Կէրնրսի, 'ի գաղթականաց անգլիացւոց յայլեայլ մասունս աշխարհի, յարևելեան Հնդիկս և 'ի Մեծացեալ պետութիւնս Ամերիկայ. և որ յաձախ լսի 'ի Հանովէր, 'ի Յոնիական կղզիս. 'ի խումբս Մելիտինոյ, 'ի Փորթուկալ, 'ի Պրազիլ և 'ի Հայիթի, յանգլո-սաքսոնէն և 'ի նորմանդ-փրանկականէն ունի զծագումն, խառնուրդ իմն բերելով 'ի կելտ և 'ի հռոմական լեզուաց (1), որ և քան զայլ ամենայն լեզուս Եւրոպայ պարզագոյն է և միավանկ, և առաւել քան զնոսա այլազան ըստ գրութեանն և ըստ հնչման։

Անգլո-սաքսոնն անուանեալ լեզու անգստին 'ի Ե դարէ մինչև ցԺԱ հասարակաց բարբառ էր Բրետոնեանն դաշտաց. անխառն մնացեալ ամենևին ընդ ամ վաթսուն յորս ձգեցաւ դանիացւոցն պետութիւն, զի և սոցա բարբառ՝ որ էր սկանդինավեանն, հարազատ համամայր համարէր ընդ առաջնոյն. այլ յորժամ Աշխարհակալն անուանեալ Գուլիէլմոս Նուաձնաց և զսահմանս Անգլիոյ, պատուէր հրամանի ետ պարտելոցն զյախրնթռոն վարել լեզու որ կոչէր նորմանդ-փրանկաց. յորմէ բազում բառք եկամուտք սպրդեցան

(1) Ըստ վերջնոց ստուգագոյն խուզարկութեանցն Թոմլէլի 'ի 48,366 բառից անգլիական բարբառոյ՝ 15,350 'ի տեսմնական լեզուաց առեալ են, 29,854 'ի հռոմմանական (իտալական. փորթ. են), 98 'ի կելտաց, և 294 յանստոյգ աղբերաց։

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

մոին յառաջին լեզու նոցա, թէպէտ և այլափոխեալք ըստ հնչմանն և ըստ կազմութեան, որպէս բնախօսութիւն բարբառոյ նոցին պահանջէր։ Այլ յետ սակաւուց 'ի բորբոքել պատերազմաց ընդ անգլիացիս և ընդ փրանկս, ասպետքն նորմանդացիք որ նուաճեալ ունէին զԱնգլիա՝ 'ի բաց թողին կամակար զլեզու բնագաւառ հայրենեաց իւրեանց, և սկսան վարել 'ի բարբառ նուաճելոցն։

Յայնմ հետէ տակաւ յարդ և 'ի զարդ գայր բարբառն, թէպէտ կարի յամրագոյնս. մինչ յետոյ ուրեմն առ Եդուարդաւ Ա 'ի վախճան ԺԳ ին տեսաւ 'ի նմա դոյզն ինչ բարգաւաճութեան։ Առ Բ Եդուարդաւ երևեցան Մէնէսթրէլքն անուանեալ քերթողք աշխարհածուք։ Իսկ յաւուրս Եդուարդայ Գ փրանկականն 'ի սպառ տարագրեցաւ յատենից պետութեանն առանձինն հրամանագրով մեծի Խորհրդարանին, և վճռեցաւ զի անգլիականն ևեթ համարեսցի օրինաւոր բարբառ պետութեանն։ Ի ԺԵ դարու և ևս հրաբորբոք ծաւալեալ հեռ և ոլորութիւն 'ի մէջ երկուց ազանցն, որ յառակս ապա ընկալաւ, 'ի սպառ անջրպետեաց զսովորոյթս, զբարբառ և զգրութիւն զանգլիացւոցն և զփրանկաց։

Առ Հենրիկոսիւ Ը սկսաւ անգլիականն լեզու հպատակել օրինաց, և ձոխացաւ յոյժ յոյն և լատին ասացուածովք. շնչտաբանութիւնք բառից մեկին ևս կարգեցան, և յառաջանութեանն մեծամեծ փոփոխութիւնք գործեցան, ըստ նմանութեան իտալացւոցն չափու, որ առաւել քան զհնոցն չափս պատշաճագոյն դատէր անգլիական բարբառոյ, վասն ճշգութեանն և քաղցրաձայնութեան։ Այլ յետ Զոսբրի (1350) ոչ ոք զհետ եղև 'ի յղկել և 'ի թեքել զբարբառն, մինչև յարեան Սփէնսըր և Շէյքսփիր։ Յետ նոցա Քրամուէլ և այլք ըստ նմանէ՝ նորօրինակ իմն հնարեցին լեզու խորհրդական և ծաղրական. այլ Միլթըն առ ոչ ինչ համարեալ զայն, ձոխացոյց զբարբառ իւր նորահրաշ կազմութեամբ և խիզախ ձևովք բանից. Ուոլլըր և Տրայդրն սկսան բարեզարդել զնոյն և զվսեմին նկարագիր տպաւորեցին 'ի նմա. իսկ Սուիֆթ, Էդիսըն, Փոփ և Սթիլ շուրջ պար առեալ զԱննայիւ, ահեղ և երևելի հանդիսացուցին զնոյն՝ մեծավայելուչ և չքնաղ ասացուածովք բանից և աշխուժիւ յարձակ և 'ի չափական բանս։

ՑԺԸ ում դարու 'ի նորանոր յեղանակս բանից զարգացաւ անգլիականն բարբառ՝ օժանդակեալ 'ի բանախօսութեանց և 'ի վիճմանց Խորհրդարանին, և ընդարձակեալ ծաւալեցաւ ընդ ճարտարութեան ազգին, և ընդ վաճառաշահ կցորդութեանցն՝ յամենայն ազգաց Եւրոպայ յաճախեաց իւր բառս նորանորս. այլ այնպէս սեպհականեաց զնոսա և խառնեաց յիւր լեզու, զի հիմնական բարբառն՝ այն է սաքսոնն, միշտ արտափայլէ 'ի նմա. մինչ զի գոգցես ամենայն արմատականք զհնագոյն բարբառոյն բերեն զնախատիպս. որպէս հանդերձեալ եմք և օրինակաւ իւիք բացայայտել զոյն 'ի հրահանգս Քերականիս։ Ըստ հնչմանն թերևս հնչեղագոյն և դաշնակաւոր ևս էր անգլո-սաքսոնն քան զայժմու անգլիականս. այլ որ զինչ և իցէ, է սա արդարև բարբառ ձոխ, գիւրաթեք, կորովի, վսեմ և գեղեցիկ նկարագրոքն պերճացեալ. և համառօտ ասել՝ է սա բարբառ արգասաբեր վաճառաշահութեան, ատենակալ պետութեանց և աշխարհածու ճանապարհորդաց։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻԱՑԻՈՑ

Անդէն 'ի սկզբան զնկարագիր կրկին լեզուաց վերագրելոց առաջի առնէ մեզ. պարբերգք և նուագք խազմարարք Սաքսոնեանց՝ զտարերս գերմանատիպ բարբառոյն. իսկ վէպք ասպետաց, քերթուածք դիւցազնականք և չափաբերեալ պատմութիւնք զնորմանդ-փրանկացն բերեն զնախատիպս։ Առ Եդուարդաւ Ա 'ի վեր երևին ժամանակագիրք յանգաւորք Հաբերտոսի 'ի Կլոսեսթերայ, որ թէ և ըստ մատենագրութեանն երիցագոյն համարի, բայց ըստ քերթողութեան արժէ ինչ ոչ։ — Առ Հռիքարդոսիւ Բ յաճախեն ոտանաւոր քանք յանգլիացի և 'ի լատին բարբառս։ — Ի ժամանակս Եդուարդայ Գ Զոսբրի անուանեալն Աստղ առաւօտին և աշակերտեալն Փեղբարքայ՝ 'ի տարազ անգլիացի պատուիրէ զքերթուածս փրանկաց. Ուիքլիֆ թարգմանութեամբ աստուածաշունչ տառից կայուն տայ նորաթեք լեզուին։ — Անտի ընդ բովանդակ դարն ԺԵ խանգարին և ևս դպրութիւնք. և յետոյ ուրեմն 'ի ԺԶ ին միւսանգամ վերակենցաղին։

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Հաւրրտ, կոմն Սրրրի, Թոմաս Ուայէթ և Փիլիպպոս Սիմոնի նախընթաց լինին Սփէնսրրի որ աշակերտն էր Արիոստոյ. իսկ Ճոն Պոլ, Փրէսթրն, Էտուրրտ, Լիլլոյ, Ռիտ, Կէսքոնեը և Մարլոյ կանխագուշակ լինին գալստեան Շէյքսփիրի որ հրաշագոյց զԱնգլիա պատմական թատերաքն, յորդեալ շաւիղ եկելոցն զհետ, որպիսիք եղեն Պէն-Ճոնսրն, Պոմրնթ, Ֆլէչրը, Մէսինճէր, Զէփմէն, Հէյուուտ և Ռրլի։ Զերգիծանսն և զտուարածականսն Ճոխացուցին Ճոն Տուն և Ցովս. Հոլլ, զնկարագրական քերթուածսն ստեղծաբանեաց Միքայէլ Տրէյթրն. գերազանցեաց 'ի քնարականին Ուոլթրը Ռէյլի, նա ինքն գրեաց յարձակ բան զպատմութիւն տիեզերական, և Ռէմորն նկարագրութիւն Անգլիոյ։ — ՑՀ. Նէփիրը եգիտ զնշանակս համարողականին. Պէքրն հաստատեաց զփորձառականն իմաստասիրութիւն. առ նոսաւ դարձեալ զառաջինն Ճոխացաւ ատենականն պերճախօսութիւն. և Ըշրը ՑԿ. անուանի գտաւ յեկեղեցական պատմութեան։

ՑԺԷ դարու Ուոլլրը և Ռաուլի մանը քերթուածովք կանխաձայնեցին զդարն նորոգութեան առ դշխոյին Աննայիւ. Միլթրն զհրաշաձառն շնորհեաց քերթուած գիւցազնական իւրոց հայրենեաց. Պրթլրը անուանի գտաւ յերգիծանսն առ Կարոլոսիւ Բ. Տրայտրն ետ զառաջինն զքննաբանական կանոնս անգլիականին, և նուրբ հանճարովն և ճաշակաւ հրաշալի 'ի քերթողս գտաւ. Սթիլ և Էտիսրն հաստատեցին զառաջին լրագիրս. Փոփ կոխեաց զհետս Տրայտնի առաւել ևս իմաստասիրութեամբ և բարոյախօսութեամբ. Թոմսրն ած 'ի լոյս զնկարագիր քերթուած յեղանակաց։ Կատակերգութիւն կարի անպատկառ յանդիմանեցաւ 'ի թատերս, և լրբենիք 'ի մատենագիրս կացին Ֆարքուէյր, Էթհրրէթ, դուքսն Պրքինկէմայ, Ուիչրրլի, Ռոնկրլիվ, և երկրին կանայք Աֆրա Պիին և Շուշան Սէնթլայվրը. սակաւ ինչ համեստագոյնք քան զդոսա համարին Վէնպրրկ և Սիպրը. յերգիծական վիպասանութիւնս հանճարեղ հանդիսացաւ Ճոն Սուիֆթ։

Հարագրսած պատմական ոչ նոյնպէս արագ արագ զարգացաւ. միայն Պրրնիթ 'ի նմանութիւն Հերոդոտեայ կրթեցաւ 'ի պատմութեան իւրոց ժամանակաց. ոչ անմասն են 'ի գովութեանց և Պէքրը, Թիրրլ, Էչարտ, Թոմաս Սփրէյթ. զի ընձեռեցին նիւթս՝ որոց զհետ եկին նոցա։ — Լրք աշխատ եղև բազմք 'ի զարգացումն փորձառական իմաստասիրութեան. իսկ զգաղափարականն բարգաւաճել խնդրեցին Պրրքլի և Լորտ Պոլինգրրք, այլ 'ի բազում կարևորագոյն խնդիրս գթեցին. Նիւթրն Իսահակ գերազանցեաց զամենեքումբք՝ 'ի խնամութեան անյեղլի օրինաց բնութեան։ — Ի վերջ կոյս ԺԷ դարուս՝ յորժամ իրաւանց թագաւորին և ժողովրդեան եղաւ սահման, յայնժամ և ազատութեան մամլոց և ատենից ցուցաւ զօրութիւն։ Անգստին 'ի ժամանակաց Գուլիէլմոսի Գ և դշխոյին Աննայ յիշատակին կացեալ ատենախօսք Լորտ Սոմերս, ՑՀ. Հոլթ, Ուշի, Մոնթէյկ, Թաունսհէնտ, Պէթհրստ. այլ ապա և ևս Ճոխացուցին զնոյն Հառբերգ Ուոլփոլ, Փրլթնի, Շիփրն, Պրրնրստ, Զէսթրֆիլտ, Հարտուիք, Արձիլ, Քարթրէթ, և 'ի վերջէ մեծն Փիթ, մի 'ի հոյակապ ճարտարախօսաց դարուս վերջնոց առ ժամանակաք Գէորգայ Բ. իսկ 'ի բեմականին հռչակաւորք եղեն Թիլլրթսրն և Հէրրք։ — Ռոլլիրը, Շաֆթսպրրի, Էտիսրն և անհամեմատն 'ի քննաբանս Ճոնսրն հաստատեն զանշմարիտ և զուղղագատ սկզբունս գեղեցկին և բարւոյն։

Ի միջոց ԺԸ դարուն տեսանեմք զանգլիականն հանճար 'ի նորանոր ազգս մատենագրութեանց լեալ ձեռներէց. Ռիչարտսրն զխոհական վիպասանութիւնսն հնարելով և Ֆիլտին զծաղրականն. զոյս ապա Սթէրն 'ի մի լծորդեալ՝ զնորաստեղծն և սեպհական անձինն եցոյց զվիպասանութիւն, զորոյ բաղումք զփորձ առնուլ կամեցեալ՝ ոտնառեալ կասեցան. և միայն Օլիվրը Կոլտսմիթ համեմատ նմին գտաւ միոքն ևեթ յիւրոց վաստակոց։ — Զեղերական քերթուածս առանձինն ջանիւ Ճոխացուցին Տայրը, Էքինսայտ, Արմսթրոն, Մէտսրն, Տէրուին, Հէյլի, որոց պարագլուխ համարի մեծահանճարն Բրն։ — Ընդ հակառակն սոցա զնսխնի պարերգսն և զնուագս նորոգեցին Հէնսթրն, Կրէյ, Հէմմընտ, Քոլինս, Պրուս, Պիթի, Փրրսի, ևն։ — Կլրվրը հորդեաց շաւիղ դիւցազնականին, յոր համբաւատենչ հանդիսացան Զէթթրրթրն և Մաքփէրսրն խմբագրիչ անհարազատ երգոցն Ոսիանու։ — Թատերականն արուեստ մեծաքայլ արշաւէր ջանիւք Քոլմէնի, Մրրֆի, Քրմպրրլէնտի և Հէրիտենի՝ որ հռչակաւոր եկաց և 'ի քաղաքական ճարտարախօսութեան։ — Ի պատմագրութեան հոյակապք հանդիսացան Հիում, Ռոպերթսրն և Կիպպրն. յետ

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

նոցա դասին Սմոլէթ, Ֆոքս, Մէքինթոշ, Լինկարտ, Հելլէմ, Կոտուին, Ֆէրկիսըն, Կիլիզ, Միթֆորտ և Ռոսքոյ։ — Ի քաղաքական Ճարտարխօսութեան անուանի գտան Գուլիէլմոս Փիթ՝ որդի առաջնոյն, Ֆոքս պատմաբանն, Եդմոնդ Պըրք։ — Էտէմ և Սմիթհ հիմն արկին նորոյ գիտութեան քաղաքական տնտեսութեան։ — Ռիտ խորամուխ եղև 'ի փորձառական հոգեբանութեան։ — Պրիսն յերփնազարդ և 'ի կորովահանճար տաղերգութիւնս հանդիսացաւ, Քաուփըր 'ի խիստ և 'ի խիզախ նկարագրական քերթուածս. Ուըրտսուըրթհ և Քոլրիճ՝ երգեցին զլիճն հիւսիսակողմանցն Անգլիոյ. Թոմաս Մուր զգաշնակաւոր և զՏրաշալի երգս իռլանտականս. Գէորգ Քրէպ զանկելանոցս, զբանտս, զկապելյոս և զմնքասխոյսս հրաշագէտ իմաստասիրութեամբ։ — Վիպասանութիւնք 'ի բաժին թողան ազգի կանանց, յորս քաջանուն հանդիսացան Տիկնայք Պըրնի, Զարլոթ Սմիթհ, Արպլի, Աննա Ռէտլիֆ, Լէտի Մորկէն, և այլք յոլովք։

Ի բանալ առաջիկայ ԺԹ դարուս գան 'ի հանդէս երկոքին իշխանք անգլիական աշխուժից, վիպասանն Ուոլթըր Սքոթ, և քերթողն Լորտ Պայրըն, երկոքին ևս աշխարհագրողք յԵւրոպա. առաջնոյն զՀնտ գնացին ամերիկացիքն Ուոշինկթըն Իրվին և Քուփըր, իռլանտացիքն Կրիֆիթհ և Պէնիմ, սկովտացին Ճոն Կէլթ, անգլիացիք Որատ Սմիթհ, Կրէթն, և այլք. և ևս յոլովք երկրորդին որպէս ցոփագոյնք և սկեպտականք։ — Թատերախաղք նուազ և նուաստ են յայսմ դարու. որպէս և նորին իսկ Պայրընին. իսկ յայլ ազգս քերթուածոց նշանաւորք են Սամուէլ Ռոճըրս, Լի Հընտ, Պէրրի Քորնուէլ, Ճէմս Հոգ, են. իսկ 'ի կանանց Մարիամ Հաուիթ, Երանուհի կամ Ֆէլիսիա Հէմանս, Լէթիսիա Լէնտըն, և այլք։ — Ի պատմականս չէք ոք զուգակշիռ Հիումի, Ռոպերթսընի և Կիպպընի. և իրաւաբան պատմութիւն Անգլիոյ տակաւին յրղձականացն է համարի։ — Ի Ճարտարախօսս ատենականս հռչակաւորք կացին Էրսքայն աշակերտեալն Մոնթէսքիէօի, Շէրիտին, Քէնինկ, Յկ. Մէքինթոշ, Լորտ Պրուկէմ և իռլանտացին Օ' Քոնէլ՝ որոց համբաւ երկոցուն աշխարհածանօթ է։ — Ի բեմականս Պիլպի, Հորսլի, Փրիսթլի, Ուէքֆիլտ, Փալի, Ուէթսըն, Զարլզս Սիմն, Հոլլ և Էտէմ Քլարք և այլք 'ի դասուէ երիցանուոյն և երիցապետացն Անգլիոյ։ — Իսկ առ մեջովք ժամանակաց անուանիք 'ի քերթողս են Թեննիսըն, Պրաուընին և Պէյլի. իսկ 'ի վիպասանից Տիքէնս և Թէքերի (1)։

Զարգիս Ուսողութիւն 'ի վերացեալն նուազ է յԱնգլիա. իսկ գործնականն կարի բարգաւաճ. Բնական մեկացութիւնք զարգացեալ են յոյժ յոյժ. առանձինն աշխարհագրութիւն և բնապատմութիւն, մանաւանդ արևելեան աշխարհաց. Իրաւագիտութիւն 'ի դադարման կայ, և Աստուածաբանութիւն անգլիացւոց ոչ սժանդակի 'ի լուսոյ նորանոր գիտութեանց. Իմաստասիրութիւն փորձառական յամենայնի վերադասի քան զՀայեցողականն. Գիտութիւնք վարչութեան պետութեանց, մանաւանդ քաղաքական տնտեսութիւն խնամով մշակի. Լեզուագիտութիւն՝ բաց յարևելեայցն, ոչ այնչափ մեծարի։ — Անգլիականն բարբառ Ճոխ է յամենայն ազգս ուսումնական և ժողովրդական գրենոյ. մանաւանդ որ Ներշնչանակքն անուանին համբարք բազմապատիկ և զանազան գիտութեանց. ընդ որս և յոլովագոյն ազգք օրագրոց և լրագրոց, որ 'ի 1846 էին 500, օրականք, շաբաթականք և ամսականք. յորոց 120 տպագրէին 'ի Լընտըն. 232 ընդ բովանդակ Անգլիա. 70 յԻռլանտա. 68 'ի Սկովտիա և 10 'ի Ուոլս. իսկ այժմ առաւել քան զ600 ազգս օրագրոց և լրագրոց հաշուէ Անգլիա։ — Իսկ 'ի Միացեալ պետութիւնս Ամերիկոյ բիւրաբեղուն ևս են օրըստօրական և պարբերական գրութիւնք. ըստ Ամերիկեան տումարին (American almanac) յընթացս միոյ տարւոյ առաւել քան զ100,000,000 թերթս քաղաքական օրագրոց սփռին յերեսս Երկրին. գրեա թէ ամենեքին 'ի բարբառ անգլիացի. սոցա ընթերցասիրութեանն երաշխաւորէ մեզ 'ի մտոյ և հրաշալի վիպասանութիւն Տիկնոջն Հ. Պիչըր Սթաու անուանեալն Հիւզն Քեռուոյն Թոմայ, որ յերևել անդ 'ի լոյս 500,000 օրինակք վաճառեցան յամիս երիս՝ միայն 'ի Միացեալ պետութիւնս անդ Ամերիկայ։

---

(1) Գիտեա զի գովութիւնք զմատենագրաց ըստ հարազատութեան բարբառոյն և ըստ կատարելութեան գպրութեան են, և ոչ եթէ ըստ ճշմարտութեան բանիցն 'ի պատմականս և յիմաստասիրականս, և ըստ անբծութեան բարոյականին և հաւատոց 'ի քերթողականս և 'ի հռետորականս։

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

ՑԱՆԿ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ Սահմանք քերականական բառից . 1
ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ Այբուբեն և հնչումն տառից . . 3
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ Կանոնք կարևորք 19

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԿԱՆՈՆՔ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆՔ

ԴԱՍ Ա. Յաղագս որոշեալ յօդիս the և հոլովանշանացս of, to, from 23
ԴԱՍ Բ. Յաղագս անորոշ յօդիցս a կամ an, some և any 30
ԴԱՍ Գ. Յաղագս վերջահոլով սեռականի . . . 36
ԴԱՍ Դ. Յաղագս յոքնական թուոյ անուանց . . 41
ԴԱՍ Ե. Յաղագս սեռից անուանց 47
ԴԱՍ Զ. Յաղագս ածական անուանց 52
ԴԱՍ Է. Յաղագս բաղդատական և գերադրական ածականաց 57
ԴԱՍ Ը. Յաղագս թուական ածականաց . . . 68
ԴԱՍ Թ. Յաղագս էական դերանուանց 75
ԴԱՍ Ժ. Յաղագս ստացական դերանուանց . . . 82
ԴԱՍ ԺԱ. Յաղագս յարաբերական և հարցական դերանուանց 88
ԴԱՍ ԺԲ. Յաղագս ցուցական դերանուանց . . . 96
ԴԱՍ ԺԳ. Յաղագս անորոշ դերանուանց 100
ԴԱՍ ԺԴ. Յաղագս օժանդակ բայից 106
ԴԱՍ ԺԵ. Յաղագս լծորդութեան կանոնաւոր բայից. 116

Յուցակ անկանոն բայից 124

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ ԺԶ. Յաղագս կրաւորական, անդրադարձ, փոխադարձ, դիմաղուրկ, պակասաւոր և անդէմ բայից 135
ԴԱՍ ԺԷ. Յաղագս ժխտական և հարցական բայից, և այլոց գիտելեաց 143
ԴԱՍ ԺԸ. Յաղագս նախադրութեանց 152
ԴԱՍ ԺԹ. Յաղագս մակբայից, շաղկապից և ձայնարկութեանց 159
ԴԱՍ Ի. Յաղագս զեղչման մասանց բանի . . . 166

Յաղագս տաղաչափութեան անգլիացւոց 172

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀՐԱՀԱՆԳՔ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆՔ

Ա ԿՐԹՈՒԹԻՒՆ. Առոգանութեան և Ուղղագրութեան . 181
Համառօտագրութիւնք անգլիական լեզուի 202
Բ ԿՐԹՈՒԹԻՒՆ. Լուծման և թարգմանութեան . . 205
Գ ԿՐԹՈՒԹԻՒՆ. Կազմութեան բառից և լեզուի . . 217
Դ ԿՐԹՈՒԹԻՒՆ. Գործածութեան բայից 239
Ե ԿՐԹՈՒԹԻՒՆ. Բայից և նախադրութեանց նոցին . 253
Զ ԿՐԹՈՒԹԻՒՆ. Գրութեան տոմսից և նամակաց . . 295
Է ԿՐԹՈՒԹԻՒՆ. Անգլիարէն զրուցատրութեան . 326-366

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

TABLE OF THE ARMENIAN ALPHABET

Priting		Italick		Name	Sounds
Ա	ա	Ա	ա, ա	*ipe* (pipe)	*a* (as in *part*).
Բ	բ	Բ	բ, բ	*pen*	*p* soft.
Գ	գ	Գ	գ, գ	*kim*	*k*, *q*.
Դ	դ	Դ	դ, դ	*tá*	*t* soft.
Ե	ե	Ե	ե, ե	*yetch*	*ye* (as in *yes*).
Զ	զ	Զ	զ, զ	*z á*	*z* or *s* between two vowels.
Է	է	Է	է, է	*é*	*e* (as in *met*).
Ը	ը	Ը	ը, ը	*yet*	*e* (as in *her*).
Թ	թ	Թ	թ, թ	*toe*	*t*.
Ժ	ժ	Ժ	ժ, ժ	*j* freneh	*s* or *z* (as in *pleasure*, *azure*.
Ի	ի	Ի	ի, ի	*iny*	*i* short (as *mint*).
Լ	լ	Լ	լ, լ	*lun* (lúnatic	*l*. (man *ch*.
Խ	խ	Խ	խ, խ	*ch* german	*kh*, like greeck χ, or ger-
Ծ	ծ	Ծ	ծ, ծ	*dza*	*dz*, as italian *z*.
Կ	կ	Կ	կ, կ	*ghien*	*g* hard (as *good*).
Հ	հ	Հ	հ, հ	*hoe*	*h*.
Ձ	ձ	Ձ	ձ, ձ	*tza*	*tz* soft. (risian *r*.
Ղ	ղ	Ղ	ղ, ղ	*ghad*	*gh* as new greeck γ, or pa-
Ճ	ճ	Ճ	ճ, ճ	*dgé*	*j*, *dg* (as in *judge*).
Մ	մ	Մ	մ, մ	*mien*	m.
Յ	յ	Յ	յ, յ	*he*	*h* soft in begining of words, like *y* in *boy* in the midst, and mute at the end.
Ն	ն	Ն	ն, ն	*noo*	*n*.
Շ	շ	Շ	շ, շ	*sha*	*sh*.
Ո	ո	Ո	ո, ո	*wo*	*wo* (as in *worthy*).

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Չ	չ	Չ	չ, չ	*cha*	*ch* (as in *Charles*).
Պ	պ	Պ	պ, պ	*bé*	*b*.
Ջ	ջ	Ջ	ջ, ջ	*ché*	*ch* (as in *cherish*).
Ռ	ռ	Ռ	ռ, ռ	*rá*	*r* hard.
Ս	ս	Ս	ս, ս	*sé*	*s*.
Վ	վ	Վ	վ, վ	*viev*	*v*.
Տ	տ	Տ	տ, տ	*dune*	*d*.
Ր	ր	Ր	ր, ր	*ré*	*r*.
Ց	ց	Ց	ց, ց	*tzo*	*tz*.
Ւ	ւ	Ւ	ւ, ւ	*hune*	*u* french, as *du*.
Փ	փ	Փ	փ, փ	*pure*	*p*.
Ք	ք	Ք	ք, ք	*ké*	*k*.
Օ	օ	Օ	օ, օ	*o*	*o*.
Ֆ	ֆ	Ֆ	ֆ, ֆ	*fé*	*f* or *ph*.

DIPHTHONGS

Աւ *av* or *aw*.

Եւ or և *yew*. is a coalition of two letters ե and ւ or եւ.

Ւ *u* french as *du*, *or u* English as *cube*.

Ու *oo*.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՅՈՒՅԱԿ ՏԱՌԻՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

ԲՈԼՈՐԳԻՐ		ՆՕՏՐԱԳԻՐ		ԱՆՈՒՆ	ՀՆՉՈՒՄՆ.
A	a	*A*	*a*	էյ	էյ, ի̊, ա, օ՝ 1.
B	b	*B*	*b*	պի	պ.
C	c	*C*	*c*	սի	ք, ս, (ղ)
D	d	*D*	*d*	դի	դ. (ձ)
E	e	*E*	*e*	ի	ի, է, ը.
F	f	*F*	*f*	էֆ	ֆ.
G	g	*G*	*g*	ճի	ճ, ի.
H	h	*H*	*h*	էյչ	հ.
I	i	*I*	*i*	այ	այ, ի, ը.
J	j	*J*	*j*	ճէյ	ճ.
K	k	*K*	*k*	քէյ	ք *կամ* գ.
L	l	*L*	*l*	էլ	լ.
M	m	*M*	*m*	էմ	մ.
N	n	*N*	*n*	էն	ն.
O	o	*O*	*o*	օ	օ՝, ո̊, օօ, ու, ը.
P	p	*P*	*p*	փի	փ.
Q	q	*Q*	*q*	քիու	գ *կամ* ք.
R	r	*R*	*r*	ար	ր, ը.
S	s	*S*	*s*	էս	ս, ղ. (ծ, ղ)
T	t	*T*	*t*	թի	թ *կամ* տ. (լ, ղ)
U	u	*U*	*u*	իու	իու, ի̊, ը՝, ու.
V	v	*V*	*v*	վի	վ.
W	w	*W*	*w*	դաբլ իու	ու.
X	x	*X*	*x*	էքս	քս *կամ* կս. (քղ, ղ)
Y	y	*Y*	*y*	ուայ	ե.
Z	z	*Z*	*z*	զէդ	զ. (ծ)

ԿՐԿՆԱՏԱՌՈՒՔ.

ch	սի–էյչ.	չ. (ղ, ք)
gh	ճի–էյչ.	*անձայն*. (ֆ)
ph	փի–էյչ.	ֆ. (վ)
sh	էս–էյչ.	շ.
th	թի–էյչ.	թհի, տհի (թ)
ll	դաբլ էլ.	ղլ.

ԵՐԿԲԱՐԲԱՌՔ.

ae ի, ai էյ, au, aw օ՝ (ա).

ea ի (է, էյ, ը) ee ի, ei էյ, ի, eo ի, ը (է), ew, eu իու (ու), ey էյ, ի.

ia ի, ie ի, այ, io, ը.

oa օ՝, ի, է (ու), oi, oy, այ, oo ու (ը), ou օու (ը), ու, օ՝, ow ո՝, օու.

ua, ու, ue ուէ, ui ուի, uo ուօ, uy ուի (ի, այ).

---

1 Տառս *a* հնչի է՝ի *յանգեալսն age անշեշտ. զոր օրինակ* village, language, usage. *հնչեա* վիլիճ, լանկուիճ, իուզիճ։

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Digitized by
INTERNET ARCHIVE

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

ՀԱՄԱՌՕՏ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՈՑ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ՍԱՀՄԱՆՔ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԻՑ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ է արուեստ ուղիղ խօսելոյ և գրելոյ։

Յօդն է բառ ինչ կամ մասնիկ եդեալ 'ի վերայ անուանց՝ առ 'ի ճշգիւ սահմանել զնշանակութիւն նոցին։

Անուանն կամ Գոյականն զանձինս կամ զկրս նշանակէ։

Ածականն զորպիսութիւն անձին կամ իրին ցուցանէ։

Սէռն է յարաբերութիւն բառին առ արուն կամ առ էգն։ Երեք սեռք գոն յանգլիականին՝ արական, իգական և չէզոք 1։

Թիւք անուանց երկու են, Եղական որ զմի անձն կամ զկրս ցուցանէ. և Յոգնական որ զբազումս 'ի միասին։

Հոլովք երեք են. սեռական, տրական և բացառական 2։

Թուական անուանք ցուցանեն զչափ կամ զկարգ իրաց։

---

1 Չէզոքն վարի 'ի խօսել անդ զկրաց և զանասնոց։

2 Ի հնագոյն լեզուս հոլովք բառից 'ի ձեռն յանգից որոշին։ Յանգլիականին վերաբերութիւն բառից ընդ միմեանս՝ կամ 'ի շարագասութենէ նոցին 'ի յայտ գայ, կամ յաճախագոյնս 'ի ձեռն նախադրաց. բաց 'ի վերջահոլով սեռականէն զորմէ յիւրում տեղւոջն ասասցուք։

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Բացարձակ Բառանոց ասին որ պարզապէս զԹիւս նշանակեն։

Դասական Բառանոց զշարս կամ զկարգ իրաց ցուցանեն։

Կրկնական Բառանոց Թէ քանիցս նոյն Թիւ իցէ բաղմապատկեալ։

Ածականն դրական ասի՝ յորժամ պարզապէս զորպիսութիւն իրին ցուցանիցէ. Բաղդատական՝ յորժամ զուգակշռութեամբ ընդ այլում զառաւելութիւն կամ զնուազութիւն ցուցանիցէ. իսկ գերադրական՝ եԹէ 'ի մէջ այլոց զանհամեմատն նշանակիցէ առաւելութիւն, կամ զայլովք ա՞ռնեքումքք դերազանցութիւն։

Գերադրականն մարԹի լինել Բացարձակ կամ հանգիպական։ Բացարձակն է որ ըստ ինքեան իցէ 'ի գերադոյն աստիճանի, առանց ինչ զուգակշռութեան ընդ այլոց. իսկ հանդիպականն որ բաղդատութեամբ ընդ այլոց համարի 'ի վերադոյն աստիճանի։

Դերանունն է բառ ինչ որ դնի փոխանակ անուան՝ առ 'ի չկրկնել զնոյն յաճախ։

Էական դերանունքն ուղղապէս զանձինս նշանակեն։

Սեպական զատացումն կամ զսեպականութիւն իրին ցուցանեն։

Յուցական՝ զանձն կամ զիրն զորմէ բանքն են։

Յարաբերական՝ զանուն ինչ կամ զդերանուն, զորոց յիշատակ լեալ իցէ յառաջագոյն։

Անորոշ յընդհանուրս և անորոշակի ցուցանեն զիրս։

Բայն է բառ ինչ ցուցիչ առնելութեան կամ լինելութեան։

Դերբայ կոչի բառն որ հաղորդ է բնութեան բայի և ածականի։

Նախադրութիւնք յայտ առնեն զյարաբերութիւն իրաց ընդ միմեանս։

Մակբայն է բառ ճշգող նշանակութեան անուանց, բայից, նա և այլոց մակբայից։

Շաղկապն վարի 'ի կցորդել ընդ միմեանս զմասունս բանի։

Զայնարկութիւնք զկիրս և զշարժուածս հոգւոյ բարացուցանեն։

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅԲՈՒԲԵՆ ԵՒ ՀՆԶՈՒՄՆ ՏԱՌԻՑ

Այբուբեն անգլիական լեզուի ունի տառս քսանև-վեց. որք են.

a, b, c, d, e, f, g, h, i, j, k, l, m, n, o, p, q, r, s, t, u, v, w, x, y, z.

Որոշին տառքս 'ի ձայնաւորս և 'ի բաղաձայնս.

Ձայնաւորքն են a, e, i, o, u.

Բաղաձայնք են b, c, d, f, g, h, j, k, l, m, n, p, q, r, s, t, v, x, z.

W *և* y *'ի վերջս վանկի ձայնաւորք են, իսկ 'ի սկիզբն բաղաձայնք:*

Ձայնաւոր տառք զուգեալք 'ի միասին գործեն զերկբարբառս ae, ai, au, aw, ay; ea, ee, ei, eo, eu, ew, ey; ia, ie, io; oa, oe, œ, oi, oo, ou, ow, oy; ua, ue, ui uo *և* uy. *և զեռաբարբառս* eau, eou; ieu, iew, iou.

ՅՈՒՅԱԿ ՁԱՅՆԱՒՈՐ ՏԱՌԻՑ	ՀՊԱՒՈՐԱԳՈՑՆ ՀՆԶՈՒՄՆ ՀԱՅԿԱԿԱՆ
A. 1 Hate, 2 hat, 3 part, 4 hall.	0 Հէյթ, հէթ, փարթ, հՕլ.
E. 1 Mete, 2 met, 3 her.	Միթ, մէթ, հըր.
I. 1 Fine, 2 fin, 3 stir.	Ֆայն, ֆին, սթըր.
O. 1 Note, 2 not, 3 nor, 4 prove, 5 ton.	0 ՆՕթ, նօթ, նօօր, փրուվ, թըն.
U. 1 Cube, 2 cub, 3 burn, 4 bush.	0 Քիուպ, քըպ, պըրն, պուշ.

Ձայս տախտակ ստէպ յեղյեղեսցէ աշակերտն ընդ վարժապետին, որպէս զի քաջ տպաւորեսցի 'ի միտս նորա և 'ի լսելիս հնչումն ձայնիցն, զորոց զանվլթալ արտասանութիւն

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

չէ հնար մերովք տառիւքս անվրէպ բացայայտել. և չաւ ևս է ուսանել զնոյն 'ի կենդանի բարբառոյ վարժապետի, և եթէ մարթ է 'ի նոյն իսկ յազգէ:

ՑԱՂԱԳՍ ՁԱՅՆԱՒՈՐ ՏԱՌԻՑ

A. A հնչի *a* է կամ նուրբ է որպէս 'ի բառիս hate[1], այսինքն գրեա թէ յամենայն միավանկ բառս որ աւարտին 'ի *e* անձայն՝ հանդերձ նախընթաց միակ բաղաձայնիւ. դարձեալ 'ի բառս բազմավանկս նոյնօրինակ յանգեալս, և շեշտեալս 'ի վերջին վանկն. զոր օրինակ. fate[1], debate[1 1].

A հնչի *a* է կամ սուղ է 'ի միավանկ բառս յորս զհետ իւր ունիցի բաղաձայն և եթ, և 'ի բառս յանգեալս *able*, *acle*. զոր օրինակ flat[2], capable[2 2], obstacle[2 2].

A հնչի որպէս *a* ա բաց՝ 'ի յոլով բառս յորս հետևեալ ունի *lm* և *lf* (յայնժամ տառդ *l* ոչ հնչի). դարձեալ և 'ի բառս յորս զհետ իւր գայցէ *r*. զոր օրինակ calm[3], half[3], star[3], part[3], darksome[3 5], largest[3 2].

A հնչի *a* օ՝ կամ օ՝ երկար 'ի բաղում բառս յորս զկնի իւր գայցէ տառս *l* և այլ ինն բաղաձայն, բաց 'ի տառիցս *m* կամ *f*. զոր օրինակ. fall[4], scald[4], walk[4], all[4], wall[4], called[4 0], Gibraltar[2 4], bald[4].

E. E երկար ունի գրեա թէ միշտ զձայնս *e* է 'ի միավանկս. դարձեալ և 'ի բազմավանկս, և յորս զհետ իւր գայցէ բաղաձայն մի, հանդերձ միով անձայն *e* իւ. և ևս 'ի վերջ միավանկ բառից, յորս չիցէ այլ ձայնաւոր. օրինակ ինն. scene[1], replete[1], me[1].

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Ե սուղ ունի գրեա թէ միշտ զձայնս e է յորժամ ի ցեղ ընդ մէջ երկուց բաղաձայնից 'ի նմին իսկ վանկի. զոր օրինակ.
2 2
red, berry.

Ե 'ի յանգս er հնչի միշտ e ը. որպէս 'ի բառիս her. զոր
3
օրինակ spider, writer, reader: սփիւռը, գրիչը, ընթերցը:
1 3 0 1 3 3

Ի բառս there, where և յածանցս նոցին հնչի գոգցեա
1
որպէս a է.

Ե 'ի վերջս բառից առհասարակ անձայն է. բաց յոմանց
1
ծագելոց յերիցագոյն լեզուաց, յորս հնչի e է. զոր օրինակ
22 2 1 1 1
catastrophe, Hebe.

Ե 'ի յանգեալսն en սղի. զոր օրինակ riven, seven.
2 2

Ե սղի և 'ի յանգեալսն ed, յորժամ չունիցին յառաջոյ t կամ d. իսկ եթէ գուցեն այս տառք t կամ d, հնչի
2 1 0 2 030 2 0 2 2 2 2
e է, զոր օրինակ lined, answered, filled; ended, added,
2 1 2
proceeded.

I. I հնչի i այ 'ի միավանկս, և 'ի վերջ բազմավանկ բառից շեշտելոց 'ի վերջին վանկն, յորժամ զհետ իւր ունի
1 1 2
զմի բաղաձայն և զմի անձայն e. զոր օրինակ pine, tribe, di-
1 1
vine, title.

I ունի զհնչումն i է գրեա թէ յամենայն բառս յանգեալս 'ի ice և ive, որք ոչ 'ի վերջին վանկն շեշտիցին. և և 'ի բառս յորս զհետ իւր եկեսցէ տառ բաղաձայն 'ի նմին
2 2 2 2 2
իսկ վանկի, բաց 'ի տառէս r. զոր օրինակ practice, incentive,
2
riddle.

I հնչի i ը 'ի յոլովագոյն բառս յորս զհետ իւր գայ-

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ցէ տառս r ընդ այլ բաղաձայնի 'ի վերջ վանկի. զոր օրինակ.
3 3 3 3 3 3
stir, bird, first, dirt, shirt, squirt և այլն:

Զարտուղին 'ի կանոնէս միայն բառքս mirth, birth,
2
girt, gird, girl, skirt, whirl և firm, յորս i հնչի որպէս e է:

1
O. O հնչի o երկար իբր ō կամ oo 'ի վախճան բառից
1
յանգելոց 'ի բաղաձայն ինչ և յանձայն e. զոր օրինակ home,
1 2 2 1
stone, anecdote. կամ 'ի կազմելն զվանկ շեշտիւ, զոր օրինակ
2 1 1 2 1 1 1 1 1 1
compose, spoken, suppose, so, no, going, story, poetry,
1
glory. դարձեալ 'ի բառս յորս զհետ շեշտեալ o ի դուցեն
1 1 1 1 1
ld 'ի նմին վանկի. զոր օրինակ told, old, cold, gold, soldier
1 1
(ռՕՂՃԸՐ), behold.

2 0
O ունի զձայնս o սուղ o 'ի յոլովագոյն բառս յորս
զհետ իւր կայցէ բաղաձայն ինչ աւարտիչ վանկին. զոր օրի-
2 2 3
նակ blot, potter.

3
O հնչի միշտ իբր o երկար և նուրբ կամ իբր կրկնակ
oo յորժամ զկնի իւր ունիցի r աւարտիչ վանկին, եթէ
3 3 3 3 3
վանկն այն ունիցի շեշտ. զոր օրինակ for, nor, corner, for-
3 3 1 3 2
mer, fortune, morning.

4 1 4
O հնչի որպէս o ռ 'ի սակաւ բառս եթէ. որք են beho-
4 4 4 4
ve, move, prove և յածանցս նոցա. որպէս և 'ի lose, do,
2 4 4 4 4 0 4
ado, who, whom, womb, Rome.

5
O հնչի զերթ o ը 'ի յոլով բառս, յորս զհետ իւր գու-

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

2 5 5 5
ցեն m, me կամ ve. զոր օրինակ kingdom, come, love.
կամ 'ի յանգս բառից՝ յորս o ջնջէ շեշտեալ. զոր օրինակ
3 5 1 5
second, razor.

Ի բաղում բառս յորս յետադաս լինին o տառիս r հան-
5 3
դերձ այլ ինն բաղաձայնիւ, հնչի նոյնպէս o կամ u. զոր
5 2 5 3 2 3
օրինակ worst, stubborn. հնչեա wurst, stubburn.

O անձայն է և սղի 'ի յանգեալսն on յորժամ չունիցի
2 0 2 0 2 0
շեշտ 'ի վերայ. զոր օրինակ lesson, mutton, button, և այլն:

U. U 'ի բառս յորս զհետ իւր գոյ բաղաձայն մի հան-
1
դերձ անձայն e իւ, կամ վերջինս եթէ, հնչէ u ֆ յորժամ
1 2 1 2 2 1
չունիցի յառաջոյ զտառդ r. lute, illume, residue. իսկ եթէ
4
գուցէ r նախընթաց, յայնժամ u հնչի o ռ. զոր օրինակ rue
4 4
հնչի ro այսինքն ռ, true հնչի tro թրռ:

2
U հնչի u ը 'ի բառս յորս զկնի իւր ունիցի բաղաձայն
տառ աւարտիչ վանկին, բաց 'ի տառից l, r. զոր օրինակ
2 2 2 3
stud, cub, butter.

3
U հնչի u է յայնոսիկ բառս յորս նախընթաց դնի տա-
3 3
ռիս r, որ չունիցի զհետ իւր անձայն e. զոր օրինակ turn, fur.

4
U հնչի u ռ 'ի սակաւ բառս, մանաւանդ յորս զկնի
4 1 4 4
իւր եդեալ կան l կամ ll. զոր օրինակ bull, spiteful, full,
4 4 4 4 4 25
pull, push, bush, puss, cushion, sugar շաքար:

1
Y. Y ունի զձայն i այ 'ի միավանկ բառս յորս նախ-
ընթաց ունիցի զբաղաձայն տառ, և 'ի վերջ ամենայն բա-

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ռից՝ երբ յինքն յանգիցի շեշտ բառին, և գալիցեալ յամենայն բայս յորս նախընթաց գոտանիցի տառս f. զոր օրինակ

1 2 1 2 2 1
dry, apply, gratify. հնչեա dri, appli, gratifi.

2
Y վերջատառ ունի միշտ զձայն i ի յամենայն բառս բազմավանկս, յորս ինքն չիցէ շեշտեալ. բայց 'ի վանկէս fy 'ի

4 2 2 2
վերջս բայից. զոր օրինակ trúly, mérry հնչեա truli, merri.

W. W, յորժամ վարիցի որպէս զձայնաւոր տառ, ընդ այլսում յառաջընթաց ձայնաւորի գործէ միշտ երկբարբառ։

ՅԱՂԱԳՍ ԵՐԿԲԱՐԲԱՌ ՏԱՌԻՑ

AE որ 'ի բառս ինչ առեալս յերիցագունից լեզուաց միայն

1 12
վարի. հնչի e ի. զոր օրինակ paean հնչի pean.

1
Ai և ay հնչին a էյ. զոր օրինակ nail, stay.

4
Au և aw գրեա թէ միշտ հնչին a օ՝. զոր օրինակ pause, awful.

Au թէ զհետ իւր ունիցի զտառս n ընդ այլ բաղաձայնի՝

3
հնչէ a ա. զոր օրինակ taunt, flaunt.

1
Ea ընդհանրապէս հնչի e ի. և զայս հնչումն պահէ յորժամ զհետ իւր եկեսցէ մին 'ի տառիցս l, m, n, p, կամ 'ի վերջ բառին իցէ. այլ յորժամ ունիցի զկնի իւր զտառս

2
d, f, st, t կամ th, յայնժամ իբր 'ի բազումս հնչի e է. օրինակք. meal, beam, wean, cheap. head, deaf, breast, threat, death.

1
Ի բառս ինչ 'ի գալ զկնի k կամ r տառից՝ ea հնչի a էյ, զոր օրինակ break, bear.

3
Ի գալ զկնի նորա տառիս r հնչի երբեմն e ը զոր օրինակ earth, learn.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Ee հնչի միշտ e 1 ի. զոր օրինակ green.

Ei հնչի երբեմն a 1 էյ. զոր օրինակ vein, rein, heir, eight, their, veil. Այլ առաւելապէս հնչի e 1 ի. և այսպէս հնչի միշտ յորժամ զհետ իւր ունիցի t կամ ve. զոր օրինակ de-
12 2 12
ceit, perceive.

Eo հնչի e 1 ի. որպէս people. և երբեմն e 2 է. որպէս leopard. 0

Eo յորժամ ելցէ շեշտեալ հնչի u 2 0 ը. զոր օրինակ dún-
2 2 2 2
geon, lúncheon, súrgeon, stúrgeon. — Իսկ 'ի բառս pí-
2 2
geon, widgeon, scútcheon, երկբարբառդ eo հնչի ի:

Eu և ew հնչին u 1 իու. զոր օրինակ eulogy, new. հնչեա
1 2 2 1
ulogi, nu. եթէ նախընթաց ունիցին զտառդ r, ew հնչի
4 4
որպէս o ու. զոր օրինակ strew, հնչեա stro.

Ey յորժամ ընդ շեշտիւ ելցէ հնչի a 1 էյ. եթէ առանց
2 2 2 2 3
շեշտի i ի. զոր օրինակ survéy, convéy; válley, bárley.

Ia սովորաբար միայն 'ի վերջս բառից է երկբարբառ, և
2
հնչի յայնժամ i ի յայլևայլ ձայնս a ին խառնելով. զոր
222 2 2 2 21
օրինակ filial, bílliards պիլիյըրդս, expiate.

Ի բառս marriage, carriage, parliament և miniature
2
չհնչի a տառն երկբարբառին այլ միայն i ի: Բառս diamond
հնչի դայէմընդ:

Ie հնչի սովորաբար e 1 ի. այլ 'ի միավանկս եթէ զհետ իւր

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ջունիցի տառ բաղաձայն հնչի i [1] այ. զոր օրինակ grief, die. հնչեա greff [1]. di [1].

Io յաւարտ բառից հնչի u [2] ը եթէ ունիցի զկնի իւր զտառս n. զոր օրինակ nation [1], passion [2].

Oa հնչի o [1] օ՛. զոր օրինակ road, goat.

OE 'ի բառս ինչ փոխանցեալս ի հին լեզուաց, մերթ հնչի e [1] ի և մերթ e [2] է:

Oe ընդհանրապէս հնչի o [1] օ՛ 'ի բառս foe, throe, hoe, bilboes, sloe, toe: Ի canoe և shoe հնչի o [4] ոու.

Oi և oy հնչին ընդհանրապէս որպէս oi [22] օյ, զոր օրինակ boil, joint, toy.

Oo հնչի որպէս o [4] ոու. զոր օրինակ doom, boom, moon, soon. — Ի բառս foot, good, hood, և յածանցս ձևացեալս վերջադրաւս hood, որպէս և 'ի բառս stood, wood և wool, երկբարբառդ oo հնչի u [4] ոու. — Ի բառս blood և flood հնչի որպէս u [2] ը. — Ի բառս door և floor որպէս o [1] օ՛ 'ի բերան անդգլխացւոց, այլ իռլանդացիք հնչեն ըստ կանոնի o [4] ոու:

Ou հնչի սովորաբար որպէս ao [44] աո ոու. զոր օրինակ. bound, round, bough. — Երբեմն մանաւանդ 'ի վերջաւորութիւնս our և ous հնչին u [2] ը զոր օրինակ couple, courage [1] +ըրէյ՛. lábour [2], callous [4]. — Ի բառս ինչ հնչի որպէս o [4] ոու. զոր օրինակ

---

1 Ի բառս friend և յածանցս նորա ie հնչի e [2] է.

Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

wound, youth. — Յառաջոյ տառիցս r և l երբեմն հնչէ o ՝. զոր օրինակ court, four, soul, mould. — Յօժանդակս would, could, should հնչի որպէս u ··. — Ի վանկս aught և ought հնչի o ՝ զոր օրինակ taught, brought.

Ow հնչի սովորաբար որպէս o ՝. զոր օրինակ glow, snow. — Ի յոլով բառս հնչի որպէս ao ··. զոր օրինակ brow, endow.

Ua հնչի որպէս w կամ o ·· յայլ և այլ ձայնս տառիս a. զոր օրինակ ántiquate, ántiquary, assuáge, équal, lánguage և այլն. հնչեա ենիի··էյ, ենիի··էրի, է··ս··էյճ, ի··էլ, լենի··իճ.

U հնչումն յապաւի երբեմն 'ի ձայնիս ua յորժամ գուցէ նախընթաց տառդ g խիստ այսինքն ն. զոր օրինակ guardian, guarantee ··ճենն, ··էենի:

Ue հնչի w յարեալ յայլ և այլ ձայնս տառիս e. զոր օրինակ conquest ··ն··էսի:

Ի բառս ինչ յեա տառիս g հնչելոյ ն չհնչի տառս u. զոր օրինակ guest, guess. — Ի յանդս զինի տառիցս g և q երկբարբառդ ue ոչ հնչի. (բայց միայն 'ի բառս ague) զոր օրինակ tongue, oblique.

Ui ընդհանրապէս հնչի որպէս w յարեալ յայլ և այլ ձայնս i ի. զոր օրինակ anguish, cuirass: — Ի բառս ինչ յորս յառաջեացէ g խիստ ն, u տառ երկբարբառիս ոչ հնչի. զոր օրինակ guide, guile, guilt. — Ի բառս bruise, fruit, juice, pursuit, sluice և suit, տառս i ոչ հնչի. վասն որոյ բառքս

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

հնչելի են որպէս թէ գրեալ էր broz, frot, juce, pursut, sluce և sut. այս ինքն պրոզ, ֆրոտ, ճիուս, բըրսիուտ, սլիուս և սիուտ :

Uo ունի զձայնս ѡ ի յարելոյ ընդ այլ և այլ ձայնս o ի. զոր օրինակ quodlibet, aliquot. քուոդլիպէթ, էլիքուոտ :

Uy 'ի վերջաւորութիւնս guy հնչի որպէս ѡi. զոր օրինակ obloquy, օպլուքուի. Իսկ 'ի վերջաւորութիւնս guy հնչի i. զոր օրինակ plaguy թլէյգի. — Բառս buy հնչի պայ :

ՅԱՂԱԳՍ ԵՌԱԲԱՐԲԱՌ ՏԱՌԻՑ

Eau եռաբարբառ՝ որ առաւել'ի վերանկական բառս վարի քան 'ի բնիկ յանգլիականս, հնչի o ́. զոր օրինակ beau, portmanteau. — Հնչի որպէս u իուս 'ի բառս beauty, և յածանցս նորա beautiful.

Eou հնչի որպէս iu իը. զոր օրինակ niveous. հնչեա niviuss նիվիը :

Ieu և iew հնչի u իուս. զոր օրինակ purlieu, adieu, review. հնչեա purlu, adu, revu.

Iou հնչի iu իը զոր օրինակ glorious, հնչեա glorius. — Յետ ձայնահան բաղաձայնի տառս i խաւիանի. զոր օրինակ precious հնչեա փրեշը :

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՅԱՂԱԳՍ ԲԱՂԱՁԱՅՆ ՏԱՌԻՑ

B, հնչի պ։ — Եթէ յետադաս ունիցի զ *t* կամ նախադաս զ *m*, 'ի նմին վանկի, ոչ հնչի. զոր օրինակ debt, tomb պէր, Ռո�։

C, հնչի ք առաջի ձայնաւորացս *a*, *o*, *u*, և 'ի վերջ վանկի. իսկ առաջի տառիցս *e*, *i*, և *y* հնչի ս. զոր օրինակ can, cone; cell, circle, cycle. քան, քոն, սէլ, սէրքլ, սայքլ։

Եթէ *c* տառիս յետադաս լիցին *ea*, *eous*, *ia*, *ious*, և նախադաս վանկն ի չէ շեշտեալ, յայնժամ *c* հնչի շ. զոր օրինակ ócean, grécian, testáceous, grácious. հնչեալ են օշան, ներշան, Ռեսիշեաս, ներեյշաս։

Ch հնչի միշտ չ. զոր օրինակ church չարչ. — Ի բառս յորս նախադաս գտանիցին *l* կամ *n*, և որք 'ի բուն փրանկականէն առեալք են՝ հնչի շ. զոր օրինակ filch, tench, chaise. ֆիլշ, Ռենշ, շեյզ։

Ch հնչի սովորաբար որպէս զտառս *k* կամ գ, ք 'ի բառս առեալս 'ի հին լեզուաց, զոր օրինակ ánarchy, árchitecture, հնչեա ենարքի, արքիթեքչիուր։

D, հնչի թ։ — Ի բառս educátion, grándeur, guárdian, sóldier և vérdure հնչի ճ. ուստի հնչեալ են բառքդ եճքիուշէն, ներենճար, կուրճիեն, սուլճար ի վերճիուր։ — Յանկատարն և յանցեալ բայից յետ խիստ բաղաձայնի հնչի Ռ. (բայց եթէ տառն խիստ լցէ *t* հնչի յայնժամ թ). զոր օրինակ sháped, stripped, հնչեալ են շեյփՌ, սՌիփՌ։ — Տառս *d* անձայն է 'ի բառիս handkerchief հէնքերչիֆ, և յառաջնում վանկի բառիս wednesday ուենզթի։

F, հնչի ֆ. այլ 'ի յօդս of հնչի վ. իսկ 'ի բառս յածանցեալս նոցին նախդրիւ՝ պահէ զբնիկ հնչումն. զոր օրինակ thereof թհեյրօֆ.

G, հնչի կ առաջի տառիցս *a*, *o*, *u*, առաջի բաղաձայն տառից, և 'ի վախճան վանկից. զոր օրինակ galley, gone, gull. կելլի, կոն, կըլ. — Առաջի ձայնաւորացս *e*, *i*, *y*, 'ի բառս բնիկ լատինս և փրանկականս, հնչի սովորաբար ճ. զոր օրինակ génius, ginger, gyre ճինիյս, ճինճր, ճայր։ —

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Իսկ 'ի սաքսոն բառս հնչի ի. զոր օրինակ get, gift ԻԷՐ, ԻՒՓԸ։

Gh յետադաս ունելով զ *t* 'ի վերջ վանկից ոչ հնչի, բայց 'ի բառէս draught յորում հնչի որպէս ՓԹ, որպէս երբեմն և 'ի վերջ վանկից. այլ առ հասարակ անձայն է. զոր օրինակ caught, drought, bought, rought, neigh, հնչելի են. ԹՕՐԸ, ԹՐՕՐԸ, ԹՕՐԸ, ՌՕՐԸ, ՆԷՅ.

Եթէ զհետ *g* տառիս գոյ *m* կամ *n* 'ի նմին վանկի, *g* ն ոչ հնչի. զոր օրինակ phlegm, gnash, resign, հնչեա ՓԼԷՄ, ՆԷՇ, ՌԻԶՅԻՆ։ — *G* տառ անձայն է 'ի բառիս seraglio հնչեա ՍԻՐԷԼԻՕ.

Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ Թ.

ՅԱՂԱԳՍ ԷԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ.

Էական գերանուանք առ անգլեացիս են այսոքիկ I, Thou 1, He էս, դու, նա. և վերջինս այս ըստ սեռի գիմացն՝ լինի արական he, իգական she, չեզոք it. Հոլովին սոքա 'ի ձեռն հոլովանիշ նախդրաց of, to, from. զոր օրինակ

ԱՌԱՋԻՆ ԴԻՄՔ. I էս.

Եզակի.			*Յոգնակի.*		
Ո.		I, էս.	Ո.		we, մեք.
Ս.	of	me, իմ.	Ս.	of	us, մեր.
Տ.	to	me, ինձ.	Տ.	to	us, մեզ.
Հ.		me, ինձ.	Հ.		us, զմեզ.
Բ.	from	me, յինէն.	Բ.	from	us, 'ի մէնջ.

ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄՔ. thou դու.

Եզակի.			*Յոգնակի.*		
Ո.		thou, դու.	Ո.		ye, you, դուք.
Ս.	of	thee, քո.	Ս.	of	you, ձեր.
Տ.	to	thee, քեզ.	Տ.	to	you, you, ձեզ.
Հ.		thee, զքեզ.	Հ.		you, զձեզ.
Բ.	from	thee, 'ի քէն.	Բ.	from	you, 'ի ձէնջ.

---

1 Ի զրոյցս և 'ի բանս ընտանեկանս չվարի եզականն երկրորդի դիմաց, այլ միշտ յոգնականն :

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԵՐՐՈՐԴ ԴԷՄՔ. he, she, it նա

արական սեռի, he

Եզակի.			Յոքնակի.		
Ո.		he, նա կամ ինքն.	Ո.		they, նոքա.
Ս.	of	him, նորա.	Ս.	of	them, նոցա.
Տ.	to	him, նմա.	Տ.	to	them, նոցա.
Հ.		him, զնա,	Հ.		them, զնոսա.
Բ.	from	him, 'ի նմանէ.	Բ.	from	them, 'ի նոցանէ.

իգական սեռի, she

Եզակի.			Յոքնակի.
Ո.		she, նա ևն.	
Ս.	of	her,	Յոգնականն նոյն է ընդ
Տ.	to	her,	յոքնականի վերոյգրեալ
Հ.		her,	դերանուան he.
Բ.	from	her,	

չէզոք սեռի, it

Եզակի.			Յոքնակի.
Ո.		it, նա, այն, ևն.	
Ս.	of	it,	Յոգնականն նոյն է ընդ
Տ.	to	it,	արականին.
Հ.		it,	
Բ.	from	it,	

Վերջին չէզոքականդ it վարի զանշնչից, կամ զկենդանեաց՝ որոց սեռ անծանօթ ի՝ցէ. զոր օրինակ Ահաւասիկ մատեան մի գեղեցիկ, ընթերցիր զայդ, Here is a good book, read

Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

it. Ահաւասիկ ԹԻԹԵՌՆ մի, հայեաց ընդ այն, There is a butterfly, look at it.

It վարի երբեմն և 'ի խօսելն զմանկան տղայոյ. զոր օրինակ Մի զարթուցանէր զմանուկդ, զի ծանրաքնեալ է, Don't awake the child, it is fast asleep.

Յորժամ անշունչ իրք և անասունք անձնաւորեալ վարիցին՝ այս ինքն 'ի ձև հռետորական մարդկային մատուցին նոցա դէմք և բնութիւն, յայնժամ ըստ արական կամ իգական դիմաց որ մատուցանի նոցա՝ դնելի է *he* կամ *she*. և ըստ այսմ արականք են արեգակն, ծամանակ, մահ, քուն, սէր, ևն, և իգականք լուսին, երկիր, երգ, եկեղեցի, և յաճախագոյն ևս աշխարհք և առաքինութիւնք:

Ի խօսելն զնաւուց պարտ է վարել միշտ զիգական դերանունդ *she*. զոր օրինակ Ի նաւահանդիսին կարի փաքընիայ է նա, *She* is the best sailer in the fleet.

Են և էական դերանուանք բաղադրեալք. որպիսի են, myself ես ինքն, պիս, thyself դու ինքն, պէպ, himself նա ինքն, պինքն (*ար*), herself նա ինքն, պինքն (*իգ*), itself նա ինքն, պինքն (*չէզ*). ourselves մեք ինքնին, պմեպ, yourselves [1] դուք ինքնին, պյեպ, themselves նոքա ինքնին, պինքեանս, *վասն երկոց ևս սեռից*: Բաղադրեալքս հոլովին ըստ պարզ դերանուանց 'ի ձեռն նախադրեցս *of*, *to*, *from*.

Առ 'ի տալ և ևս զօրութիւն բանին, *ասի* my own self, thy own self. *զոր օրինակ* Ես ինքնին արարի պայդ, I did it my own self.

Ինքն, պինքն, պանչն, պանչինս, *են ասի յանգլիականին* one's self, himself, herself, itself, themselves. *զոր օրինակ* Չէ պարտ մարդոյ տալ պանչն յանհեդեդ ինչ կիրս, One ought not to abandon one's self to an extravagant passion [2]. Զնչինօք պիօանս, He amuses himself with trifles. *այս ինքն պուսարճացուցանէ պանչն, պինքն:*

Դերանուանք ուղղականք դնին յառաջ քան զբայս. հայցականք դնին միշտ զկնի բային. և տրականն միշտ զկնի հայ-

---

1 Եթէ առ մի ոք իցեն բանքն՝ *ասի* yourself դու ինքն:
2 One's self *ասի խօսելով յընդհանուր միտս:*

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ցականին. զոր օրինակ Ես ասացի քեզ պայտ. I told it you. Իսկ եթէ բայն ունիցի զհետ իւր նախադրութիւն ինչ, որպէս to lift *up* բառնալ, to give *over* 'ի բաց թողուլ, ևն, յայնժամ հայցական դերանունն դնի 'ի մէջ բային և նախադրութեանն. զոր օրինակ Բարձ պայտ եթէ կարէս, Lift *it* up, if you can. Բժիշկք լքին զնա, The physicians have given *him* over.

Եթէ զկնի բային գուցեն դնելի դերանուն մի և անուն, եթէ դերանունն աննախդիր տրական իցէ առանց to ի, յայնժամ յառաջէ քան զանունն. զոր օրինակ Տուր նմա գրիչ մի, Give *him* a pen. Իսկ եթէ դերանունն ունիցի զնախդիրս to կամ զայլ նախդիր, յայնժամ սովորաբար յետադաս դասանի. զոր օրինակ Դու հաղորդս արարեր զնա քումդ հոգ, You have imparted your mind *to him*.

Ես եմ, դու ես, նա է, ևն, լինին յանգլիականին դնելով նախ զէզոքականդ *it*, ապա զբայն յերրորդ դէմս, և ապա զէական դերանունն. այսպէս. Ես եմ, դու ես, նա է. It is I, It is thou, It is he. այլ այս եղանակ խօսիցս վարի 'ի սաստկականս:

Նոյն էական դերանուանքս *I*, *thou*, *he*, ևն, վարին և 'ի պատասխանիս հարցմանց 'ի ձև զեղման՝ առանց դնելոյ զէական բայն *am* եմ. զոր օրինակ Ո՞ է որ հարկանէ զդուռն. — Ես, Who knocks at the door? — I. փոխանակ ասելոյ I am.

Նոյն էական դերանուանքս *I*, *thou*, *he*, *she* ևն, վարին և 'ի բացադրութիւն հետադայ իմաստիցդ և նմանեաց նոցին. Դու երիտասարդն ես քան զիս, You are younger than I (քան ես). Քո պէս իմաստուն է նա, He is as learned as thou (որպէս դու). Մեք ևս նոյնչափ վիշտս ունիմք, որչափ նա, We have as much trouble as he, ևն:

Բազում դերանուանք եդեալք 'ի միասին խնդրեն զհետադայ բայն յոքնակի. զոր օրինակ Դուք, նա և ես յոյժ զբաղեալ եմք, You, he and I *are* very busy. Եղբայր քո, կին քո և դու անդանօր էիք, Your brother, your wife and you *were* present.

Անգլիացիք չկրկնեն (որպէս զփրանկս) զդերանուանս 'ի մի և նոյն բանս. Նա յարգէ զքեզ և ծիծաղէ, He esteems and honours you. Շնորհս կալայ նմա և կալայց մշտ, I thank and will always thank him. Սիրեմ զնա և ծիծաղեմ, I love and respect him, ևն:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՎԱՐԺՔ Թ.

| Ոըք | շողոմեն զմեծամեծս կործանեն զնոսա.
| Those who | flatter great ruin .

Սուտութիւն ինքն յինքեան է ատելի.
Falsehood is odious .

Տիկնայք իցէք գոհ | ընդ տեսանելդ | զնոր թատերա-
Lady are you glad | to have seen | new pie-

խաղդ. — Այո եմք.
ce ? — are.

Ես գերի, ես ծնեալս 'ի հրամայել։ Աւաղ | և կարի իսկ
slave, born to command! Alas! | it is but

ճշմարտիւ | եթէ ես եմ.
too true | that am.

Դուք և ես համարիմք եթէ երջանկութիւն այսր աշխարհի
believe that happiness this world

հաստատեալ իցէ | 'ի ընուել | զպարտս որք հրա-
consists | in fulfilling | duty pre-

մայեալ են մեզ.
scribed to us.

Եթէ իցէ դժուարին | 'ի չափու ունել | զմեր բարկութիւն,
If be difficult | to rule | our anger,

է խոհականութիւն | զառաջս ունել | այնմ.
is wise | prevent | հյց.

Անգլիա պարտի զիւր ճոխութիւնս հովանաւորութեանն
England owes her riches որ. encouragement

զոր ինքն մատուցանէ իւրումն շահավաճառութեան.
that gives her 1 commerce.

Խլճ երևելոյ առատաձեռն՝ առնէ զմեզ բազում անգամ
desire of appearing generous renders often

վատնիչս.
lavish.

---

1 Յորժամ աղգք և աշխարհք անճնաւորին՝ յանգլիակա-
նին դնելի են յիդական սեռի։

Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Առաքինութիւն ունի յինքեան զամենայն որ ինչ կարէ առ-
virtue has all that can ma-
նել զնա սիրելի.
ke lovely.

Ասա ինձ ընդ ո՞ւմ կենակցիս դու, և ես | ասացից |
Tell with whom goest | will tell |
քեզ զինչ դու իցես.
what art.

Չարք | ոչ կարեն | տանել զյանդիմանութիւն առաքի-
wicked | cannot | bear sight vir-
նութեան. քանզի
tue; because

Նա դատապարտէ զնոսա. նոքա | խստանան | և զայ-
խ. condemns; | are exasperated | ir-
րագնին ընդդէմ նորա.
ritaded against.

Այր ոք որ է միշտ գոհ զանձնէ, | գուն ուրեք | է
man who is always satisfied with | seldom | is
նոյնպէս զայլոց.
so with other.

Դիւրագոյն շաւիղ լինելոյ պատրեալ է կարծել զինքն նրբա-
readiest way to be cheated is to think cun-
միտ քան | զայլս |.
ning | other people |.

Այր ծոյլ է բեռն ինչ անձին իւրում, ժամք | ծան-
man slothful is a burden hour | hang
ին | 'ի վերայ գլխոյ նորա. զբօսնու, և ոչ գիտէ
heavy | on his head; trifles, and knows not
զինչ գործիցէ.
what to do.

Մարդիկ են սովորաբար այնպէս արդարադատ առ առա-
man are commonly so just to vir-
քինութիւն, զի գովեն զնա յայլս, նաև յորժամ ին-
tue, that praise in others, even when
քեանք | ոչ 'ի գործ արկցեն | զնա.
| do not practise | it.

Յորժամ ոք | չգտանէ | զհանգիստ յինքեան, ընդունայն
When a man | finds no | rest it is vain
է խնդրել զայն այլուր.
to seek elsewhere.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Լինելն կարի ժգոհ զանձնէ է տկարութիւն, լինելն
To be too much dissatisfied գոր. is weakness, to be
կարի գոհ զանձնէ է յիմարութիւն.
too well satisfied is folly.

Ադոնիս էր պատանի ոմն անհամեմատ իմն գեղեցկու-
Adonis was youth սեռ. extraordinary beau-
թեամբ. Աստղիկ սիրեաց զնա տարփմամբ. Այ-
ty. Venus loved passionately. How-
կայն | եղև նա թշուառ | 'ի տեսանելն զնա սպա-
ever | she had misfortune | to see kil-
նեալ | 'ի վարազէ միոջէ |. այլ նա փոխակերպեաց զնա
led | by a wild boar |; but changed
| յանեմոն ծաղիկ |.
| into an anemone |.

Երևոյթ իւրոց թշուառութեանց վանէ զնա, տանջէ և
Idea his misfortunes pursues, torments
ընկճէ.
overwhelms.

Աստուած ասաց, սիրեցէք զձեր թշնամիս, օրհնեցէք զայնո-
God has said, shall love your enemy, bless tho-
սիկ որք անիծանեն զձեզ, | բարի արարէք | նոցա որք
se that curse | do good | to those that
հալածեն զձեզ, և աղօթեցէք վասն այնոցիկ որք բամ-
persecute pray for those who slan-
բասեն զձեզ.
der

Ա. Կրթութիւն Առոգանութեան և Ուղղագրութեան (17, 18) Ս. I shall not yet stop there. Վ. at a flight of steps.

Բ. Կրթութիւն Լուծման և Թարգմանութեան (9) Ս. Why not, said Mahmoud. Վ. what have you heard?

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ Ժ.

ՅԱՂԱԳՍ ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ.

Կրկին են ստացական դերանուանք, Զօդականք և Յարաբերականք։

ԴԵՐԱՆՈՒԱՆՔ ՍՏԱՑԱԿԱՆՔ ԶՕԴԱԿԱՆՔ

My	իմ, իմք.	Our,	մեր, մերք.
Thy	քո, քոյք.	Your,	ձեր, ձերք.
His, Her, Its	իւր, իւրք.	Their,	նոցա, նոցայք.

Առին սոքա զօդականք ստացականք՝ զի միշտ ընդ այլում անուան զօդեալ դնին. զոր օրինակ Հայր իմ, My father, *Մայր քո,* Thy mother, *Դուստրք իւր,* His *կամ* Her daughters, *են։*

ԴԵՐԱՆՈՒԱՆՔ ՍՏԱՑԱԿԱՆՔ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆՔ

Mine,	իմ, իմայինս. իմք, իմայինք.
Thine,	քոյ, քոյին. քոյք, քոյինք.
His, Hers, Its	իւր, իւրոյին
Ours,	մեր, մերոյին. մերք, մերոյինք.
Yours,	ձեր, ձերոյին. ձերք, ձերոյինք.
Theirs,	նոցա. նոցայք.

Սոքա յարաբերական ստացականք ասին, զի յայտ առնեն զանուն ինչ յառաջագոյն ասացեալ. զոր օրինակ Քոյ կարծիք ես իմս, Your opinion and mine. *Մատեան իմ ես քոյ,* My book and yours.

Ստացական դերանուանք եթէ զօդականք և եթէ յարաբերականք հոլովին նախադրիւքս of, to, from.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Դիտեա զի դերանուանքդ his, her և hers համաձայնին ընդ ստացողին և ոչ ընդ ստացելոյն (որպէս է յիտ. և 'ի վրկ.)։ Ուստի 'ի խօսել անդ զերաց ինչ որ մարդոյ պատկանիցի՝ ասելի է his. և զպատկանելոցն կանանց՝ ասելի her կամ hers, ըստ որում դերանունն իցէ զոգական կամ յարաբերական. զոր օրինակ Հայրն սիրէ զի-ր դուստր-ս և մայրն զի-ր ուսպր, The father loves his daughter and the mother her son 1.

Յորժամ յընդհանուր ինչ միտս առցի բանն՝ փոխանակ his, her դերանուանց դնի one's. զոր օրինակ Խոհականութիւն է երկուս լարս ունել յաղեղն իւրում, It is prudent to have two strings to one's bow. Պարտ է մարդոյ կենալ ըստ մտին, One must live according to one's income.

Դերանուանքս mine, thine, his, hers, են, դնին երբեմն առաջի աներևոյթ բայից, 'ի ցուցանել զպարտս, զգործս կամ զպայման մարդոյն զորմէ է բանն. զոր օրինակ Նմա է անհաւատարիմ գոյանել, ես ինձ լինել անյողդողդ, It is hers to be faithless, it is mine to be constant.

Առ 'ի տալ զօրութիւն բանին, կամ բառնալ 'ի միջոյ զերկխօսութիւն յաւելու 'ի վերայ ստացական դերանուանցս my, thy, his, her, our, your, their, բառդ own հարազատ, անձնական, առանձին. զոր օրինակ Սիրեմ զնա որպէս զիմ հարազատ եղբայր, I love him as my own brother. Առանձին յիւրոյն ոչ ինչ հանգանակեաց, He has contributed nothing of his own.

Յասելն 'ի հայումս իմայինք, ձերայինք, իւրեանցայինք, 'ի ցուցանել զազգակիցս, զբարեկամս կամ զընտանիս ուրուք, ջվարին և յանգլիականին լոկ դերանուանքդ, այլ պարտ է յաւելու 'ի նոսա և զգոյական ինչ անուն ըստ պիտոյից. որպիսիք են relations, friends, men, people, են. և ասել օրինակ իմն my relations, thy friends.

Դերանունս չէզոք its վարի վասն անշունչ իրաց և զտեղայոց յորժամ յընդհանուր սեռի վարիցին. զոր օրինակ Քաղաքն ես ջրկայք է-ր, The town and its environs. Այ ես

---

1 Զոր ըստ բառին թարգմանեալ յիտալական ձայն լինի, Il padre ama suo figlia, e la madre sua figlio. կամ 'ի վրկ. Le père aime son fille, et la mère sa fils.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՆԻՆ ՆՈՐԻՆ, The snake and its hissings. — ԱՅԼ յորժամ էակք անշունչք և անբանք անձնաւորեալ լցեն, վարին դերանուանքս his, her, hers, ըստ արական կամ իգական դիմաց որ տուեալ լինի նոցա։

Յորժամ բանն զմասանց ինչ մարմնոյ լցէ կամ զկարողութեանց հոգւոյ, պարտ է դնել զայնս միշտ ստացական դերանուամբ. զոր օրինակ Յաւէրտանէս զմատն իմ, You hurt my finger. Խորտակեցաւ բարձ նորա, He has broken his leg. Կորոյս նա զխելս, She has lost her wits.

Ի խօսել առ մերձաւորս և առ բարեկամս, մերձ դնեմք սովորաբար 'ի հայումս զստացականդ իմ. այլ յանգլիականին 'ի բաց թողու my, և պարզապէս ասի, Զինքդ կաս հայր իմ, How do you do, father? Բարեաւ մնայք մանկունք կամ որդեակք իմ, Farewell, children. Բարեկամ, եկ այսր, Friend, come here 1, ևն։

Առաջի անուանց արենակցութեան չդնին բնաւ մակադրական անուանքս Master, Mistress կամ Miss, Տէր, Տիկին. զոր օրինակ Յանձն արա զիս եղբօր քումդ, Recommend me to your brother. Մատո զմեծարանս իմ մօր քումդ, Present my respects to your mother.

Բազում անգամ փոխանակ ասելոյ՝ Մի ոմն 'ի հայրենակցաց իմոց, Երիւք ոմանք 'ի բարեկամաց իւրոց, ասի յանգլիականին Ոմն հայրենակից յիմոցն, A countryman of mine. Երիւք բարեկամք յիւրոցն, Two friends of his.

Ի դնել բազում անուանց 'ի միասին՝ յանգլիականին չկրկնի դերանունն ստացական. զոր օրինակ Հայր իմ, եղբայր և քոյրք 'ի գեղջ են, My father, brother and sisters are in the country. Կորոյս նա զինչս իւր, զբարեկամս և զանուն բարի, He has lost his estate, friends and reputation.

---

1 Մարթ է դնել զդերանունդ my ընդ բառիդ friend.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՎԱՐԺՔ Ժ.

Մայր ոք որ սնուցանէ զորդի իւր կրկնակի մայր է նա.
mother that suckles child doubly

Իւրաքանչիւր վիճակ ունի զիւր հաճոյս և զիւր վիշտս.
Every state has pleasure pain.

Գլխաւոր իմաստութիւն մարդոյ հաստատեալ է 'ի ճանաչել զիւր յիմարութիւն.
chief wisdom man consists in knowing folly.

Սիրտ նախանձորդին | լի է լեղւով և դառնութեամբ |, լեզու նորա կաթէ զթոյն, երջանկութիւն մերձաւորին խռովէ զհանգիստ նորա.
heart envious man | is gall and bitterness |, tongue spitted venom, success neighbour breaks rest

Պլատոն տարագրեաց զերաժշտութիւն յիւրմէ | հաստատակաց պետութենէ |.
Plato banished music | commonwealth |.

Ճշմարտութիւնն ամբառնայ զձայն իւր, այլ | տագնապի յոյժ | 'ի լինել լսելի 'ի միջոյ յուզմանց կրից.
justice raises voice but | has much ado | to be heard amidst tumult passion.

Ամենայն գործք բնութեան գրաւեն զհիացումն մեր.
All work nature deserve admiration.

Երբ միանգամ բաղդն դադարէ նպաստել մեզ, բարեկամք մեր լքանեն զմեզ.
When fortune ceases to favour friend forsake.

Այր ոք աննենդ է գեր 'ի վեր (քան) զվատութիւն կեղծաւորութեան, բանք բերանոյ նորա են խորհուրդք սրտի նորին.
man sincere is far above meanness dissimulation, word mouth are thought heart

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Այր անապարծ արհամարհէ զդատաստան այլոց, վստահի
man vain despises judgment other, relies on

յիւրն | և նշաւակի | .
| and is confounded | .

Լեզու զգօն առն տայ շնորհս ճշմարտութեան, և անվըս-
language modest man gives lustre truth diffi-

տահութիւն նորա | անմեղադիր առնէ | զվրիպանս նորա .
dence | excuses | error

Շաղաւաղուրթն այր | է տաղտուկ | ընկերութեան,
talkative man | is a nuisance | society

ականջ պարտասի 'ի բարբանջից նորա և հեղեղք բանից
ear is sick babbling torrent word

նորա ընկղմեն զզրուցատրութիւն այլոց .
overwhelms conversation other .

Այր ոք իմաստուն յաճախ տարակուսի, անմիտն չերկմի
man wise often doubts, fool doubts

զիմեքէ . Ճանաչէ նա զամենայն ինչ, բաց 'ի յանձին տգի-
ոնա nothing; knows all things, but own igno-

տութենէ .
rance .

Համեստութիւնն է յարժանիս որ ինչ շղարշ նրբին է առ
modesty is merit what gauze light

գեղեցկութիւն, նուազեցուցանէ նա զպայծառութիւնն,
beauty, diminishes lustre,

այլ բարձրացուցանէ զարժէս նորին .
but enhances value .

Նա որ է ամբարձեալ 'ի վեր (քան) զայլս, չկարէ տեսանել
He who is exalted above other, cannot see

զճշմարտութիւն իւրովք սեպհական աչովք . Նա է շուրջ
truth eye; is encom-

պատեալ 'ի մարդկանէ որք առ 'ի գտանել զշնորհս նո-
passed by men who to obtain favour

ցա, շողոմեն զնա և | մատնտու լինին | .
flatter | betray | .

Վաճառականութիւնն է որպէս զաղբերս ինչ, եթէ կամի-
commerce is like spring certain, if endea-

ցիս փոխել զընթացս նոցա | ցամաքեցուցանես զնոսա | .
vour to divert course | you dry them up | .

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Հայր իմ | հոգացաւ | զկեանս իմ, զդաստիարակութենէ
father | has provided | for subsistence, education

իմմէ և զբարուցս. որք են հզօրագոյն պատճառք երախ-
morals; these are strong motive grati-

տագիտութեան.
tude.

Եւրիպիդէս | գանգատէր | առ ոմն 'ի բարեկամաց իւրոց
Euripides | was complaining | friend

զի | ծախեալ էր | զերիս աւուրս 'ի յօրինել քանի
that | had been | day in composing few

ինչ տողս: Եւ սա | պատասխանի ետ | զի ինքն շարա-
verses. The latter | answered | that compo-

գրէր յայնց հարիւր 'ի միում աւուր: Բայց քոյք
sed . But

| կեցցեն | զմի օր ևեթ, ասաց նա, և իմք ցյաւիտ-
| will life | , said he, մ eter-

ենական:
nity.

Նա է քաջալաւ որ մերձաւոր, նա ունի հոգս զնուրոցն.
is good relation, he has care

Ա. Կրթութիւն Առոգանութեան և Ուղղագրութեան (19, 20) Ս. Before the footman. Վ. of new ground wheat.

Բ. Կրթութիւն Լուծման և Թարգմանութեան (10) Ս. Sir, said the vizier. Վ. let me hear you directly.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ ԺԱ.

ՅԱՂԱԳՍ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ.

Յարաբերական դերանուանք պատշաճեալք անձանց են այսոքիկ.

Ո.	who,	որ,	որք.
Ս. of	whom *կամ* whose 1,	որոյ,	որոց.
Տ. to	whom,	որոմ,	առ որս.
Հ.	whom,	զոր,	զորս.
Բ. from	whom,	յորմէ,	յորոց.

Յարաբերական դերանուանք պատշաճեալք իրաց են սոքին.

Ո.	which,	որ,	որք,	են.
Ս. of	which,			
Տ. to	which,			
Հ.	which,			
Բ. from	which,			

Իսկ յարաբերականդ that վարի և անձանց և իրաց. զոր օրինակ Մարդ որ խօսի, The man who speaks *կամ* that speaks. Այր զոր ինձ յարգեմ, The man whom I esteem *կամ* that I esteem. Տունն զոր գնեցեր, The house which you have bought *կամ* that you have bought.

---

1 *Քերթողք բազում անգամ վարեն* whose *և 'ի խօսել անդ զանշնչից իրաց. զոր օրինակ*

. . . . . The fruit
Of that forbidden tree *whose* mortal taste
Brought death into the world . . . **MILTON.**

" *Պտուղն արգելեալ ծառոյն օրոյ ճաշակ գառնութեան եմոյծ զմահ յաշխարհս* ,, .

ՄԻԼՏՈՆ.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Whose դնի անընդմիջաբար զկնի բառին զոր յարաբերէ, և որ զհետ նորա լցէ բառ՝ դնի անյօդ. զոր օրինակ Աստուծ որ ոյ ընդ գործս զարմանամք, God, whose works we admire. և ոչ թէ God, whose we admire *the* works.

Եթէ որ, որոյ, զորմէ զանձն յարաբերիցէ թարգմանելի է *of whom*. զոր օրինակ Այրն զորմէ խօսիս դու առ իս, The man of whom you speak to me.

Իսկ եթէ որ, որոյ զկրս յարաբերիցէ՝ դնելի է *of which*, բայց զկնի հետագայ անուան. զոր օրինակ Ահա ծաղիկ մի որ հոտ կարի փաղցր է, There is a flower, the smell of which is very agreeable.

Whose վարի երբեմն փոխանակ տրականի ում. զոր օրինակ Ո՞ւմ է տունս, Whose house is that, որպէս և առ մեզ ասի, փոխանակ ասելոյ Ոյր է տունս։

Եթէ 'ի միջոյ բազմաց զմին ընտրել առաջի կայցէ, վարի which, եթէ անձինք լցեն և եթէ իրք. զոր օրինակ Ո՞'ի յեանչ յանդգնէսցի ուրանալ, Which of you would dare to deny it? Ընտրէս ո՛ր յերկուց սուսերացս հաճոյ ինչ թէպ, Choose which of these two swords you like.

Եթէ զտեսակ կամ զբնութիւն անձին կամ իրի հարկ լցէ նշանակել, դնելի է what զինչ կամ որպիսի. զոր օրինակ Զինչ մարդ ինչ ես, What man is he? իբրու զի ասել Զինչ պէսակ մարդոյ ինչ ես, What sort of man is he?

Իսկ պարզապէս զանձն կամեցեալ նշանակել, պարտ է դնել who. զոր օրինակ Ո՛ ինչ մարդ որ կամիցի խոստովանել զանձն յանցաւոր ապերախտութեան, Who is the man that would acknowledge himself guilty of ingratitude.

Ո՞, ո՞ր, ո՞րոյ, ո՞ւմ, զո՞, յո՞ւմմէ, լինին յանգլիականին who, *of whom* կամ whose, *to whom*, whom, *from whom*. պատմականս զո՞ւմմէ նոյն է ընդ սեռականին *of whom*. զոր օրինակ Ո՞ է անդանօր, Who is there? Զո՞ւմմէ խօսիս դու, Of whom do you speak? ևն։

Իսկ զինչ թարգմանի what. զոր օրինակ Զինչ ասես դու, What do you say?

Անգլիացիք բազում անգամ զնախադիրսն of, to, from, որք ըստ կարգի դնելոց էին նախ քան զյարաբերականսդ, կարգեն զնոսա զկնի բայից որք գան զհետ դերանուանց. զոր

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

օրինակ Այրն զորմէ խօսիս, The man whom you are speaking of. Ուսումն յոր պարապիմ ես, The study which I apply myself to.

Ի վարել անգ զդերանուանդ whom, which, what, ազատութիւն է գործել կամ չգործել զվերոյգրեալ շնչաբանութիւնդ. այլ 'ի վարել զդերանունդ that, պարտին միշտ յետադաս լինել նախդիրքդ of, to, from, վասն որոյ մարթի ուղղապէս ասել The man of whom you are speaking, կամ The man whom are speaking of. բայց վրիպակ է ասել The man of that you are speaking. այլ պարտ է ուղղախօսել այսպէս, The man that you are speaking of.

Յանգլիականին բազում անգամ 'ի բաց զեղչին դերանուանքս whom, which, that յորժամ 'ի հայցական հոլով եդեալ լցեն, և յորժամ նախդիր նոցին ըստ վերոյգրեցելումն զկնի բային կարգեսցի. զոր օրինակ Ահա՜ասդի այրն (զոր) դու սիրէս, There is the person you love. փոխանակ ասելոյ whom կամ that you love. Անպիսի ինչ է (որոմ) նա չէ յեռանհաս, It is a thing he is not capable of. փոխանակ which կամ that he is not capable of. Սա այն այր է (որոմ) առաւել պարտական եմ, He is the man I am the most indebted to. փոխանակ whom I am the most indebted to.

Ի գնել բազում բայից 'ի միասին, յարաբերական դերանունն 'ի վերայ առաջնոյն եթէ դնի, զանց արարեալ կրկնել զնոյն և յայլս. զոր օրինակ Անպիսի ոչ է որ փաղցրայայն երգէ, որ հարկանէ բազում գործիս (երաժշտական) և որ սիրելի ընծայէ զանձն ամենեցուն. He is a man who sings well, plays upon several instruments, and makes himself beloved by every body.

Ո՞ր ըստ որում նշանակէ առ որ կամ յորոմ, թարգմանիչ յանգլիականն to which, at which, in which կամ wherein. զոր օրինակ Եթէ գիտէիր զպայման ինչաց որ հասի, այս ինքն յոր հասի, If you knew the condition to which I am reduced. Ահա վախճան որ յանգի, այսինքն առ որ յանգի, That is the end which he aims at. Են դէպք որ պէտք են մարդոյ լինել խոհական, այս է յորոմ կամ որոնօր, There are circumstances in which կամ wherein a man ought to be cautious.

Յանգլիականին որպէս և 'ի մեզ, բազում անգամ փոխան յարաբերական դերանուանցս, վարին էականքն, եթէ զանձանց լցէ յարաբերութիւնն և եթէ զնրաց:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Արդ յորժամ զանձանց ելցէ յիշատակութիւնն վարին դերանուանքս *him*, *her կամ them*, յառաջոյ ունելով զմի 'ի նախադրութեանցս *of*, *from*, *by*, *for*, *about*, *with*, եւն, ըստ պահանջելի իմաստիցն. զոր օրինակ Տաղտուկ ոմն է դա, կամիմ զէրծանել 'ի նմանէ, He is a troublesome fellow, I will get rid of him. Սիրես դու զՏ. Ճոնսըն, զի միշտ խօսիս զնմանէ, *կամ* զուրջ զնովաւ. You like Mr. Johnson, for you are always speaking of him, *կամ* about him. Փութաջան են մանկունքս, գոհ եմ զնոցանէ, These boys are diligent, I am satisfied with them.

Եթէ զերաց ելցէ յարաբերութիւնն, վարին դերանուանքս *it* և *them* յառաջոյ ունելով զնախադրութիւնքս *at*, *to*, *of*, *for*, *with*, *about*, եւն, ըստ իմաստից բանին. զոր օրինակ Զարմացեալ եմ ընդ այդ, I wonder at it. Զի՞նչ ասես դու առ այս, What do you say to it? Ուրախ եմ ընդ այդ, I am very glad of it. Ցաւէ ինչ ընդ այդ, I am sorry for it. Տաղտուկ է ինչ այդ, I am tired of it *կամ* of them. Գոհ եմ ընդ այդ, I am pleased with it.

Եթէ թուական ածական ինչ միայնակ եղեալ ելցէ և ջունչի զհետ իւր զգոյական անուն, չդնի բնաւ յարաբերական. զոր օրինակ Քանի՞ ծառայս ունիս. — Երկուս, How many servants have you? — I have two.

Ընդ բայից որք շարժումն ինչ ցուցանեն, փոխանակ յարաբերականի դնի մակբայս *thence* անտի, 'ի նշանակել զտեղին. զոր օրինակ Գնաս յեկեղեցի. — Անտի գամ, Do you go to church? — I come thence.

Նոյնպէս այլ և այլ դերանուամբք բացայայտին յանգլիականին և 'ի հայումն՝ իմաստքս նշանակիչք անձանց և իրաց. Խաբեպապիր ոչ է, մի հաւատար դմա, He is a deceitful man, don't trust to him. Խորհեցայց զայդմանէ *կամ* վասն այդորիկ, I shall think of it *կամ* about it, of them *կամ* about them. Գործք քո բարի են, այլ վրիպակս ինչ գտանիմ 'ի նոսա, Your works are good, but find some faults in them. Արար նա զայդ, այլ ոչ ինչ շահեցի այդու, He has done it, but he will get nothing by it.

Իսկ տեղական իմաստք՝ մակբայիւքս *there*, *thither*, անդ, անդանօր, *here*, *hither*, ասպ, ասպանօր. զոր օրինակ Եղէ՞ր դու

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

անդ. Have you been there? Կամիս երթալ անդր, Will you go thither? Ա՞ռ է։ — Այո՛ առ է, Is he here? — Yes, he is here. Մեք 'ի Փարիզ եմք, եկ դու ևս անդր, We are at Paris, come hither too 1.

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

Գոյ | յարուեստի զրուցատրութեան | ոՀ իմն բանից |
There is | art conversation | a certain tact |

որ տայ շնորհս սովորական իրաց.
gives a good grace mean thing.

Են | ազգք որք | անհաճոյ են | արժանեօքն, և այլք որ
There are | people | displease | with merit, others

հաճոյ ընծային թերութեամբք.
please fault.

Նոքա են երջանիկք որք գիտեն շատանալ կարևորօքն կե-
They are happy can content with the necessaries li-

նաց, և ոչ վրդովեն զանձինս վասն աւելորդաց.
fe, never trouble themselves about superfluities.

Մարդ որոյ կեանք կանոնաւոր է և որոյ գործք են ան-
man conduct regular action are up-

պարսաւք, է երջանկագոյն քան զայն որ | անձնատուր
right, is happy he | abandons him-

է | իւրոց հաճոյից.
self | inclination.

Ո՞ է մարդ որ | ոչ ելցէ խաբեալ բնաւ |.
is man | is never mistaken |.

Որ ինչ գողտրագոյնն է | 'ի գիրս ուրեք կորնչի մինչ
What is most delicate | work is lost when

թարգմանի | յայլ իմն լեզու. | Գոգցես հոյզ իմն է
it is translated | into another language. | It is like a essence

պատուական, որոյ նրբին անուշահոտութիւն | 'ի շոգի
exquisite, subtil perfume | evapo-

---

1 Գիտեա զի thither, hither վարին միշտ ընդ բայից որ շարժումն ինչ ցուցանեն։

Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

լուծանի | յորժամ հեղու 'ի միոյ յանօթոյ յայլ.
rates, | when poured out vessel into another.

Յորժամ ոք մեռանի, | ոչ ևս յիշատակի |.
When a man is dead, | he is no more thought |.

Զի՞նչ է առաքինութիւն. — Է | հաւատարիմ փոյթ
is virtue? — It is | faithful steady

| 'ի կատարել զպարտս | զորս ազդէ մեզ բանն.
| to discharge of those obligations | dictates reason.

Չկայ բնաւ մարդ որ չունիցի առաքինութիւն ինչ կամ ախտ
There is no man has not or vice

զօրացեալ՝ առ որ ուղղէ զամենայն գիւր գործս.
predominant, directs all action.

Չէ պարտ | ուղղակի դիմախօսել կարծեաց ուրուք, զոր
One must not | directly contradict sentiment man,

կամիմք համոզել.
we want to persuade.

Չկայ ինչ | այնպէս սովորական որ չմարթիցի երևել
There is nothing | so common may not appear

երկիւղալի առն որոյ երևակերպութիւն լցեալ է
dreadful person imagination is filled

ըղձիւք և գուշակութեամբք.
with omen prognostick.

Են մարդիկ զորս ատեմք, և այլք զորս սիրեմք | առանց
There are person hate, others love | without

գիտելոյ զպատճառն |. մին անիրաւութիւն ինչ է և
knowing why |. injustice is

միւսն տկարութիւն.
other weakness.

Նորաձևութիւն է բռնաւոր ոք որոյ պարտիմք հնազանդել
Fashion is tyrant we must obey

օրինացն և հաճոյից.
law caprice 1.

Են դէպք | յորս լռութիւն և պարզութիւն | մեծա-
There are occasion | silence simplicity | are to

---

1 Տես զի նորաձևութիւն անձնաւորեալ է աստանօր, վասն որոյ մարթ է դնել who.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ըելի են | քան զբանս և | զցոյց հանձարոյ | .
be preferred | to discourse | ostentation | .

Մեք որ ճանաչեմք զյարդ ժամանակի պարտիմք | բարուոք
know value time ought | to make

'ի կիր առնուլ | զայն .
a good use | սեռ .

Ընթերցաւ նա զիմ մատեան, և դատ առնէ զնմանէ որպէս
has read my book, and judges as

կոյր ոք առնէ զգունոց .
blind man does colour .

Դուք ուսանիք զանգլիարէնն, ուրախ եմ ընդ այդ .
learn English,

(Որչափ) առաւել ուսցիս զանգլիական լեզու, (այնչափ)
will study English language

առաւել գտցես 'ի նմա գեղեցկութիւնս .
will find beauty .

Գնաս դու | 'ի Լուվր . — Ոչ, գամ անտի .
Are you going | Louvre? — No, am coming

Սիրէք դուք զԴրախտն կորուսեալ Միլտոնի, զի | խօսիք
like Paradise lost Milton, for | you are

ցանգ | զայնմանէ .
always speaking |

Գնեցի ընտիր մատեանս | կամիցիս դու | զոմանս 'ի նոցանէ .
have bought good book | will you have |

Ոչ կամիմ, առաքեա զնոսին առ իմ եղբայրն .
will have, send my brother .

Եթէ | վշտացեցի | քեզ, ցաւիմ ընդ այդ .
If | have offended | am sorry .

Գնայ նա 'ի Լոնտոն յառաջիկայ եօթնեկիս | կամիցիս |
Sets out for London next week | should you like |

գնալ ընդ նմա .
to go with

| Տայի քեզ 'ի փոխ | զարծաթն | կամակար | եթէ
| I would you lend | money | with pleasure | if

ունէի ինչ, այլ չունիմ ինչ բնաւ .
had 1 but I have nothing .

---

1 Յորժամ պայմանական մասնիկդ ԵՒԷ մերձ գուցէ՝ ԻՆՉ, ԻՆ դնի յանգլիականին any .

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

| Մի տար նոցա | զվոխարէն . նոքա այնմ | ոչ են արժանի | .
| Don't give them | reward deserve not | .

Երջանկութիւն մարդոյ | չէ հաստատեալ | 'ի լինել առանց
happiness | does not consist | in being without

կրից , այլ հաստատի 'ի լինել իշխան նոցին .
passion , it consists in becoming master .

Տարկուինիոս կառոյց Արամազդայ մեծաշէն իմն տաճար
Tarquinius built magnificent temple

որ կոչեցաւ Կապիտոլիոն , քանզի | 'ի բրելն զհիմունսն
which was called Capitol , because | in digging the foundation

| գտաւ | անդէն գլուխ մարդոյ .
| they had found | head

Որ ինչ | ուսեալ լինի | 'ի մանկութեան տպաւորի դիւրեաւ 'ի միտս , և թողու անդէն հետս խորինս , որք դիւրեաւ | ոչ եղծանին | .
What | is learnt | youth is imprinted easily in mind , leaves traces deep | are not effaced | .

Ա . Կրթութիւն Առոգանութեան և Ուղղագրութեան (21 , 22) Ս . I sit down to breakfast . Վ . I do not think he had a worse .

Բ . Կրթութիւն Լուծման և Թարգմանութեան (11) Ս . You must know then . Վ . love oneanother tenderly .

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ ԺԲ.

ՅԱՂԱԳՍ ՅՈՒՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ.

Դերանուանք ցուցականք մերձաւոր իրաց են սոքա.

Եզակի.			*Յոգնակի.*		
Ո.		this, այս.	Ո.		these, այսք, այսոքիկ.
Ս.	of	this, այսր.	Ս.	of	these, այսց, այսոցիկ.
Տ.	to	this, այսմ.	Տ.	to	these, այսց, այսոցիկ.
Հ.		this, զայս.	Հ.		these, զայսոսիկ.
Բ.	from	this, յայսմանէ.	Բ.	from	these, յայսց, յայսոցիկ.

Դերանուանք ցուցականք հեռաւոր իրաց են այսոքիկ.

Եզակի.			*Յոգնակի.*		
Ո.		that, այն, կամ այդ.	Ո.		those, այնք, այնոքիկ.
Ս.	of	that, այնր.	Ս.	of	those, այնց, այնոցիկ.
Տ.	to	that, այնմ.	Տ.	to	those, այնց, այնոցիկ.
Հ.		that, զայն.	Հ.		those, զայնս, զայնոսիկ.
Բ.	from	that, յայնմանէ.	Բ.	from	those, յայնց, յայնոցիկ.

Զգործածութիւն դերանուանցս օրինակօք դիցուք առաջի. Զի՞նչ ասել ինչ այս, What does this mean? Զի՞նչ ասել ինչ այդ, What does that mean. Այս լաւագոյն է քան զայդ, This is better than that. Այդոքիկ չեն լաւք որպէս զայսոսիկ. Those are not so good as these. Այր այս, This man, Կին դայդ, That woman. Արք այսոքիկ, These men. Կանայք այդոքիկ, Those women.

Որ ոք, որք և հոլովականք նոցին 'ի հայ բան, յանգլիական դառնան յէական դերանուանս he, she, they, of him, of her. իբրու ասել Նա որ, զոր օրինակ Որ ոք մարդն զբարձեալ

ֆ-ը, անարժան է բարեկամութեան, He who betrays his friend, is unworthy of friendship. այս ինքն Ն՝ որ մատնէ, ևն։ Որ թուին լինել երջանիկ, ոչ են միշտ նոյնպէս, They who seem to be happy are not always so 1. այս ինքն Ն՝ որ թուին։ — Այլ մարթ է անջատել զերկոսին դերանուանդ և ասել այսպէս He is unworthy of friendship, who betrays his friend. They are not always happy, who seem to be so.

Եթէ որ, որ 'ի հայումն ունիցին զնշանակութիւնս այն որ, նոյն որ, որպէս յաճախ է տեսանել, պարտ է ըստ վերոյգրելոյն ջոջել յանգլիական բան՝ էական և յարաբերական դերանուամբքս he who, she who, they who. զոր օրինակ Որ զանձն պաշէ, բռնաւոր է այլոց, He who idolises himself, is a tyrant to others. այս ինքն Ն՝ որ զանձն պաշէ։

Անգլիացիք դնեն երբեմն զցուցական դերանուանս ընդ ստացականսն. զոր օրինակ This book of mine, Մատեան իմ. որ ըստ բառին թարգմանի Այս մատեան յիմոյն։

Ի շարս բազում անուանց մի զմիոյ կնի եկեալոց՝ չէ հարկ կրկնել զցուցական դերանուանս 'ի վերոյ միոյ միոյ 'ի նոցանէ. օրինակ իմն Այդ այդ, կինդ այդ և մանուկդ այդ, That man, woman and child. — Այլ առ զայսօրինակ զեղջելոյ զդերանունդ, հարկ է զի առաջին եդեալն ըստ ամենայնի պատկանեսցի և հետագայ անուանցն, ըստ թուոյ և ըստ իմաստից հեռաւորութեան և մերձաւորութեան. զոր օրինակ եթէ կամիցիմք ասել Այդ այր և կանայք այսոքիկ, չմարթի թարգմանել That man and women. այլ ասելի է That man and these women.

---

1 Մարթի ևս ասել, Those who seem to be happy, կամ Such as seem to be happy, are not always so.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՎԱՐԺՔ ԺԲ.

Որ ոք կարէ | 'ի չափու ունել | զկիրս իւր, է յոյժ երջանիկ.
can | moderate | passion, is happy.

Գոհութիւն սրտի զոր ընդունիմք 'ի վրէժխնդրութենէ
satisfaction is drawn revenge

| տևէ զմի ևեթ վայրկեան |, բայց այն որ | յառաջ գայ |
| lasts but a moment |, but | is drawn |

'ի ներողամտութենէ է յաւիտենական.
clemency is eternal.

Որ ոք է կարի ներողամիտ անձին իւրում, | ընդհանրա-
is too indulgent to | has general-

պէս կարի սակաւ ներող գտանի վասն այլոց.
ly but little complaisance for

Համարեա զքեզ միշտ 'ի տեղի այնորիկ յոր | կամիս անի-
Put yourself always in place որ. | would do an in-

բաւել | և (ոչ) բնաւ վիրաւորես նմին.
jury | and will never offend հյց.

Ոքք արհամարհեն զգիտութիւնս, են ևս դարուվելի քան
despise learning, are despicable

զանասունս, որոց տգիտութեան է պատճառ նոցին (իսկ)
beast, ignorance is consequence

բնութիւն.
nature.

Ոքք անկեալ են 'ի բարձրութենէ բաղդին | միշտ նկա-
are fallen pinnacle fortune | always look up to-

տեն | զբարձրութիւնն ուր միանգամ էին, այլ նոքա
wards | height on which once stood, but

որ | բարձրացան |, չկամին բնաւ հայել 'ի խոնարհ.
| have raised themselves |, will never look down-
wards.

Երջանիկ նոքա ոքք սիրեն ընթեռնուլ: Զանձրոյթ որ ծա-
Happy love to read! Disquiet preys

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

խէ զայլս | նա և 'ի միջի | հաճոյից, է անծանօթ այնո-
upon | even in the midst | pleasure, is unknown

ցիկ ոչք գիտէն պարապել յընթերցուածս ինչ.
can employ զանձինս in reading.

Մէք միշտ սիրեմք զայնոսիկ ոչք ընդ մեզ հիանան, և
always love հայ. admire,

| չսիրեմք միշտ | զայնոսիկ ընդ ոչս մեք զարմանամք.
| do not always love | admire

Նոքա խաբին ոչք կարծեն թէ երջանկութիւն հաստատեալ
are mistaken think that happiness consists

լցէ 'ի ճոխութիւնս.
riches

Շողմարարքք մեծամեծաց չտան ինչ այնոցիկ որ | կարօտ են
courtier give nothing | are in want

ամենայնի | , և տան զամենայն այնոցիկ որ | չունին
of every thing | , give | stand

կարօտութիւն | իմիք.
in need | սեռ, nothing.

| Ոմն 'ի նախնի արանց | ասէր, թէ այն որ | գտեալ է |
| One of the ancients | said, that | had met with |

վեսայ ոչք բարի, շահեալ է զորդի մի. բայց այն որ
son-in-law had gained son ; but

| գտեալ է չար ոչք |, կորուսեալ է դուստր մի:
| had found a bad one |, had lost a daughter.

Ա. Կրթութիւն Առոգանութեան և Ուղղագրութեան (23, 24) Ս. Happy was the day. Վ. a fellow feeling for those birds.

Բ. Կրթութիւն Լուծման և Թարգմանութեան (12) Ս. It is possible! exclaimed Mahmoud. Վ. never goes out without her mother.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ ԺԳ.

ՑԱՂԱԳՍ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ.

One, ոմն, ոք.
Any, ոմն, ոք, իմն, ինչ, ամենայն.
Many, } բազումք 1, յոչ
Several, } (գոնք.
Every, իւրաքանչիւր, ամենայն ոք 2.
Every body } ամենայն ոք, ամենայն
Every one } (մինչ.
Some, ինչ, իմն, ոմն, ոմանք 3.
Some body } ոմն, ոք.
Some one }
Some { people, folks, men, ones, } ոմանք.
Other, այլ, այլք.
Others, այլոց, այլոց.
The same, նոյն, ինքն, նոքին.
All, ամենայն, ամենեքեան.
The whole, բովանդակն, ողջոյն.
Every thing, ամենայն ինչ.

However, } ոչիարդ ևս, որպէս
Howsoever, } (ևս. որչափ ևս.
Whoever, } որ ոք ևս իցէ, որ
Whosoever, } (միանգամ.
What, որ ոչինչ, որ ևս է, այն որ.
Whatsoever, } որ ոչինչ ևս է, որ-
Whatever, } պիսի ևս իցէ, ամ
Whichsoever, } (որ. որչափ ևս.
Each, իւրաքանչիւր, իւրաքանչիւր ոք.
Each other, } միմեանց, իրերաց,
One another, } (ոչիրեարս.
Such, այսպիսի, այնպիսի. այսչափ. այս ոք.
Both, երիսքեան, երիսքին ևս.
Either, միւն կամ միւսն, ոմանք կամ այլք,
Neither, ոչ միւն ևս ոչ միւսն, ևս ոչ միւն, ոչ ոք.
None, ոչ ոք, ոչ ինչ.
No body, } ոչ ոք, ևս ոչ միւ ոք.
No one,
Not one,
Never a one,
Not any,

---

1 *Many* ցուցանէ անորոշ ինչ թիւ և հանրական. իսկ *Several* թիւ ինչ սահմանաւոր:

2 *Every* միշտ յեզականն վարի:

3 Հայերէնս ոմանք — և այլք, թարգմանին *some* և *others*.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Եթէ ամենայն ոք զմի մի առանձինն նշանակիցէ, իբրու իրաւանէիր ոք, յանգլիականին դնի every, և հետագայ բառն դնի եզակի. զոր օրինակ Ամենայն ոք ներքոյ անկեալ է դատապարտանաց, Every man is liable to censure. Որպէս և ամենայն 'ի ցուցանելն իրաւանէիր, դնի նոյնպէս every. զոր օրինակ զՕր ամենայն, every day, յամենայն եօթնեկոս, every week. Իսկ եթէ ամենայն ցուցանիցէ միանգամայն զամենեսին, յանգլիականին դնի all, և հետագայ բառն յոգնակի. զոր օրինակ Ահա-ասի՛ ամենայն բարեկամք իմ զոր ունիմ, There are all the friends, I have. Ամենայն մարդիկ ենթարկեալ են մահու-, All men are subject to death.

Մեք ամենեքին, դուք ամենեքին, նոքա ամենեքին, լինին յանգլիականին all of us, all of you, all of them, ևն:

Եթէ ամենայն նշանակիցէ բովանդակ այս ինքն զամբողջութիւն իրին որ ունիցի մասունս, դնի յանգլիականին whole, հանդերձ նախընթաց յօդիւքս the, of the, ևն. զոր օրինակ Ամենայն աշխարհ, The whole world, այս ինքն Բովանդակ աշխարհ. Ամենայն գումարն The whole sum, այս ինքն Ողջոյն գումարն:

Ամենեին, ամենեիմբ, բոլորովին թարգմանի յանգլիականն բառիւքս wholly, entirely, quite. զոր օրինակ Ես քո եմ ամենեին, I am wholly yours. Նա ամենեիմբ պատրաստ է 'ի քոյին ծառայութիւն, He is entirely devoted to your service. Զարմացեալ եմ բոլորովին, I am quite astonished, ևն:

Ինչ, ինչ թարգմանի սովորաբար some. այլ 'ի հարցական և 'ի պայմանական իմաստս ուր գուցէ if էնէ, դնի any. զոր օրինակ Գոյնէ՞ ինչ ակնկալութիւն, Is there any hope? Ունիցիս ինչ ասել, If you have any thing to say.

Որ ինչ ևս, որչափ ևս թարգմանի however, howsoever եթէ իցէ ընդ ածականի կամ ընդ անցեալ դերբայի. զոր օրինակ Որչափ ևս ճոխ ոք իցէ նա, ի՛սրի սիրող է արծաթոյ, However rich he may be, he is very fond of money կամ How rich soever he may be, ևն:

Իսկ եթէ որ ինչ ևս, որչափ ևս իցէ ընդ գոյական անուանց և ստորադասական բայից՝ դնելի է whatever կամ whatsoever.

զոր օրինակ Ոմանք ճոխք են ևս այլք աղքատք, Some are rich, others are poor.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

զոր օրինակ Որչափ ՝ բարեկամս ունիցի, ոչ բնաւ յաջողիցի, Whatever friends *կամ* What friends soever he may have, he will never succeed.

Թէ ՝ *թարգմանելի է though*. *զոր օրինակ* Թէ ՝ բարեկամ քոյ իցէ, Though he is your friend. Թէ ՝ կին ոք է, Though she is a woman.

Զինչ ՝ իցէ *վասն իրաց թարգմանի whatever*. Ո ոք ՝ *վասն անձանց whoever*. *զոր օրինակ* Որ զինչ ՝ իցէ քոյ խորհուրդ, Whatever your intention may be. Չգիտեմ թէ ո՞ է գրիչ մատենիս այսորիկ, այլ ոք ՝ իցէ՝ արժանի է քաջալերութեան, I do not know who is the author of this book, but, whoever he may be, he deserves to be encouraged. — Այլ երբեմն *whatever վասի և զանձանց*, *յորժամ զբնութիւն նոցա և կամ զկրօնս և զաստուծեան պատուոյ հարկ լիցի ցուցանել*. Չգիտեմ թէ քրիստոնէայ ոք է, թէ հրէայ *կամ* մահմետական, բայց որ զինչ ՝ իցէ, յարգեմ զարդարութիւն նորա, I don't know whether he be a Christian, a Jew, or a Mahometan; but whatever he may be, I value his probity.

Եթէ 'ի միջոց բազում *իրաց զմիոյ իցէ բանն՝ դնի whichever, whichsoever*. *զոր օրինակ* Եկիցս զինի քոր ճանապարհ ՝ ՝ կալցես դու, I will follow you, whichever road *կամ* which road soever you take.

Որ զինչ *յորժամ չունի զինչ կապակցութիւն ընդ նախընթաց բանին, թարգմանի what, իսկ եթէ զնախընթաց բանս յարաբերեսցէ՝ վասի which*. *զոր օրինակ* Որ զինչ ասացէր ինձ ճշմարիտ է, What you told me, is true. Ասա զինչ յոր զինչ էր կարեմ ծառայել քեզ, Tell me in what I can serve you. Խօսի բազում անգամ լոր զհեռաւորաց, որ զինչ անվայել է առն բարւոյ, He often speaks ill of absent people, which is unworthy of an honest man.

Իւրաքանչիւր ոք *թարգմանի every one կամ every body*. *զոր օրինակ* Իւրաքանչիւր ոք ունի զիւր ընդդիմութիւն, Every one *կամ* every body has his failings. — Իսկ Ամենայն *թարգմանի each*. *զոր օրինակ* Ամենայն 'ի պատկերացս բանկագնոյ է յոյժ, Each of those pictures is very valuable. Ի բաց առ զգիրս զայսոսիկ ՝ դիր զմի 'ի նոցանէ յիւրում տեղւոջ, Take these books away, and put each of them in its place.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

Որ զինչ և խոսիր թուիցի լինել 'ի մէջ պայմանի կենաց,
difference appears to be between station life,

բայց սակայն | է 'ի նոսա | հատուցումն ինչ չարեաց և
nevertheless | there is | compensation certain evil

բարեաց որ գործէ զնոսա հաւասարս.
good renders equal.

Ոչ մին և ոչ միւսն չարարին զիւրեանց պարտս.
has done duty.

Մին և միւսն պատմեն զնոյն իրս, թէ և ոչ մին և ոչ միւսն
relate same fact,

համարին զայն թէ իցէ ճշմարիտ.
believes it to be true.

Որ ինչ է արդար է պատշաճական, և որ պատշաճ է ար-
is just honest,

դար է.

Վատնիչն է միշտ աղքատ, որչափ հոխութիւնս ևս ունիցի.
spendthrift is always poor, riches he may have.

Լեր որ ինչ երևիս, և երևեաց որ ինչ ես.
Be appear, appear are.

Որ ոք է ստուգապէս քաջ և առաքինի, ունի միշտ զմխի-
is really brave generous, has always com-

թարութիւն՝ յորժամ է ընկճեալ, գիտելով եթէ է 'ի
fort, when is oppressed, to know that is

վերոյ քան զայնոսիկ որ արհամարհեն զնա.
superior որ. injure.

Առաքինութիւն 'ի թշուառութեան ազդէ պատկառանս,
virtue in misfortune attracts respect,

այլ վատութիւն որչափ երջանիկ և իցէ (ոչ ինչ այլ)
baseness successful may be

յանձն ձգէ բայց միայն զեպերանս.
attracts only contempt.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Արդարութիւն պարագրէ յինքեան զայլ ամենայն առա-
Justice comprehends vir-
քինութիւնս.
tue.

Պարիս | չէառ յանձն | դարձուցանել զՀելենէ առն
Paris | refused | to restore Helen husband
իւրում. Վասն որոյ պատերազմն հրապարակեցաւ, և
. Upon it war was declared 1, and
տևեաց տասն ամս.
it lasted year

Աթենացիք | հարին միանգամ և աւելի | ընդ Ծով և
Athenian | more than once defeated |
ընդ ցամաք զթագաւորն Պարսից.
king Persia.

| Արիստիպպեայ երբեմն հարցեալ | , որում այր ոք հնարա-
| Aristippus being one day asked | in able
գէտ որոշեսցի 'ի յիմարէն. | Առաքեսցին նոքա | ասէ,
man differed block-head: | Let them be sent | said,
արտաքոյ քան զաշխարհ իւրեանց և | տեսջիք | .
out սեռ. country | you will then see | .

| Ի գովիլ իշխանի ուրուք | վասն բազում առաքինու-
| A prince being praised | for vir-
թեանց զորս | չունէր | . — Արարից զամենայն ինչ
tue | did not possess | ; — I will do
զոր կարացից, ասէ նա, առ արգելուլ զձեզ | 'ի խօսելոյ
can, said he, to prevent | from telling
զստութիւն | .
an untruth | .

Ոմն հարցեալ Արիստիպպեայ զոր ինչ | ուսեալ ունէր |
asking Aristippus | he had learned |
յիմաստասիրութենէ. Վարել բարեկամութեամբ ընդ
by philosophy: To live amicably with
ամենեսին, պատասխանի էա.
, answered.

---

1 Անգլիացիք ասեն To declare war և To proclaim peace.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

| Չիք | ոք մարդ որ զինչ և արժանիս կարասցէ ունել.
| There is | man merit may have

որ ոչ լինիցի կարի տրտմեալ, եթէ գիտիցէ զայն ամ-
would not be very sorry it knew

նայն | զոր ինչ այլք խորհին | զնմանէ.
| is thought | սա.

Գթութիւն բերկրի յերջանկութեան այլոց.
charity rejoices happiness

| Բազմաց 'ի մարդկանէ | թշուառութիւնք այլոց ուրուք
| To most men | misfortune

(ոչ այլ ինչ) են բայց երազ իմն.
are but dream .

Ոչ ոք է ազատ 'ի զրպարտութենէ.
is secure calumny.

Մեծատունք առնեն զամենայն ինչ զոր ինքեանք կարեն
great do can

առ 'ի կորուսանել զկիրառութիւն իւրեանց ոտից և
to lose use foot

ձեռաց. որ է սակայն մեծագոյն տանջանք որ կարասցէ
hand; however curse can

| հասանել մարդոյ |.
| befall man |.

Կինն, մայրն և դուստր Դարեհի թէ և տրտմեալք և լքեալ
wife, mother daughter Darius afflicted dejected

էին, այլ | չկարէին հրաժարել 'ի զարմանալոյ | ընդ
were, | could not forbear admiring | հյց.

մեծանձնութիւն Ալեքսանդրի.
generosity Alexander.

Ա. Կրթութիւն Առոգանութեան և Ուղղագրութեան (25, 26) Ս. I shall also take care that the kitchen garden. Վ. strown with odorous hay.

Բ. Կրթութիւն Լուծման և Թարգմանութեան (13) Ս. This is certainly the first time. Վ. I am curious to know more.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ ԺԴ.

ՅԱՂԱԳՍ ՕԺԱՆԴԱԿ ԲԱՑԻՑ.

Լծորդութիւն բայիս To have ՈՒՆԵԼ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ

ՆԵՐԿԱՑ.

Եզակի.		Յոքնակի.	
I have,	ունիմ.	We have,	ունիմք.
Thou hast,	ունիս.	You have,	ունիք.
He (*ար*) She (*իգ*) has,	ունի.	They have,	ունին.

ԱՆԿԱՏԱՐ ԵՒ ԿԱՏԱՐԵԱԼ.

Կարողեալ էի, կարողեալ էիր լինին *I could have, I might have*, և հետագայ բայն 'ի մեջ անեղևոյթ, առ անգլիացիս դնի անցեալ. զոր օրինակ Կարողեալ էի կոչել, I could have called, I might have called.

Իսկ վասն այլոց ժամանակաց բային կարէմ, վարի *to be able* կարող լինել, փոխանակ բային *can*; և *to be permitted, to be allowed*, ընդհանուր լինել, ներելի գալ, կամ այլ ինչ նմանագոյն փոխանակ բային *may*. զոր օրինակ Չկարողանի նա հապոստանել, He will not be able to pay, Չկարողանի նա խօսել առարքայ, He will not be permitted կամ allowed to speak to the king. — Գիտեա զի և վասն ներկային, անկատարին և կատարեալին մարթ է վարել զբայս *to be able, to be permitted, to be allowed*.

Պակասաւոր է և բայս *ought* որ ցուցանէ պարտիմ, և ունի զայսոսիկ դէմս ևեթ

I ought,	We ought,
Thou oughtest,	You ought,
He ought,	They ought.

Պարտ է ինձ, քեզ, նմա, մեզ, ձեզ, նոցա. Պարտ էր մեզ, ձեզ, ևն: Օրինակ, Պարտ էր ձեզ յիշել զայդ, You ought to remember it. — Գիտեա զի պակասաւորդ *ought* խնդրէ զհետ իւր զնախդիրդ *to*, եթէ անեղևոյթ բայ զհետ եկեսցէ, զոր այլք 'ի պակասաւորաց չառնուն բնաւ:

Պակասաւոր է և բայս *will*. և ունի միայն զներկայն, զանկատարն և զկատարեալ. որպէս *I will* կամիմ, *I would*, կամէի, կամեցայ, կամեցայր, կամիցիմ, ևն:

Կամեցեալ էի, կամեցեալ էիր լինին *I would have, thou wouldst have*. և հետագայ բայն անեղևոյթ 'ի մերս, դնի առ նոսա անցեալ. օրինակ իմն, Կամեցեալ էր նա հարսնանալ զքոյր իմ, He would have married my sister.

Իսկ վասն այլոց ժամանակաց վարին բայքս *to wish* ըղձալ, *to be willing* կամել, յօժար լինել, *desirous* փափագող լինել, *pleased* հաճոյ լինել, *to have a mind* դիպ ունել, *to intend* խորհել, և այլք հանդէպք, որք մարթին վարել և 'ի ներկայն և յանցեալն:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Կամիմ զի հնորօրինակ իմն շրջի առ անգլիացին այսպէս. Կամիմ զի հնազանդէսցի նա, I will have him obey, այս ինքն Կամիմ ունել զնա հնազանդել. Չկամիմ թէ գրէսցէս դու, I would not have you write, այս ինքն Չկամիմ ունել զքեզ գրել։

Դնի դարձեալ will have, would have, եթէ բայն կամել առ անուն ինչ կամ առ դերանուն պատկանիցի. ուր 'ի Հայումն մարթի յաւելուլ կամ յապաւել զբայդ ունել. զոր օրինակ Զո՞ր յայսոցիկ չերկուց գրոցս կամիցիս (ունել), Which of these two books will you have? Կամիմ (ունել) զերկոսին նս զսոսա, I would have them both.

Անդէմ բայք լծորդին դերանուամբս it. զոր օրինակ It rains անձրևէ, it snows յինէ. it rained անձրևէր, it snowed յինէր։

ՎԱՐԺՔ ԺԶ.

Մեք դուն ուրեք զղջամք վասն խօսելոյ սակաւ, և բազում
seldom of to talk of-
անգամ վասն շատ խօսելոյ.
ten too much

Եթէ մեք զանձինս մեր | չխաբեսցուք |, շողոմութիւնք
If | did not flatter |, flattery
այլոց չկարասցեն մեզ սանանել.
հյց. to hurt.

Աշխարհ ամենայն արանջէ զևրոյ յիշողականէն և ոչ ոք
memory no body
քրթմնջէ զևրոյ դատողականէն.
judgment,

Յառաջ քան զըղձալ | իմիք, պարտ էր մեզ քննել, (եթէ)
Before we desire | thing to examine
զինչ երջանկութիւն ետէ այնորիկ որ զայն վայելիցէ։
happiness to possess.

Եթէ հարուած պատերազմի կարևոր է, այլ չէ պարտ
If scourge war necessary
բնաւ ատել զնրեարս, չէ պարտ զմիմեանս ծախել | 'ի
to hate to devour | in
խաղաղութեան անդ |.
the midst of peace |.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Պէտք են առաւել մեծաց առաքինութեանց 'ի տանել
great virtue to support

դեղեցիկ բաղդի քան վատթարին.
հյց good fortune bad.

Գոն երեք իրք որ կարեն | ձեռնտու լինել | մեզ առ 'ի
thing | contribute | to

իմանալ զսիրտ մարդոյն և զնորին տկարութիւնս. սէր,
discover heart man foible; love,

գինի և խաղ:
wine play.

Հարկ է զի կիրք ենթեն ընդ առաջնորդութեամբ բանին.
passion under the government reason.

Հազարապետ դքսին Կիզի էտ նմա յաւուր միում զցուցակ
steward duke Guise to give one day list

բաղում արանց (որ) անօգուտ (էին) 'ի տան իւրում:
person useless household.

Ցիրաւի է, ասաց իշխանն, զի ես կարեմ կեալ առանց
true to say prince that do without

ամենեցուն այսոցիկ արանց. այլ | հարցեր դու |
հյց people; but | did you ask |

նոցա, եթէ կարիցեն ինքեանք ևս կեալ առանց իմ:
whether also without.

Իտալացի ոմն կարի անձնամատն 'ի խաղ, | և չքաւոր
Italian greatly addicted gaming | and in bad

(պատահեալ) սովոր էր ասել, մինչ կորուսանէր. Ո՛վ
circumstances to use whenever to lose.

բաղդ մատնտու, դու կարես տալ ինձ կորուսանել, այլ
fortune treacherous, make but

| չկարես ստիպել զիս 'ի հատուցանել |:
| canst never force me to pay |.

Մոնթէքուքոլի լինելով ամբաստանեալ յարքունիս Վիէննայ
Montecuculli being accused at the court Vienna

վասն լինելոյ չարաւոք պաշտպանեալ ընդդէմ Տ. Թիւրէ-
of badly to defend against de Turenne

նայ, ասէ, առ արդարացուցանել զանձն, զի մարտուցեալ
to justify, that to fight

էր ընդդէմ առն ուրումն որ առաւել ոք էր քան
man

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

զմարդ։ Որպիսի՛ գովութիւն 'ի բերանոյ թշնամւոյ։
praise mouth enemy.

Ես ոչ կարեմ, ասէր երբեմն ոմն պատուական հռովմայեցի,
can, to say formerly illustrious Roman,

առ որ ազնուականութիւն 'ի դէմս ածէր | զնորին խոնարհ ծնունդ |, ցուցանել հրապարակաւ զանդրիս իմոց
nobility to reproach | his low extraction | to produce publicly statue

նախնեաց և ոչ զհիւպատոսութիւնս. այլ կարեմ ցուցանել զզինուորական մրցանակս որովք եմ ես պատուեալ, և զվէրս զոր ունիմ ընկալեալ 'ի պատերազմէն
ancestor nor consulship; military reward to honour wound to receive in to figth

վասն իմոյ աշխարհի։ Այսոքիկ են իմ անդրիք և իմ անուանք ազնուականութեան։
for country title

Այր ոմն որ ձեռնտու լեալ էր առնել զթագաւորն Փիլիպպոս տէր քաղաքին Ոլինթիայ, որոյ ինքն էր քաղաքացի, դանդաղէր առ նա, զի Լակեդեմոնացիք կոչէին զնա մատնիչ։ | Չգիտեմ բնաւ | ընդէր զարմանաս դու ընդ այդ, ասէ թագաւորն. զի Լակեդեմոնացիք են 'ի բնէ բիրտք և անոպայք. կոչեն զերան յիւրեանց անուն.
man to contribute make king Philip master city Olynthus, citizen, to complain Lacedaemonian to call traitor. | I don't know | why to wonder at naturally clownish unmannerly; to call by name.

Ա. Կրթութիւն Առոգանութեան և Ուղղագրութեան (31, 32) Ս. I shall probably spend the winter. Վ. and having married the man cook.

Բ. Կրթութիւն Լուծման և Թարգմանութեան (16) Ս. Instead of fifty, I will give my child. Վ. without any detriment to myself.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ ԺԷ.

ՑԱՂԱԳՍ ԺԽՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՐՑԱԿԱՆ ԲԱՑԻՑ ԵՒ ԱՅԼՈՑ ԳԻՏԵԼԵԱՑ.

Առ 'ի փոխել զբայս 'ի ժխտական կամ 'ի բացասական՝ վարի նշանակս do *վասն սահմանական ներկային, և* did *վասն անկատարին և կատարեալին, հանդերձ մակբայիւս* not *ոչ. զոր օրինակ*

I do not call *կամ համառօտաբրութեամբ*	ոչ կոչէմ ես.
I don't call,	
Thou dost not call,	ոչ կոչես դու.
He does not call,	ոչ կոչէ նա.
We do not *կամ* we don't call [1],	ոչ կոչեմք մեք.
I did not call, *ևն:*	ոչ կոչէի ես.

Արտաքոյ են կանոնիս, և չառնուն զնշանակս do *և* did *պակասաւոր բայքս* must, ought, may, can, *և օժանդակքքս* to have, to be. *այլ ժխտականք նոցին լինին 'ի ձեռն մակբայիս ևեթ* not. *զոր օրինակ սահմանական* I cannot *ոչ կարէմ,* I have not *ոչ ունիմ,* I am not *ոչ է, և անկատարն և կատարեալ* I could not *չարէի կամ չարացի,* I had not *չունէի կամ չուներ,* I was not *չէի կամ չեղէ, ևն:*

Ժխտական գործին և այլ ժամանակք՝ դնելով զմակբայս not *զկնի օժանդակ բայից կամ նշանակաց նոցին. զոր օրինակ* I have not had *չէ իմ ուներ,* I have not been *չէ իմ եալ,* I have not called, *չէ իմ կոչեալ:* I shall not call *ոչ կոչեցից,* I shall not have called *չիցէ իմ կոչեցեալ,* I should, would, could *կամ* might not call *չիցէմ ես կոչեալ,* Let him not call *ոչ կոչեցցէ,* Let us not call *ոչ կոչեցցուք,* Don't call *մի կոչէք,* Let them not call *մի կոչեցցեն, ևն:*

---

1 *Ի պերճ ասացուածս դնի յաճախ* I call not, I called not, *ևն:*

Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Յաներևոյթն և 'ի դերբայն ժխտականդ not դնի յառաջ քան զբայն. օրինակ ինն Պարտ է մեզ զգուշանալ մի դնել զանյինս 'ի վտանգ, We must take care not to expose ourselves to danger. Արար նա զայդ, չկարելով առնել այլապէս, He did it, not being able to do otherwise.

Մակբայդ never բնաւ, որպէս զ not յետադաս լինի օժանդակաց կամ նշանակաց. օրինակ ինն Չեկնոցէ նա բնաւ, He will never come. — Ի ներկայն, յանկատարն և 'ի կատարեալ սահմանականին՝ մակբայդ never անընդմիջաբար դնի զկնի տեառն բային կամ թէ ասել ուղղական անուանն. օրինակ ինն Չտեսանեմ զնա բնաւ, I never see him, և՛ն:

Եթէ մակբայդ բնաւ եղեալ ընդ բայս՝ հետագայ գոյականի իմիք պատկանիցի, յայնժամ յանգլիականին դնելի է no. օրինակ ինն, Ազնի բնաւ զգեցանիցն-ութիւն, He has no generosity. Չիք բնաւ ճշմարիտ բարեկամութիւն առանց առաքինութեան, There is no real friendship without virtue.

Բնաւ եթէ միայն դիցի իբրև ժխտական ու, թարգմանի նոյնպէս no. զոր օրինակ կամիս առնել զայդ թէ ոչ, Will you do it, or not? — Բնաւ, ոչ կամիմ, No, I will not. Ո՛չ Տէր, No, Sir.

Ոչ նս որ դնի 'ի հայումս յառաջ քան զբայն, և այլ նս որ դնի զհետ բային, թարգմանի յանգլիականն no more, զոր պարտ է դնել զհետ բային, կամ not any more, դնելովք ըստ not յետ օժանդակին կամ նշանակին և զ any more զկնի բային. այսպէս Ոչ նս խօսեցայց կամ Ոչ խօսեցայց այլ նս, I shall speak no more, կամ I shall not speak any more.

Եւ ոչ 'ի վերջ իմաստից թարգմանելի է nor-either. զոր օրինակ Ոչ դու կամիս զայդ և ոչ ես, You will not have it so, nor I either.

Յորժամ յիմաստ ինչ բանի իցէ մի յայսոցիկ մակբայիցս no, nothing, nobody, none, neither, never, յայնժամ չդնի այլ մասնիկ բացասական. զի 'ի բառադ յայդոսիկ գոյ իմաստ բացասական. վասն որոյ ասի There is no danger, Չիք ինչ վտանգ. I know nothing of it, Ոչ ինչ գիտեմ զայդմանէ. There is nobody at home, Չիք ոք 'ի տան. He is neither covetous, nor prodigal, Ոչ ծլատ է և ոչ զէղմ:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՀԱՐՑԱԿԱՆ բայք նովին ժխտական նշանակութիւն կաղմին. do վասն սահմանական ներկային, և did անկատարին և կատարեալին. դնելով զդերանուանն ընդ մէջ նշանակացս և բային. այսպէս. Do I call? կոչեմ, Did I call? կոչէի, կոչեցի։

Ի հանրական կանոնէս որոշել արժան է զօժանդակ և զպակասաւոր բայս, to have, to be, must, ought, may, can, որք չընդունին բնաւ զնշանակսդ do և did, այլ փոխադրութեամբ դերանուանն յետս. այսպէս 'ի ներկայն have I? am I? ունիմ, եմ. և յանցեալն had I? was I? ունէի, էի, ևն։

Դա և մակբայդ there որ ընդ էգզոքական բային վարի, 'ի հարցականն յետադասի այսպէս. Is there կամ are there? իկա, գոյին. was there կամ were there? գոյր, գոյին, ևն։

Յայլ ժամանակս դերանուանն դնի զկնի օժանդակին կամ նշանակին. զոր օրինակ Have I called? կոչեալ եմ ես. shall I call? կոչեցից ես, could, should կամ might I call? ես կոչեցեմ, ևն։

Եթէ ընդ հարցականին լցէ և ժխտական, not դնի զկնի դերանուանն այսպէս. Have I not? չունիմ ես, am I not? չիցեմ ես. do I not call? չկոչեմ ես, did I not call? չկոչէի ես, have I not called? չիցեմ ես կոչեալ, shall I not call? չկոչեցից ես, could, should կամ might I not call? չկոչիցեմ ես։

Ի հարցականս յառաջին դէմս ապառնեայն Թէ յեզականն և Թէ 'ի յոքնականն՝ վարի միշտ shall և ոչ բնաւ will. զոր օրինակ Երթայց ես վաղիւ անդր, Shall I go there to-morrow? և ոչ Will I go there to-morrow?

Զհարցական իմաստս չէ պարտ բնաւ սկսանել 'ի յատուկ անուանց կամ 'ի գոյականաց, այլ կամ բայիւ կամ օժանդակաւ կամ նշանակաւ բային, և ապա դնել զանուն. այսպէս Ի տա՞ն է տէրն, Is the gentleman at home? Երթի՞ն եղբայր քո 'ի Լոնդրն, Will your brother go to London? Ո՞չ ապաքէն լքին զնա բարեկամք իւր, Did not his friends forsake him?

Զհարցական մակբայդ արդեօք որ դնի ընդ բային, տարօրինակ իմն ձևով մեկնաբանեն անգլիացիք, զոր ցուցցուք օրինակօք. Անյրի՞կ արդեօք, It does not rain, does it? Լռեալ է այն իմա rain. Երթա՞ս դու արդեօք անդր, You go there,

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

don't you? *իմա* go. *որոց բառական թարգմանութիւն այս է.* Ու անիրաւ, անիրաւիցի. Երիա՞ս դու՝ անդր, լինա՞ս դու՝ անդր:

Դարձեալ ապա՞ն և ո՞չ ապա՞ն, նոյնպէս յերգու յանգլիականն. Ո՞չ ապա՞ն գրէսցէ՞ դու՝ առ նա, You write to him, don't you? *իմա լռելեայն* write to him? Ո՞չ ապա՞ն փապա-խառն է, It is warm, is n't it? 1 *իմա* warm. Ո՞չ ապա՞ն լինիցէ՞ դու՝, You will not come, will you? *իմա* come. *Բառական թարգմանութիւն սոցա այս է.* Գրէս դու՝ առ նա, լիցի՞ դու՝. Չիրմ է, ու չի՞ր իցէ. Ու եկիցէ՞ դու՝, եկիցի՞ դու՝:

Զնորաձև շարագրութենէս չմարթէ այլ կանոն աւանդել՝ բայց զայս, զի յայսօրինակ տարակուսական հարցուածս գնի նախ բանն ըստ իմաստին 'ի հաստատական կամ 'ի ժխտական, և ապա միւսանգամ յաւելու հարցուածոյ պայմանաւ՝ առանց կրկնելոյ զծանօթ բայն կամ զբառ. ոչ օտար յաշխարհաբար խօսից, յոր ասի Անիրաւ իսկոյ, անանկ լի՞, Դու՝ իրեն լըգրէս, այնպէս լի՞, *ևն:*

Փրանկական մանրիկս on *որով կրաւորական բայք յօրինին յերբորդ դէմս, յանգլիականին, որպէս և 'ի մեզ, թարգմանելի է երբեմն գերանուամբս* one *ոչ. զոր օրինակ* Զինչ իարասցէ ոչ առնել ընդ սրս այսոսիկ, What can one do with such folks? (*փրկ.* Que peut-on faire avec ces gens-là?)

Այլ յաճախ *թարգմանի* we, they, people, men, *ըստ պահանջելոյ իմաստին և դիմացն. զոր օրինակ* We, they, people *կամ* men think 2, Ասէ, նոցա, ծողովը-ըդն *կամ* մարդիկ կարծեմք, կարծեն (*փրկ.* On s' imagine):

Բազում անգամ ներգործական բայն փոխի 'ի կրաւորական. զոր օրինակ Կարծեն նոցա, *It is thought այս ինքն* Կարծեալ լինի. Ասացին ինձ, *I was told, այս ինքն* Ասացայ եւ. Հարեալ են զԼիզնաւորն, The enemies have been beaten, *այս ինքն*

---

1 *Is n't it համառօտութիւն է is not it.*

2 *Յորժամ յառաջին մասն բանին գնի people կամ men, յերկրորդին գնելի է they* նոցա. Կարծեն մարդիկ թէ ճոխ իցէ, *Բայց խաբին* նոցա, People think he is rich, but they are mistaken.

Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

թշնամին հարեալ է (փրկ. On croit, On m' a dit, On a battu les ennemis):

Յորժամ զհետ բային եկեսցէ շաղկապս ի, այսօրինակ յեղաշրջի յանգլիականն. Ան ի այր անարգիւ իցէ նա, He is said to be an honest man. այս ինքն Նա ասացեալ է լինել այր անարգիւ:

Յանգլիականին բաղում ուրեք սահմանական վարի փոխանակ ստորադասականին. զոր օրինակ Ասէմ ի սուտաց ոչ իցէ, I do not say that he is a liar, այս ինքն ի սուտաց ոչ է. Գեղեցիկագոյնն է 'ի պատանիս զոր ճանաչիցեմ, He is the prettiest boy that I know, այս ինքն զոր ճանաչեմ. որպէս յաճախ է տեսանել և 'ի հայումն:

Այլ բայք նշանակիչք ըղձից և մաղթանաց՝ յորժամ ունիցին զհետ ի, պահանջեն և յանգլիականին զստորադասական. զոր օրինակ Փափաքեմ զի երջանիկ իցես, I wish you may be happy.

Անուն ինչ հաւաքական կամ որ յեզականն զբազմութիւն նշանակիցէ, մարթի առնուլ զբայն կամ յեզակի կամ յոքնակի. զոր օրինակ Ատեանն հարց ի քոյչ արար գերեալն, The committee has examined the prisoner, կամ The committee have examined the prisoner.

Գիտեա զի 'ի դնել նոյն եղանակի բայից 'ի մի և նոյն դէմս ոչ կրկնի նշանակն, այլ միայն 'ի վերայ առաջնոյն. զոր օրինակ Այր աղնուական սիրիցէ ի պատուիցէ զվին իւր, An honest man will love and respect his wife, այս ինքն will respect.

Երբեմն ևս նշանակն բային ևեթ դնի, առանց կրկնելոյ զբայն, կամ նա և զդերանունն՝ որք յառաջ յիշատակեալ իցեն յառաջին մասն խօսից. օրինակ իմն Տեսեա՞լ ես զս. այս (տեսեալ) եմ, Have you seen him? Yes, I have, իմա seen him. Չտեսի զնա ի չտեսից բնաւ, I did not see him, and I never shall, իմա see him.

Բայք անգլիացւոց իբր 'ի բաղումս այլ ընդ այլոց նախադիրս առնուն քան 'ի մերս. նա և բաղումք 'ի նոցանէ ըստ նախադրութեանցն փոփոխեն և զիւրեանց նշանակութիւնս: Զդժուարագունից 'ի նոցանէ՝ զցուցակ բայից հանդերձ նոցին նախադրութեամբք և օրինակովք տեսցես յետոյ 'ի Կրթութիւնս Քերականութեանս:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.

Կեսար ասաց | 'ի պատճառս | անհարթութեան ձայնի
Caesar | alluding to | irregularity tone

ուրուն որ ընթեռնոյր առաջի նորա. Ընթեռնուս դու
to read before հյց.

եթէ երգես։ Եթէ երգես դու, երգես կարի չարաձայնս։
կամ to sing. If worst.

Որպէս երկիր ոչ բուսուցանէ միշտ վարդս և շուշանս,
As earth to produce always rose lily,

այսպէս և աշխարհ ոչ բերէ մեզ միշտ գոհութիւնս և
so world to afford contentment

հաճոյս։
pleasure.

Յորժամ աստուածք սիրեն զիշխանս, ասէ Նախնի ոմն
When god to love prince ancient

իմաստասէր, խառնեն նոքա 'ի բաժակ բաղդին խառ-
philosopher to pour into cup fate mix-

նուրդ իմն բարեաց և չարեաց, զի մի մոռացին նոքա
ture good ill that to forget

եթէ մարդիկ են։
that

Գտանի երբեմն մեծանձնութիւն | անդ ուրանօր | ոչ ոք
to find sometimes generosity | where |

կարծէր.
to imagine.

Տեսանին մարդիկ 'ի կարի թշուառ պայմանի կենաց որք ու-
to see people very unhappy circumstances

նին վսեմական զգացմունս.
noble sentiment.

Հարցեալ ուրուք Կատոնի, ընդէր այնպէս բարուք սպա-
to ask Cato why to de-

սահարկեալ պետութեան հասարակաց, չէր ժողովրդ-
serve commonwealth,

դեանն ամբարձեալ նմին անդրիս։ Ընտրեմ առաւել,
to erect statue. I would rather

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ասաց Կատոն, զի լեցի ինձ այդ հարցուած, քան թէ
to ask question

հարցանէր ոք ինձ թէ ընդէր կանգեալ լցէ այդ։

Փիլիպպոս արքայ Մակեդոնիոյ գրեաց առ Արիստոտել
Macedon to write Aristotle

զհետագայ նամակդ. Տամ քեզ ծանօթ զի | ծնաւ ինձ
following letter: to give notice | I have a

որդի մի | ։ Ոչ չնորհս մատուցանեմ այնչափ դից վասն
son born | . to thank god for

ծննդեան նորա, (որչափ) վասն երջանկութեանն զոր
birth happiness

ունի գալով յաշխարհ մինչդեռ դոյ Արիստոտել ոք 'ի
to come into the world whilst

կեանս. քանզի յուսամ զի ունեալ քոյով խնամովքդ
living; for to hope to bring up care

լեցի արժանաւոր փառաց հօր իւրոյ, և պետութեանն
to prove worthy glory father , empire

զոր թողից նմա։
to leave .

Ալէքսանդր ոչ նուազ քան զհայր իւր սիրեաց զԱրիստո-
Alexander father to love

տել. քանզի ասէր նա. Պարտական եմ ես միոյն վասն
because to say: indebted for

կեցոյս և միւսոյն վասն բարուք կեցոյս։
to live other

Կատոն Դատաւորն չդադարէր բնաւ դնել առաջի ծերա-
Cato Censor to cease to lay before se-

կուտին զարդիւնս ապականարարս շռայլութեան որ սկսա-
nate consequence fatal luxury to be-

նէր յիւր ժամանակս մուտ գտանել 'ի հասարակապե-
gin time to introduce into repu-

տութեան։ Տեսեալ զի յառաջ խաղային Յելլադայ և
blick. To see to advance Greece

Յասիա, գաւառք յղփացեալք խայծիւք և հրապուրանօք
Asia, province abounding bait allurement

վնասակարովք ամենայն հաճոյից. և զի սկսանէին նոքա
dangerous pleasure

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

մխել ձեռն 'ի գանձս թագաւորաց. Երկնչիմ, ասէր նա,
to lay hands upon treasure king: to fear

զի մի լիցուք մեք գերիք Հոխութեանցս այսոցիկ, փո-
to become slave riches in-

խանակ լինելոյ նոցին տեարքք. և զի ազգք պարտեալք
stead master nation to conquer

յաղթեացեն մեզ | դարձեալ | հաղորդս առնելով
| in their turn | by to communicate

զմեզ ախտից իւրեանց: Այս երկիւղ չէր բնաւ մտա-
հյց. vice apprehension ima-

ցածին. և ամենայն զոր կանխաձայնեաց նա եկն եհաս:
ginary; to foretell to come to pass.

Եպամինոնդաս (ունելով) իմացեալ զի Արտաշէս արքայ
to learn Artaxerxes

Պարսից առաքեալ էր 'ի Թեբէ հրեշտակս որ ջանալոց
to send Thebes ambassador to endea-

էին խթել զնա մեծամեծ ընծայիւք և շահաբեր նուի-
vour to corrupt by magnificent present advantageous of-

րօք, հրաւիրեաց զնոսա ճաշել ընդ նմա. պատուասի-
fer, to invite to dine with to enter-

րեաց զնոսա պարզագոյն իմն եղանակաւ, և ամենայն
tain in simple manner

որ ինչ էր 'ի տան նորա, ցուցանէր զպայման աղքա-
house to announce state indi-

տութեան:
gence.

Ճաշոյն աւարտեալ՝ ասաց ցնոսա ժմտելով. Երթայք և
repast to be over to smile: to go and

ծանուցէք թագաւորիդ ձերում զոր ինչ տեսէքդ առ
to inform to see

Եպամինոնդայ, և որպէս պատուասիրեաց նա զձեզ.
how to regale ;

իմացի նա վաղվաղակի զի այր ոք որ գիտէ շատանալ
to be sensible soon a man can to content

փոքրումբս, արհամարհէ զՀոխութիւնս և զփառս:
with so little, to disdain riches honour.

Պատմաբան ոք խօսելով զՍեսարէ, ասէ երթէ մեծութեամբ
historian to speak Caesar, to say for greatness

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

իւրոց խորհրդոց, արագութեամբ իւրոց յաղթութեանց,
project, rapidity conquest

քաջութեամբ իւրով և աներկիւղութեամբ 'ի վտանգս,
courage intrepidity in danger,

կարէր գոլ զուգակշիռ ընդ Ալեքսանդրի մեծի։
to compare Great.

Տիտոս Լիվիոս խօսի այսպէս զԱննիբալայ. "Զէր ինչ ամ-
Livy to speak thus Hannibal

նեին վաստակ որ կարէր պարտասեցուցանել զմարմին
labour to fatigue body

նորա կամ լքուցանել զհոգին. տանէր միապէս ցրտոյ
to sink spirit; to support equally հյց. cold

և տապոյ. հարկաւորութիւն և պէտքն էին և ոչ (եթէ)
heat necessity want

հաճոյք ոչք կարգէին զըմպել նորին և զուտել. ջու-
pleasure to rule drinking eating

նէր բնաւ ժամ սահմանեալ վասն ննջելոյ. այլ տայր
hour set of to go to rest; to give

քնոյ զժամանակն յոր պարապեալ էր 'ի գործոց։
sleep the time which was unemployed in business.

Ա. Կրթութիւն Առոգանութեան և Ուղղագրութեան (33, 34) Ս. She is middle-sized, well shaped. Վ. if he prove to be so very fond of gold.

Բ. Կրթութիւն Լուծման և Թարգմանութեան (17) Ս. My wife's father, he went on to observe. Վ. to give each of them seven or eight hundred more.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ ԺԸ·

ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ·

Նախադրութիւնք վարին 'ի ցուցանել զյարակցութիւնս որք են ընդ մէջ անուանց, դերանուանց, բայից և մակբայից։ — Դիցուք սատէն զգլխաւորս 'ի նոցանէ՝ հանդերձ կարևոր մեկնաբանութեամբ։

Above ցուցանէ զբարձրութիւն և զդերակայութիւն, և ընդդիմատիպ է նախադրութեանցս below, beneath, under. զոր օրինակ His chamber is above mine, Սենեակ նորա 'ի վերոյ իմոյս կայ. I am above such mean things, Դեր 'ի վերոյ եմ քան զվարուին։ — *Ցուցանէ ևս 'ի վեր քան, առաւել քան. զոր օրինակ* This is above our strength, Այդ 'ի վեր է քան զկարողութիւն մեր. I value honour above life, Յարգեմ առաւել զփառս քան զկեանս։

About նշանակէ զմերձակայութիւն և շրջաբերութիւն. զոր օրինակ I shall go there about noon, Երթայց անդր շուրջ զմիջաւորէ, այս ինքն մօտ 'ի հասարակեալ աւուր. I have seen all the towns about London, Տեսեալ եմ զամենայն քաղաքս մերձակայս Լոնդոնի. You must go round about, Պարտ է քեզ շուրջ գալ։ — *Երբեմն ևս about գործէ զպատմական հոլով, կամ նշանակէ վասն. զոր օրինակ* I shall speak to him about this business, Խօսեցայց ընդ նմա զքրայս *կամ* վասն այսորիկ։ — *Յորժամ եղեալ ինչ about ընդ անուանց կշռոց, թուոց և չափուց, նշանակէ* գրեթէ ՝Ի, շուրջ. *զոր օրինակ* That tree is about forty feet high, Գրեթէ 'Ի քառասուն ոտք բարձր է ծառդ այդ։ — *About դնի երբեմն ընդ մէջ to be և այլոց իրիք բայի. առ 'ի ցուցանել թէ պատրաստի կամ մերձ է առնել զնմն. զոր օրինակ* I am about to go away, Մերձ եմ 'ի մեկնել։ *Այլ եթէ about եղեալ ինչ ընդ մէջ բայի և գոյական անուան կամ յարաբերական դերանուան, յայնժամ ցուցանէ եթէ 'ի նմին ժամու առնէ մարդն զգործն զայն. զոր օրինակ* He is about a great piece of work, Պարապի նա 'ի գործ մի մեծ։

After ցուցանէ զհետ, զկնի, յետոյ. զոր օրինակ He came in after me, Եմուտ նա զկնի իմ։ — *Ցուցանէ երբեմն ըստ, զջ-*

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ընդ. զոր օրինակ He lives after the English fashion, կեայ նա ըստ անգլիացւոց, կամ ըստ անգլիացւոց օրինի:

Against կրկին նշանակութիւնք են բառիս, մին ցուցանէ զընդդիմութիւն և զհակառակութիւն, և երկրորդն զտեսողութիւն և զմերձաւորութիւն. զոր օրինակ He that is not with me, is against me, Որ ոչ ընդ իս է, հակառակ իմ է. The picture hangs against the wall, Պատկերն կախեալ կայ պատոյ. Let all things be ready against we come back, Ամենայն ինչ պատրաստ էցեն 'ի դարձի մերում:

Among և *amongst* համանունք են ընդ *between* կամ *betwixt*. այսու և եթէ զանազանեալք՝ զի երկոքին յետինքդ նշանակեն 'ի մէջ երիւոց: Իսկ 'ի խօսել զբազմաց որ առաւել ևս քան զերկուս՝ լաւ ևս է վարել *among*, *amongst* 'ի մէջ:

At վարի յիմաստս յորս չգուցէ տեղական շարժումն. զոր օրինակ He is at school, Ի դպրոցին է նա: — Նոյն վարի 'ի ցուցանել զզանազան պարապմունս, որպէս To be at study, at writing, at dinner, Պարապել յուսումն, 'ի գրել, ուտել 'ի ճաշու:

Away ցուցանէ զխորշումն, զհեռացումն և զյառաջադիմութիւն. զոր օրինակ Away, you flatterer, Երթ 'ի բաց, մարդեղոյդ. I scolded him away, Ի բաց վանեցի զնա յանդիմանութեամբ:

Before յառաջ քան, նախ քան, առաջի: — Վարի երբեմն որպէս զբաղդատական. զոր օրինակ I will die before, I behave so, Մեռայց նախ (առաւել) քան առնել այդպէս:

Behind զետի, յետոյսդ, յետոյ, զհետ: — Վարի երբեմն յայլաբանական ձև, առ 'ի ցուցանել զդերազանցութիւն ուրուք քան զայլս ամենեսին. զոր օրինակ In that point of learning he leaves all others behind him, Ի մասինս յայսմիկ հմտութեան զանցանէ քան զամենեսին. ըստ բառին ետեղս յետոյ իւր զամենեսին:

Below կամ *beneath* ցուցանէ 'ի վայր, 'ի խոնարհ. և երբեմն զարհամարհանս և զնախատինս. զոր օրինակ It is below կամ beneath you to do so, Ի վայր է քան զքեզ գործդ. They are below կամ beneath the indignation of an honest man, Անարժան են բարւոքելեան առն իմաստնոյ:

Beyond ցուցանէ անդր քան. զոր օրինակ I shall go beyond the Alps, Երթայց անդր քան զԱլպիս: — Ցուցանէ և զզ-

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

գեր 'ի վերն լինել և յանչափս զառաւելութիւն. զոր օրինակ He goes beyond all in point of generosity, Գերազանցէ զամենեքեանսն առաքինութեամբ. He rewarded him beyond his merits, Վարձատրէաց զնա առաւել քան զիւր արժանիս:

By նշանակէ զպատճառս և հնարս գործելոց իրաց. զոր օրինակ All things were created by the word of God, Ամենայն ինչ արարաւ բանիւն Աստուծոյ. He was hurried on by his passion, Ի կրէից ցասման յայդ ցգեցաւ. He satisfies every body by his conduct, Զամենայն ոք հաճէ իւրով բարեմարդութեամբ: — *Վարի և 'ի ցուցանել զամանակ և զմերձաւորութիւն. զոր օրինակ* By day, by night, Զքո՝ ի՝ կգիշեր. Sit down by me, Բազմեայ մօտ առ ի՝ն.

From ընդդիմասիպ է նախադրութեանն to, և ցուցանէ զորոշումն ազգի ազգի. վասն որոյ սովորաբար դնի ընդ բայս որք նշանակեն թողուլ զոք կամ զտեղի ինչ, կամ զմեկնել և զելանել. զոր օրինակ He goes from London to York, Գնայ 'ի Լընդրէն 'ի Եորկ. I have received letters from your sister, Ընկալայ նամակս 'ի քէնէ քումմէ:

In, into 'ի, 'ի մէջ. In առ գտագարումն յարաբերի, և into առ շարժումն. զոր օրինակ He is in England, ՅԱնգլիա է նա. I shall go into the garden, Երթայց 'ի պարտէզն. — *Այլ սակայն եթէ շարժումն յանուանեալ ինչ տեղւոջ լցէ՝ դնի in. զոր օրինակ* Տեսի զնա զի կգնայր 'ի Թիւիլրի, I saw him walking in the Tuileries.

Off ցուցանէ զբաժանումն կամ զհեռաւորութիւն. զոր օրինակ He went off to America, Մեկնեցաւ գնալ յԱմերիկա. He lives two leagues off, Երիս ֆարսախօք հեռի է ասպի: — *Ցուցանէ և զյապաղումն. զոր օրինակ* He puts me off from day to day, Օր յօրէ յապաղեցուցանէ զիս:

On կամ upon 'ի վերայ. գիտեա զի upon յայնժամ եւթէ վարի՝ յորժամ անուանեսցի տեղին յորոյ վերայ դնելի է ինչ մի, կամ ցուցցի իրն դնելի. զոր օրինակ Ծածկեա ըզգլուխդ, ասելի է Put your hat on. *այս ինքն* Դիր զգլխարկդ 'ի վերայ. *բայց չմարթի ասել upon, բայց եթէ այսպէս* Put your hat upon your head, *այս ինքն* Դիր զգլխարկդ 'ի վերայ գլխոյ քոյ: *On և upon վարին և ըստ այլ առմանց զորոց տես 'ի Բառագիրս:*

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Over 'ի վերայ, 'ի վերոյ, 'ի բարձանց. *զոր օրինակ* The evils that hang over our heads, Չարիք որ վերահաս են գլխոց մերոց: — Նշանակէ *և* ընդ, անդր *և* ան. *զոր օրինակ* He travelled all over Italy, Ճանապարհորդեաց ընդ ամենայն Իտալիա. He leaped over the brook, Վազեաց անդր *և* ան գետուանն: — *Յորժամ զկնի բայից դիցի over, ցուցանէ զգործն եղեալ և անցեալ. զոր օրինակ* The danger is over, Էանց վտանգն. My work is over, Աւարտեցաւ գործն իմ. I have read your book over, Ընթերցայ զմատեանդ ծայր 'ի ծայր:

Out արտաքս, արտաքոյ: Out of *ցուցանէ երբեմն զպատճառ իրին. զոր օրինակ* She did it out of spite, Չարութեամբ արար նա զայդ: — *Ցուցանէ և զհեռաւորութիւն անձին կամ իրի. զոր օրինակ* Go out of my sight, Ի բաց կաց յերեսաց իմոց. He is banished out of his country, Տարագրեալ է նա յի-րմէ աշխարհէ:

Through ընդ, 'ի (*ներդրական*). *զոր օրինակ* She looked through a grate, Հայեր նա ընդ վանդակապատն. He came in through one gate, and went away through another, Եմուտ նա ընդ մի դուռն, և էլ ընդ միւսն. His generous mind shines through all he does, Աստուծոյն նորա փայլէ յամենայնի զոր առնէ: — *Through եղեալ ընդ out, ցուցանէ զյարատեւութիւն և զընդարձակութիւն. զոր օրինակ* Throughout the year, Ընդ ամ բովանդակ. Throughout the universe, Ընդ տիեզերս ողջոյն:

Till, untill մինչև, ց, *զժամանակէ եւեթ ասին. զոր օրինակ* I waited for you till two o' clock. Սպասի էիր մինչև ցժամ երիւրեր: — *Եթէ ոչ զժամանակէ իցէ բանն, յայնժամ վարի սովորաբար to կամ even. զոր օրինակ* Ի Փարիզէ մինչև ցԼընդոն, From Paris to London. Սիրէ նա և զթշնամիս, He loves even his enemies.

Եթէ դնի առաջի անուան որ ցուցանէ զտեղին յոր երթայ ոք, կամ զանձն առ որ խօսի, կամ զգործն յոր պարապի. զոր օրինակ Երթայց 'ի Լընդոն, I shall go to London. Խօսեցայ առ տիկին, I spoke to the lady. Պարապիմ յուսումն, I apply myself to study. — *Վարի երբեմն և 'ի հանգիստութիւնս ինչ. զոր օրինակ* She is but a fool to her sister, Համեմատութեամբ քոյրն իւրոյ յիմար ոչ է նա:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Toward, *towards* 'ի, դէպ 'ի, առ. *զոր օրինակ* He will come toward the end of the week, Ի վերջ եօթնեկին եկեսցէ. He is charitable towards the poor, Մարդասէր է առ աղքատս: — Ի բառէս *ward* դէպ 'ի *յօրինին բարդութիւնքս այսոքիկ*, *hitherward* դէպ սոյս, *titherward* դէպ անդ, *upward* դէպ 'ի վեր, *downward* դէպ 'ի վայր, *forward* դէպ յառաջ, *backward* յետս դարձ:

Under ընդ, 'ի խոնարհ, 'ի ներքոյ. *զոր օրինակ* Under the table, Ընդ սեղանով. Under fifteen years, Ի հնգեսասան ամաց և 'ի վայր. Give good examples to those that live under your care, Լեր օրինակ բարեաց որոց ընդ քոյով ենեն խնամովդ: — *Նշանակէ երբեմն նուազ. զոր օրինակ* I cannot sell it a farthing under five pounds, Չկարեմ վաճառել զայդ դանկ մի նուազ քան զհինգ լիրայս:

With ընդ, *հակառակն է from*. *Յորժամ գալոյ և գնալոյ բանք իցեն, բազում անգամ մասնիկս along յարակցի ընդ with*. *զոր օրինակ* Come along with me, Եկ ընդ իս. Go along with him, Գնա ընդ նմա. *բազում և այլ իմաստք են նախադրութեանս՝ զորս տեսցես 'ի Բառագիրս:*

Within 'ի, 'ի ներքս, նուազ, (*գործիական հոլով*). *զոր օրինակ* Within a few days, Ի սակաւս աւուրս. He is within, Անդ 'ի ներքս է. He offered within ten shillings of the price, Տան զիւրին նուազ էր քան զգինն. Versailles is within four leagues of Paris, Վերսայլ լոր մղոնօք հեռի է 'ի Փարիզէ:

Without առանց, արտաքոյ. *զոր օրինակ* He cannot live without his friend, Չկարէ կեալ առանց բարեկամին. He is without, Արտաքոյ է:

Վասն խնդրոց իւրաքանչիւր նախադրութեանց չկարգեմք զայլ կանոնս առանձինն. զի շատ իսկ 'ի վերոյգրեալ օրինակաց ցուցանի թէ զոր հոլով իւրաքանչիւր 'ի նոցանէ պահանջիցէ ըստ իմաստիցն. իսկ զթերին լիալիր լցուցանել Բառագրոց պարտք են և ոչ Քերականին:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Վ Ա Ր Ժ Ք ԺԸ.

Ծեր ոմն և փոքր մանուկ մի | ածէին | զէշ մի 'ի մեր.
old man little boy | were driving | ass next
ձակայ վաճառանոցն 'ի վաճառել։
market to sell.

Որպիսի յիմար ոք անմիտ է սա, ասէ այր ոմն 'ի վերայ
What a fool fellow to say
ճանապարհին, լինել խոնջեալ հետիոտս, զի էշ իւր
road trudging it on foot
երթիցէ թեթև։
to go light.

Ծերն լուեալ զայս, եդ զմանուկ իւր 'ի վերայ իշոյն, և
to hear to set
երթայր սուլելով 'ի կողմանէ նորա։
to go to whistle by the side.

Քաջ է ստահակդ, կոչեաց երկրորդ ոմն առ մանուկն,
sirrah! to cry
իցէ՞ այս 'ի դէպ վասն քո | ձիավարել |, մինչդեռ
fit | to be riding |
եղկելի ծերունի հայր քո | երթայ | հետիոտս։
poor | is walking |

Հայրն 'ի վերայ այսր թշնամանաց՝ էառ 'ի վայր զորդին
rebuke to take
իւր յիշոյն և հեծաւ ինքն։

Տեսանէք դուք, ասէ երրորդ ոմն, որպէս ծոյլ ծերն
to see to say lazy
ապիրատ ձիավարէ ընդ երկայնութիւն (ճանապարհին)
knave a long
'ի վերայ իւրոյ գրաստուն, մինչդեռ եղկելի մանուկ իւր
փոքրիկ գրեա թէ կաղացեալ է ընթանալով։
crippled with

Ծերունին | վաղվաղակի իբրև | լուաւ զայս, զի էաւ 'ի
| no sooner | to hear, that to take
վեր զորդի իւր զկնի իւր։

Աղաչեմ բարեկամ քաջ, ասաց երրորդ ոմն, քո՞յ իցէ հշդ
to pray friend honest, your own
այդ։ — Այո, ասաց այրն։ — | Ոչ ոք կարասցէ կար.
Yes, — | One would not have thought

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ծել | այդպէս, պատասխանեաց միւսն, | վասն ձեր
| to reply | by your
բեռնաւորելոյ | զնա այդպէս անողորմաբար։
loading
Դու և որդի քո լաւ ևս կարող էք տանել զեղկելի
better able to carry
գրասդ, քան նա զձեզ։

Ամենայն ինչ առ հաճոյ լինել, ասաց տէրն, և իջեալ ընդ
Any thing to please owner to alight
որդւոյ իւրում, կապեցին նոքա զազդերս իշոյն'ի միասին, և
to tie legs together,
օգնականութեամբ ձողի միոյ ջանային տանել զնա 'ի վերայ
by help pole to endeavour
ուսոց իւրեանց ընդ կամուրջն որ ածէր 'ի քաղաքն։
shoulder 'ի վերայ bridge to lead town.
(Այս) էր տեսարան ինն այնպէս զուարճալի զի ժողո-
sight entertaining
վուրդն խուժեաց ամբոխիւ խաղ առնել ընդ այն, մինչև
to run in crowds to laugh at
էշն | տհաճեալ ընդ | անչափ քաղցրութիւն |
| conceiving a dislike | overcomplaisance |
տեառն իւրոյ, խզեաց զպարանն որք կապեալ ունէին
master to burst cord
զնա, խուսեաց 'ի ձողէն և գլորեալ անկաւ 'ի գետն։
to slip to tumble river.
Եզկելի ծերունին | որպէս և կարաց | դարձ արար
| the best | to make of his way
'ի տուն իւր | ամօթահար և լեկեալ |, զի վասն ջանալոյն
home | ashamed vexed | by
հաճոյ լինել ամենեցուն՝ հաճոյացաւ և ոչ ումեք, և
to please every-body nobody
կորոյս զէշ իւր 'ի վաճառս։
to lose bargain.

Ա. Կրթութիւն Առոդանութեան և Ուղղագրութեան (35, 36) Ս. Whereupon, without delay. Վ. with a long train of attendants.

Բ. Կրթութիւն Լուծման և Թարգմանութեան (18) Ս. God grant a long life to sultan Mahmoud. Վ. may value one's self on one's possessions.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ ԺԹ.

ՑԱՂԱԳՍ ՄԱԿԲԱՑԻՑ, ՇԱՂԿԱՊԻՑ ԵՒ ԶԱՅՆԱՐԿՈՒԹԵԱՆՑ.

Մակբայք են յայտարարք հանգամանաց բայից ածականաց նաև այլոց մակբայից. զոր օրինակ Գրէ նա բարւոյ, She writes *well*. Նա յոյժ բարի ոյ է, He is *very* good. Ընթերանաւ դոյ կարի ուղղապէս, You read *more* correctly.

Բազում ազգք են մակբայից. որպէս

ԹՈՒԱԿԱՆՔ. once մի անգամ, twice երկիցս, thrice երիցս, four times չորիցս, *ևն*:

ԴԱՍԱԿԱՆՔ. first [1] պատալինն, secondly երկրորդ անգամ, thirdly երրորդ անգամ, lastly 'ի վերջ, finally վերջապէս:

ՏԵՂԱԿԱՆՔ. here սոյս, there անդ, where ուր, hence սոյնի. hither սոյս, thither անդ, whither [2] ուր, thence անդի:

ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆՔ. now այժմ, before յառաջ (չան), after յետոյ, often յաճախ, when յորժամ, to-day այսօր, yesterday յերէկն, to-morrow վաղի, seldom դուն ուրէք, sometimes երբեմն, մերթ:

ՔԱՆԱԿԱԿԱՆՔ. little սակաւ, very little յոյժ սակաւ, enough շատ, բաւական, much բազում, very much բազում յոյժ, too much կարի յոյժ:

ՈՐԱԿԱԿԱՆՔ. well բարւոյ, badly չարւոյ, wisely իմաստնաբար, justly արդարապէս:

ԵՐԿԲԱՑԱԿԱՆՔ. perhaps թերեւս, possibly հնար է, perchance ըստ դիպոյ, probably մարթ է:

ՀԱՍՏԱՏԱԿԱՆՔ. yes այո, indeed յիրաւի, truly ճշմարտապէս, certainly պարտագոյապէս, for sure անկեղծարար, no doubt անպարտակոյս:

ԲԱՑԱՍԱԿԱՆՔ. no ոչ. not ոչ բնաւ, by no means, բնաւ, not at all ոչ բնաւ, ամենևին, in no manner ոչ ինչ, not in the least ամենևին ոչ:

---

1 *Յորժամ թուագրովք նշանակին դասականքս, գրին յայնժամ այսպէս.* 1st, 2ly, 3ly, 4ly, *ևն*:

2 Hither, thither, whither *վարին յիմաստս որ շարժումն ինչ ցուցանեն 'ի գալ կամ յերթալ 'ի տեղի ուրեք (զորէն լատինականացն* hùc, illùc, *և* quò).

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՀԱՐՑԱԿԱՆՔ. how ո՞րպէս, why ընդէ՞ր, how much քանի՞, ո՞րչափ, how many 1 քանի՞, how often քանի՞ցս, when ե՞րբ, where ո՞ւր, whither ո՞ւրանօ՛ր:

ԲԱՂԴԱՏԱԿԱՆՔ. more առաւէլ, քան, most առաւէլագոյն, much more հարի՛ առաւէլ, as much որչափ, less սակաւ, least սակաւ յոյժ, much less յոյժ սակաւ, as որպէս, այսպէս:

Են մակբայք որ ունին ըստ ածականաց բաղդատական և գերադրական. զոր օրինակ often, oftener, oftenest յաճախ. soon, sooner, soonest վաղ. far, farther, farthest հեռի, *են:*

Մակբայք մեծաւ մասամբ կազմին յածականաց և յանցեալ դերբայից, յաւելմամբ մասնիկանս ly. *զոր օրինակ* wise, իմաստուն, wisely իմաստնաբար. *honest* առաքինի, *honestly* առաքինաբար, *են:*

Մակբայք գրեա թէ միշտ յառաջընթաց լինին ածականաց և յետադաս բայից. բաց 'ի մակբայիցս always, never, often և seldom, որ դնին յառաջ քան զբայս: — Ի բազադրեալ ժամանակս բայից՝ մակբայն դնի ընդ մէջ օժանդակին և անցեալին: — Մակբայք յանգեալք 'ի ly *մարթին և յետադաս և յառաջընթաց լինել բայից:*

Գիտեա զի նախադրութիւնքս of, by, upon, at, in, with *յարին երբեմն 'ի վերջս մակբայիցս* here, there, where, *որով յայնժամ վարին յետինքս փոխանակ դերանուանցս* this, that, which. *զոր օրինակ*

փոխանակ

Hereof,	of this.	այսր, սոսի.
Thereof,	of that.	այնր, անոսի.
Whereof,	of which.	որ, ո՞սոսի.
Hereby,	by this.	սովին, սոսանօր.
Thereby,	by that.	դովին, անդանօր.
Whereby,	by which.	որով, ո՞ր.
Hereupon,	upon this.	'ի վերայ այսր.
Thereupon,	upon that.	'ի վերայ այնր.

---

1 *Վարի* how much *ընդ անուանց իրաց որ կշռին և չափին, և կամ մտոք ըմբռնին. իսկ* how many *ընդ անուանց ոչք ընդ թուովք անկանին. զոր օրինակ* how many books. *Քանի՞ մատեանք:*

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Whereupon,	upon which.	'ի վերայ որոյ.
Hereat,	at this.	առ այս, ընդ այս.
Thereat,	at that.	առ այդ.
Whereat,	at which.	առ ինչ.
Herein,	in this.	յայսմ.
Therein,	in that.	յայնմ.
Wherein,	in which.	յորոմ, որ.
Herewith,	with this.	այսոր, առվար.
Therewith,	with that.	այդոր, դրվար.
Wherewith,	with which.	որով:

ՇԱՂԿԱՊ անուանին մասնիկք զոգիչք բառից և բանից ընդ միմեանս. գլխաւորք 'ի նոցանէ են այսոքիկ.

And և.	But այլ, բայց.
As if որպէս թէ.	If, whether եթէ.
So that այնպէս զի.	Viz այս ինքն.
Insomuch that մինչ զի, այն- քան զի.	In as much as մինչ զի, այնչափ զի.
Yet սակայն.	Rather than առաւել քան.
However սակայն և այնպէս.	Or կամ.
For քանզի.	In order that որպէս զի.
Although, though թէպէպ և.	Since որովհետև, քանզի.
In short 'ի վերոյ ասեալ.	Because վասն զի:
Nevertheless բայց սակայն.	

ԶԱՑՆԱՐԿՈՒԹԻՒՆՔ են մասնիկք արտայայտիչք կրից հոգ- ւոյ, որպէս ցաւոց, խնդութեան, զարմանաց, հաւանու- թեան, արհամարհանաց, բարկութեան, և են. զոր օրինակ

Ah! ահ.	Come on! ծն երթիցուք.
Alas! աւաղ.	Cheer up! քաջալերեցէք.
Well! քաջ է.	Ho! հի, հէ դու.
Right! բարահ.	Hold! կաց, զգոյշ.
Egad! հէ աստուածեցեցաց.	Softly! լռեաղ.
Fy! ծն անդր.	Hush! լռ-ա լեր.
How! հրպէս.	Huzza! կեցցէ.
What! զինչ.	Zounds! անիծեալ.
Lack-a-day! աւաղ.	Silence! լռ-ա լեր.
God bless me! փեր ողորմեա.	Woe! վայ, եղբա:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ՎԱՐԺՔ ԺԹ.

Ոմն շինական քաղդէացի ածէր այծ մի 'ի քաղաքն Պաղ-
peasant chaldean to conduct goat city Bag-
տատու։ Նա էր հեծեալ 'ի վերայ միոյ իշոյ, այծն | զհետ
dad to mount | to
ընթանայր | նորա, միով զանգակիւ կախեալ 'ի պարա-
follow | հյց. bell to suspend neck
նոցէն իւրմէ։

Վաճառեցից զայսոսիկ կենդանիս, ասէ ցանձն, առ նուազն
to sell at least
երեսուն դրամոց արծաթոյ։ Այսու արծաթով կարեմ
ուղ. piece silver.
գնել փակեղ մի նոր, և մի ճոխ զգեստ մետաքսեայ,
to purchase turban new vestment սեռ. taffeta,
զոր պնդեցից գօտեաւ միով 'ի մետաքսէ ծիրանւոյ. և
to tie sash silk purple.
ես եղէց գեղեցկագոյնն 'ի մզկիթին։
fine at mosque.
Մինչդեռ շինականն | կանխագուշակէր այսպէս 'ի միտս |
While | was thus anticipating in idea |
զիւրոց հանդերձեալ վայելից, երեք ճարտար սրիկայք
'ի վերայ enjoyment, skilful rogue
կազմեցին հնարս ինչ 'ի կապտել զնա յիւրոց գանձուց։
to concert stratagem to plunder treasure.
Եւ զի նա երթայր յամր, մին յերիցն սահեցոյց ճար-
As he moved along slowly, to slip
տարութեամբ զզանգակն 'ի պարանոցէ այծին, և ունելով
զայն պնդեալ, առանց լինելոց տեսեալ, յագի իշոյն,
to fasten, to perceive, tail
տարաւ 'ի բաց զնուր աւարն։
to carry booty.
Եղկելի այրն հեծեալ 'ի վերայ իշոյն իւրոյ, և լսելով միշտ
riding

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

զզանգակն , հանապազորդէր 'ի խորհրդեանն , առանց
to continue musing,

գոյզն երկմտութեան ընդ կորուսան զոր կրեալ էր : Դէպ
least suspicion սեռ. loss to sustain . happe-

լեալ սակայն զկնիկ սակաւ ժամանակի դարձուցանել
ning to turn about

զգլուխ իւր , եաեւ ցաւով և յիւր մեծ զարմանս զի անա-
head , to see grief astonishment

սունն որ էր մի մեծագոյն մասն իւրոց Հոխութեանց
to constitute considerable riches

էր գնացեալ : Եհարց յոյժ կարի անձկութեամբ զայ-
to go . to inquire utmost anxiety զհետ

ծէն իւրմէ իւրաքանչիւր անցաւորաց , որոց նա հանդի-
սեռ. traveller , հյց to

պեցաւ :
meet .

Երկրորդ սրիկայն յայնժամ մերձեցաւ առ նա և ասէ
to accost հյց

ցնա . « Արդարև այժմ իսկ տեսի անդ 'ի վայր զայր ոք
just yonder

| աճապարեալ | , տանելով 'ի բաց ընդ իւր այծ մի » :
| in great haste | , to drag along

Դեղջուկն էջ փութով, և աղաչեաց զբարերար անծա-
to dismount precipitation , to request obliging stran-

նօթն ունել զէշ իւր , զի նա մի կորուսցէ զժամանակ
ger to hold that he might lose time

հասանել առ գողն :
overcome հյց . thief

Նա անդէն սկսաւ զհետ լինել . և յետ ունելոյ յանօգուտս
instantly pursuit, he had in vain

անցեալ ընդ դաշտս մինչ 'ի տեղին | որ նմա ցուցեալ
to traverse հյց field place | which was pointed out

էր | , դարձաւ խոնջեալ և ամենևին շնչասպառ 'ի տե-
to him | , to come back quite breathless

ղին յորմէ մեկնեալն էր : Անդանօր ոչ եգիտ ոչ զիւր էշն
from whence to set out . There

և ոչ զայրն որ նմա տուեալ էր խաբեպատիր տեղեկու-
deceitful informa-

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

թիւնս, և որոյ խնամոցն յանձնեալ էր զանասուն իւր։
tion, որ care to intrust

Մինչդեռ վարէր յառաջ զիւր ուղին խորախորհուրդ, նե-
to walk onward pensively ve-

ղեալ և ամօթահար ընդ իւր անյաջողութիւն, մոռադրու-
xed ashamed at disappointment, atten-

թիւն իւր զարթեաւ 'ի բարձրագոչ ողբոց և կականաց
tion to rouse loud complaint lamentation

առն ուրումն եղկելւոյ (որ) նստեալ (էր) 'ի կողմանէ
sat by the

ջրհորոյ միոյ։ Նա յետս դարձաւ յիւր ուղւոյն առ 'ի
well. to turn out way

կարեկից լինել ընդ եղբօր ումեք վշտաց. պատմեաց
sympathise affliction;

նմա զիւր սեպհական թշուառութիւնս, և եհարց նմա
misfortune,

զպատճառ սաստկագին տրտմութեանն որ թուէր ընկ-
violent sorrow to seem to op-

ճել զնա։
press.

«Աւա՜ղ, ասէ եղկելն այրն, | կարի ողորմագին ձայնիւ |
Alas! | in the most piteous tone of voice |

մինչդեռ կայի աստանօր յըմպել, արկի 'ի ջուրն տուփ
as was resting to drink, to drop casket

մի լի անդամանդիւք | որ յանձն լեալ էր ինձ | տանել
սեռ. diamonds, | that I was employed | to carry

առ խալիֆայն Պաղտատու. և մատնեցայց 'ի մահ կաս-
calif to put to death 'ի վերայ

կածիւ ունելոյ խորեալ գանձ մի այնպէս մեծագին։
suspicion to secret valuable.

«Եւ ընդէր ոչ ոստնուս 'ի ջրհորդ յորոնել զտուփ քո,
to jump into in search սեռ.

ասէ գեղջուկն, զարմացեալ ընդ ապշութիւն իւրոյ նոր
astonished at stupidity new

ծանօթին։ — Քանզի այդ է խոր, կրկնեաց այրն, և ես
acquaintance. — Because deep, to reply,

ոչ գիտեմ ոչ սուզանել և ոչ լուղալ։ | Բայց եթէ չնորհս
կարեմ to dive to swim. | But if you will be kind

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

արասցես | առնել ինձ զայս ծառայութիւն, ես տաց քեզ
enough as | to do service, to give

երեսուն դրամս արծաթոյ »:

Շինականն յանձն էառ զառաջարկն խնդութեամբ. և մինչ
to accept offer exultation, whilst

| հանէր | զպարեգօտն և զզգեստն և զմուճակն,
| was putting off | cassock vest slippers,

հեղոյր հոգի նորա շնորհակալս Մարգարէին, վասն
to pour out soul thanksgiving Prophet

նախախնամական օգնութեանն զոր նմա շնորհէր:
providential succour to grant.

Բայց 'ի ժամուն յորում եմուտ 'ի ջուրն 'ի խոյզ կարծե-
the moment to plunge in search preten-

ցեալ ափոյն, այրն (որ էր մի յերից սրիկայից որ միաձ-
ded to

բանեալ էին 'ի կողոպտել զնա) էառ զզգեստս նորա, և
concert to rob to seize garment

եբեր զնոսա անկասկած առ ընկերս իւր:
to bear Ներգ. security comrade.

Ա. Կրթութիւն Առոգանութեան և Ուղղագրութեան (37, 38) Ս. At length the long-wished-for day arrives. Վ. and talk but little to her.

Բ. Կրթութիւն Լուծման և Թարգմանութեան (19) Ս. They were going on, concluded the. Վ. I fear to displease you.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԴԱՍ Ի.

ՅԱՂԱԳՍ ՁԵՂՁՄԱՆ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ.

Ձեղջումն ասի զանցառութիւն կամ յապաւումն միոյ կամ քանի ինչ բառից, որով իմաստ բանին 'ի սակաւ բառս ամփոփեալ՝ ազդողագոյն ևս գտանի և միանգամայն դաշնակաւոր։ Յայտ ուրեմն է զի այնոքիկ ևեթ բառք ձեղջելի են՝ որ ամբողջութեան իմաստիցն և պարզութեան բանին ինչ ոչ ստանայցեն։ Ձգլխաւորս 'ի ձեղջմանց թէպէտ և յիւրաքանչիւր դասս ակնարկեցաք, բայց և ուրոյն կարգել զնոսին միանգամայն կարևոր համարիմք յուսանելեացն գիւրութիւն։

Անյեղլի սկիզբն է առ անգլիացիս, զի բառ ինչ յօդաւորեալ միանգամ, զնոյն զօրութեամբ իմանալի է և յամենայն անդամս նոյն ասացուածոյ, վասն որոյ և հոմայն իսկ բարբառ նոցա ձեղջական է. որով և առաւելագունի կարօտ մտադրութեան գիտելիքդ առաջիկայք։

Ձեղջումն յօդից.

Առ անգլիացիս չկրկնի յօդն 'ի նոյնանիշ բառս, եթէ խնդիր իցեն և եթէ գործօն իցին. զոր օրինակ Այր ոմն, կին ոմն և մանուկ մի, A man, woman and child. Տուն մի և պարտէզ մի, A house and garden. Արեգակն և լուսին, The sun and moon.

Այլ 'ի տալ պերճութիւն և ազդուութիւն բանին կրկնի յօդն. զոր օրինակ Ոչ միայն տարին, այլ և զօրն և ժամն, Not only the year, but the day, and the hour.

Ձեղջումն անուանց.

Յորժամ պարզութիւն և դաշնաւորութիւն բանին ոչ աղաւաղեսցին՝ ձեղջի և անունն. զոր օրինակ Օրէնք Աստուծոյ և օրէնք մարդոյ, The laws of God and man. — Պարտի ևս ասել The laws of God and those of man. այլ անշնորհ է ասել The laws of God and the laws of man.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Up յաւելու 'ի բայն զնշանակութիւն ինչ ամբառնալոյ 'ի վեր կամ բարձրանալոյ կամ ուղղելոյ և կանգնելոյ. զոր օրինակ յառնել յանկողնոյ, յոտն յառնել 'ի տեղւոջէն, ամբառնալ շինուածոց, ուղղել զանկեալ ինչ կամ զշրջեալ, կազմել զճակատ բանակի պատերազմողաց. կամ ընծայել իմաստ ինչ տակաւ բարգաւաճելոյ, որպէս ծառոց բարձրանալոյ, մանկան 'ի հասակն աճելոյ, դիզանելոյ նիւթոց, յաւելլոյ թուոց, մարդոյ 'ի վեր ելանելոյ, աստեղաց քան զերկրս 'ի վեր բարձրանալոյ, իրաց ուղիղ ընդ վեր ձգելոյ. ևս և տայ զնշանակութիւն կատարելոյ և աւարտելոյ. զոր օրինակ

To get, ճգնիլ 'ի լինել. To get up (ճգնիլ 'ի լինել ոտ-գոն) յառնել.
— grow, աճել, — grow up (աճել բարգաւա-լով) մեծանալ.
— stir, շարժել, — stir up (շարժել կանգնել յոտ-գին) ամբառնալ.
— take, առնուլ, — take up (առնուլ և դնել 'ի բարձ-) 'ի վեր առնուլ.
— come, գալ, — come up (գալ 'ի վեր) ելա-նել 'ի վեր.
— fill, լնուլ, — fill up (լնուլ մինչ 'ի վեր) լնուլ.

Down ընդհակառակս առաջնոյն՝ տայ զնշանակութիւն ցածութեան. զոր օրինակ զանկանել իրիք 'ի գետին, կամ զճիգն և զշարժումն իջանելոյ 'ի խոնարհ որպէս մարդոյ, և զկործանումն շինուածոց, կամ զխոնարհել լուսաւորաց քան

---

1 Երբեմն թարմատար ևեթ դնին մասնիկքս 'ի զարդ. որպէս out ընդ բայս որք նշանակեն խնդրել և գտանել. զոր օրինակ To find out գտանել։

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

զեզերաս 'ի վայր, որպէս արեգական մտանել, և նաւու առ հեռաւորութեան անտես լինել յաչաց. զոր օրինակ

To play, դնել, To play down (դնել 'ի վերայ) ընկնել.
— come, գալ, — come down (գալ 'ի վայր) իջանել.
— take, առնուլ, — take down (առնուլ 'ի վայր) իջուցանել.
— beat, հարկանել, — beat down (հարկանել 'ի վայր) ջրջել.
— go, երթալ, — go down (երթալ 'ի վայր) իջանել.

In տայ զնշանակութիւն ներգոյական նախդրիս 'ի, 'ի մէջ, 'ի ներսս. զոր օրինակ

To come, գալ, To come in (գալ 'ի) մտանել.
— shut, փակել, — shut in (փակել 'ի) փակել.
— call, կոչել, — call in (կոչել 'ի ներսս) մոծանել.
— beat, հարկանել, — beat in (հարկանել 'ի ներսս) մտել.

Out ընդ հակառակս առաջնոյն ցուցանէ ելանել արտաքս, լինել արտաքոյ 'ի բացի. զոր օրինակ

To come, գալ, To come out (գալ արտաքս) ելանել.
— shut, փակել, — shut out (փակել արտաքոյ) վանել 'ի դրանց.
— pull, կորզել, — pull out (քաշել արտաքս) յգել.
— step, ընթանալ, — step out (ընթանալ արտաքս) ելանել.

Off տայ զնմանատս բաժանման, հեռաւորութեան, և ընդ-հատութեան. զոր օրինակ

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

To cut, հատանել, To cut off (հատանել 'ի բաց) հերյուել.
— go, երթալ, — go off բաժանիլ, մեկնիլ.
— keep, պահել, առնել, — keep off (հեռի առնել) մերժել.

Away յաւելու 'ի նշանակութիւն բային այնպիսի հեռաւորութիւն կամ բացակայութիւն ցդառնալոյ միւսանգամ յայն տեղի. զոր օրինակ

To go, երթալ, To go away, երթալ 'ի բաց անդարձ.
— run, ընթանալ, — run away, խուսել 'ի բաց.
— take, առնուլ, — take away, առնուլ 'ի բաց տանել.

Forth յաւելու զնշանակութիւն ելանելոյ 'ի ներքուստ արտաքս. զոր օրինակ

To go, երթալ, To go forth (գնալ 'ի ներքուստ արտաքս) ելանել.
— set, դնել, — set forth (դնել արտաքս) 'ի լոյս ածել.
— bring, դնել, — bring forth, ծնանել.

Over զգործողութիւն բային ցուցանէ լինել 'ի վերայ, ծայր 'ի ծայրէ, 'ի միոյ յայլ, և կատարեալ. զոր օրինակ

To be, լինել, To be over (լինել կատարեալ) անարգիլ.
— go, երթալ, — go over ('ի միոյ ծայրէ ցմիւս) անցանել ընդ.

Են և այլ նմանօրինակ մասնիկք ոչ այնչափ յաճախ վարեալք, որպէս և նախադրութիւնք, որ եդեալք ընդ բային այլայլեն զնշանակութիւն նոցա, զորս տեսցես 'ի Ե կրթութեան բային և նախադրութեանց:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Գ. Գոյական անուն մարթի ածանցեալ գոլ յայլմէ գոյականէ, կամ յածականէ և կամ 'ի բայէ. զոր օրինակ

Priest,	քահանայ.	Priesthood,	քահանայութիւն.
Lord,	տէր.	Lordship,	տէրութիւն.
Bishop,	եպիսկոպոս.	Bishoprick,	եպիսկոպոսութիւն.
King,	թագաւոր.	Kingdom,	թագաւորութիւն.
Slave,	գերի.	Slavery,	գերութիւն.
Musick,	երաժշտութիւն.	Musician,	երաժիշտ.
Person,	այր ոք.	Personage,	այր ոք անուանի.
Good,	բարի.	Goodness,	բարութիւն.
Cruel,	անգութ.	Cruelty,	անգթութիւն.
To appear,	երևել.	Appearance,	երևումն.
To banish,	աքսորել.	Banishment,	աքսորումն.
To bury,	թաղել.	Burial,	թաղումն.

Ածական անուն ևս մարթի ածանցիլ յայլ ածականէ կամ 'ի գոյականէ և կամ 'ի բայէ. զոր օրինակ

Yellow,	դեղին.	Yellowish,	դեղնորակ.
Joy,	ուրախութիւն.	Joyful,	ուրախ.
Man,	մարդ, այր.	Manly,	արական, արու (ած).
Child,	մանուկ.	Childish,	մանկական.
Wood,	փայտ.	Wooden,	փայտեղէն.
To prefer,	լաւագոյն համարել.	Preferable,	լաւագոյն համարելի.

Բայն մարթի ածանցիլ 'ի գոյականէ, յածականէ և 'ի մակբայէ զոր օրինակ

Salt,	աղ.	To salt,	յաղել.
Work,	գործ.	— work,	գործել.
Light,	լե�.	— lighten,	լեռնացուցանել.
Better,	լաւագոյն.	— better,	լաւագոյն գործել.
Water,	ջուր.	— water,	ոռոգել.
Accent,	շեշտ.	— accent,	շեշտել.
Warm,	ջերմ.	— warm,	ջերմացանել.
Less,	նուազ.	— lessen,	նուազել.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Մակբայք մեծագոյն մասամբ ածանցին յածականաց և 'ի դերբայից. զոր օրինակ

Slow,	յամր.	Slowly,	դանդաղապէս.
Willing,	կամեցող.	Willingly,	կամակար.
Open,	բաց.	Openly,	յայտնապէս.

Որպէս տեսանի 'ի վերոյգրեալ օրինակաց, բառ ինչ առ 'ի լինել ածանցեալ փոփոխումն կամ յաւելումն ինչ առնու 'ի վերջն, և այս յամենայն լեզուս. որպէս 'ի հայումն մանուկ, մանկութիւն, child, childhood. արդ զյաւելեալն զայն կոչեսցուք վերջադիր մասնիկ։ Գոյ և միւս այլ ազգ ածանցականաց, որ փոխանակ 'ի վերջն փոփոխելոյ և յաւելլոյ, յառաջոյ լինի յաւելուածն. զոր օրինակ ծանօթ, անծանօթ, known, unknown. և զայս ևս յաւելուած կոչեմք յառաջադիր մասնիկ։ Արդ այժմ խօսեսցուք զնոցանէ, սկսանելով նախ 'ի յետնոցս։

A առ, 'ի, յ, ընդ. զոր օրինակ side կողմն, aside առ 'ի կողմն կամ 'ի կողմանէ. sleep քուն, asleep 'ի քուն. bed անկողին, abed յանկողնի։ — Յաւելու և 'ի բայս ինչ, այլ գոգցես չայլայլէ բնաւ զառաջին նշանակութիւն նոցա. զոր օրինակ to amount (to mount) ելանել, բարձրանալ։

Ad մասնիկ լատինական ցուցանէ զձկտումն, զհպաւորութիւն կամ զմերձաւորութիւն. զոր օրինակ adjoining shop, մերձակայ հանուն (ձիոյ)։ Տառն *d* փոխի սովորաբար յայն գիր որով սկսանի բառն կցորդեալ ընդ նմին. զոր օրինակ to affirm, to attend, փոխանակ գրելոյ to adfirm, to adtend.

Ante, anti առաջինն նշանակէ յառաջ, որ 'ի հայումս բացատրի մասնիկամբս նախա.. իսկ երկրորդն հակառակ, 'ի հայ հակա. զոր օրինակ antechamber նախասենեակ, antecessor նախընթաց, antediluvian նախաջրհեղեղեան, antemeridian նախամիջօրեական. antichrist հակաքրիստոս կամ դէրաքրիստոս, antipathy հակակրութիւն կամ անսիրելութիւն, antipodes հակոտնեայք, ևն։

Be յառաջադրեալ գոյական կամ ածական անուանց՝ գործէ զնոսա բայս. զոր օրինակ fool յիմար, to befool յիմարեցուցանել. friend բարեկամ, to befriend ցուցանել ղեր կամ ընբարեկամութիւն. dew ցող, to bedew ցողել։ — Be յաւելեալ 'ի

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

չէզոք բայս, առնէ զնոսին ներգործականս. զոր օրինակ to come գամ, to become լինել, դիպել. to lie սուտ, to belie կեղծել, կերպարանել:

Dis մասնիկ բացասական որ ցուցանէ զզրկումն կամ ըզ-ժխտումն, և զնմաստ բառին 'ի ներհակին շրջէ. զոր օրինակ advantage օգուտ, շահ, disadvantage վնաս, պոյժ. to please հաճոյ լինել, to displease անհաճոյ լինել:

En յարեալ յածական և 'ի գոյական անուանս, գործէ զնոսին բայս. զոր օրինակ light լոյս, to enlight լուսաւորել. list ցուցակ, to enlist գրել 'ի ցուցակի. title պիտ՚ուս, to entitle յորջորջել:

For փոխէ զնշանակութիւն բառին 'ի ներհականն, զոր օրինակ bidden հրամայեալ, forbidden արգելեալ:

Fore ցուցանէ զերիցութիւն ժամանակի կամ տեղւոյ և անձին. 'ի հայումս նախա.., կանխա.. զոր օրինակ to foretell կանխայայտնել, to forethink յառաջագոյն խորհել, forefather նա-խահայր, foreknowledge կանխագիտութիւն:

Inter 'ի մէջ, 'ի. զոր օրինակ intercalary նահանջ կամ աւելաց օր, to interpose 'ի մէջ արկանել:

Mis մասնիկ բացասական կամ եղծական, 'ի հայումս ան, ա, դժ. fortune բաղդ, misfortune դժբաղդութիւն. to live կեալ, to mislive կեալ լարալար:

Out նշանակիչ առաւելութեան. զոր օրինակ outcry աղաղակ կարի մեծայայն, to outshine բացափայլել:

Over ցուցանէ զգերակայութիւն կամ զտարապայման առաւելութիւն. զոր օրինակ to overburden կարի բեռնաւորել, overzealous կարի նախանձաւոր, to overflow ողողել, յորդել, overbold կարի յանդուգն:

Re ցուցանէ զկրկնութիւն կամ զմիւսանգամն լինել. 'ի հայումս վերապին, մեսանգամ. զոր օրինակ to reform վերապին ուղղել: — Բազում անգամ փոխանակ յառաջադիր մասնիկանս *re, զկնի բային դնի back, որ զնոյն ունի նշանակութիւն կրկնութեան. զոր օրինակ* I shall come back, Եկիցս վերապին:

Super, զգերակայութիւն, զմեծութիւն և զաճումն. 'ի հայ գեր. զոր օրինակ supernatural գերբնական:

Sur, զվերադրութիւն կամ զյաւելուած. 'ի հայումս վեր.., մակ.. որպէս to surname վերանուանել, մականուանել:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Un բացասական մասնիկ զհակառակ իմաստ արմատակա-նին ընծայելով. 'ի հայ ան. զոր օրինակ to unpeople *անմարդի առնել*, unequal *անհաւասար*:

Under, կարի նուազ, ընդ հակառակս over *ի որ զկարի առաւելութիւն ցուցանէ. զոր օրինակ* to undervalue *նուազագոյն, ընչին համարել*:

Up ցուցանէ զբարձրութիւն. զոր օրինակ upland *բարձր երկիր, լեռնային*, to uprise *'ի վեր բարձրանալ, ելն*:

Այսոքիկ են ահա գոգցեալ բովանդակ յառաջադիր մասնիկք ածանցական անուանց յանգլիական լեզուի, յորոց կազմին անթիւ բառք յարմատականաց անտի առեալք, որք և ըստ նշանակութեան իւրաքանչիւր մասնիկանցդ փոփոխեն զիմաստս իւրեանց, որպէս տեսաք:

Արդ խօսեացուք և զվերջադիր մասնիկանց, որ բազմագոյն են քան զառաջինսն, և որք մեծապէս օժանդակեն Հոխութեան անգլիական բարբառոյ. յուսանել զսոսին և զնոցա իւրաքանչիւրոցն զնշանակութիւն՝ զբիւրաւորաց 'ի բառից զիմացուած մարթիմք մեղէն իմաստասիրել, առանց իսկ ձեռնտուութեան բառագրոց. որով և ուսումն լեզուի և իմացուած գրոց դիւրանայ յոյժ յոյժ:

Արդ վերջադիր մասնիկք ածանց բառից այսոքիկ են.

Able, *Ա հյ. կան, ելի. Վերջադիր մասնիկ յոլովագունից յածական անուանց առեալց 'ի փրանկականէն, որք ցուցանեն զհնարաւորութիւն իրիք, կամ զոր մարթ իցէ փորձել. զոր օրինակ* probable *հաւանական*:

Բ. յարի դարձեալ 'ի բայս և փոխէ զնոսա յածականս. զոր օրինակ to venerate, venerable *պաշտելի*:

Ade *որ յանգեալ անուանք սակաւաթիւք յանգլիականին՝ առեալ են 'ի փրկ. զոր օրինակ* balustrade *վանդակ*:

Age *մեծաւ մասամբ փրկ. են. զոր օրինակ* village *գիւղ*, herbage *խոպեղէնք*:

Al *Ա կան. միասպէս այսօրինակ յանդին յանգլիականին փրկ. al և el. զոր օրինակ* perpetual *յաւիտենական*, national *ազգային*:

Բ ուն. յարեալ 'ի բայս ինչ առնէ զնոսին գոյականս. ՝ to bury *թաղել*, burial *թաղումն*. to try *փորձել*, trial *փորձ*:

Ance *Ա նիւն. բազում են յոյժ այսօրինակ բառք յեր-*

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

կոսին բարբառս, յանգլիականին և 'ի փրանկ. զոր օրինակ resemblance նմանութիւն:

Բ ութ. *'ի բայից կազմէ գոյականս. զոր օրինակ* to depend, dependance լինելն ընդ իշխանութեամբ, to repent, repentance ապաշխարութիւն:

Ant ան, իլ. *նոյն է յերկոսին բարբառս յածականս և 'ի քանի մինչ գոյականս. զոր օրինակ* pleasant հաճոյական, servant ծառայ:

Ard ճան. *զբնական մինչ բերումն յանգոանելիսն ցուցանէ. զոր օրինակ* drunkard արբեցող, գինեճան:

Ate Ա էալ. *վերջադիր սակաւուց ոմանց ածականաց որք յառաջ գան 'ի լատ. անցեալ դերբայէ. զոր օրինակ* moderate.

Բ ութ. *վերջ. բայից ոմանց, որք ունիցին զիւրեանց գոյական յանգեալ 'ի* ation; *զոր օրինակ* to anticipate կանխել, to abdicate հրաժարել, to relate պատմել:

Cle *վերջ. փրանկ. բառից յանգելոց 'ի* cle, *և 'ի* cule; *զոր օրինակ* article յօդ, particle մասնիկ:

Dom ութիւն. *յօրինիչ գոյական անուանց ոմանց, որ ցուցանէ երբեմն զիշխանութիւն մինչ կամ զյեղանակ լինելութեան. զոր օրինակ* kingdom արքայութիւն, popedom պապութիւն, princedom իշխանութիւն. wisdom իմաստութիւն, freedom ազատութիւն, martyrdom մարտիրոսութիւն:

Ed Ա էալ. *նշան անցեալ դերբայի. զոր օրինակ* filled լցեալ, hated ատելի:

Բ էի. էի. *նշան անկատար և կատարեալ ժամանակաց կանոնաւոր բայից. զոր օրինակ* affirmed.

Գ յարի *'ի գոյականս առ 'ի փոխել զնոսին յածականս, որք և վարին ընդ այլ ածականաց. զոր օրինակ* head գլուխ, headed *որպէս թէ ասել* գլխեայ, *որ ընդ այլ ածականի դնի այսպէս* a gray-headed bird, թռչուն մի մոխրագոյն գլխով. — heart սիրտ, hearted սրտեայ. *զոր օրինակ* kind-hearted բարեսիրտ:

En Ա *յաւելեալ յածականս և 'ի գոյականս փոխէ զնոսին 'ի բայս. զոր օրինակ* red կարմիր, to redden կարմրիլ, շառագունիլ. dark խաւար, to darken խաւարիլ:

Բ ղէն. *յաւելեալ յանուն նիւթոյ իրիք առնէ զնոսին ածականս. զոր օրինակ* earth հող, earthen հողեղէն. gold ոսկի, golden ոսկեղէն. wood փայտ, wooden փայտեղէն, *և ն:*

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Ence Ա ԲԻՆ. նոյն ընդ փրկ. զոր օրինակ residence, prudence, abhorrence.

Բ յարի 'ի բայս 'ի գործել գոյական անուանս. զոր օրինակ to tend ՅԳԵԼ, tendence ՅԳՈՒԹԻՒՆ. to exist ԳՈՒԼ, existence ԳՈՅՈՒԹԻՒՆ:

Ent գտանի յածականս և 'ի գոյականս որք 'ի փրկ. առեալ են. զոր օրինակ indifferent, precedent, ԼԵՆ:

Er Ա ՈՂ. յաւելեալ 'ի բայն առնէ անուն գոյական՝ զառնող գործոյն ցուցանելով. զոր օրինակ reader ԸՆԹԵՐՑՈՂ, sinner ՄԵՂԱՆԼՈՂ, ՄԵՂԱՒՈՐ:

Բ գոյն. յաւելեալ յածականս և 'ի մակբայս (մանաւանդ միավանկս) գործէ զնոսա բաղդատականս. զոր օրինակ keen ՍՈՒՐ, keener ՍՐԱԳՈՅՆ. (տես զայսմանէ 'ի Դասն Ի):

Գ է վերջ բառիս որք 'ի փրկ. յանգին 'ի re. զոր օրինակ member, chamber, number, order.

Ery ԷՂԷՆ զուգաձայն է փրկ. erie որ զբաղում ինչ միաստեսակ 'ի միասին ցուցանէ իբրու հաւաքական. զոր օրինակ crokery ԽԵՂԷՂԷՆ ԱՆՕԹ. փրկ. poterie:

Ess ՈՒՀԻ վարի 'ի դարձուցանել յիգական զտակաւաթիւ գոյականս ոմանս. զոր օրինակ heiress ԿԻՆ ԺԱՌԱՆԳ (heir ԺԱՌԱՆԳ), lioness ՄԱՓԱԿ ԱՌԻՆԺ (lion), shepherdess ՀՈՎՈՒՀԻ (shepherd ՀՈՎԻ):

Est յաւելեալ յածականս և 'ի մակբայս միավանկս լինի գերադրական, զոր օրինակ large, largest ՄԵԾԱԳՈՅՆ ՅՈՅԺ կամ ԱՄԵՆԱՄԵԾ. wisest ԱՄԵՆԻՄԱՍՊՈՒՆ. (տես 'ի Դասն Ի):

Full ԼԻ. ինքն ածական է որ նշանակէ լի, վարեալ իբրև զվերջադիր պահէ զնոյն իմաստ, և ցուցանէ զառատութիւն, և փոխէ զգոյականն յածական (և մին l յապաւի). զոր օրինակ wonderful ՔԱՐՄԱՆԱԼԻ, handful ԲՈՒՆԱԼԻՐ, blissful ԵՐԱՆԵԼԻ, painful ԴԺՈՒԱՐԻՆ, faithful ՀԱՒԱՏԱՐԻՄ:

Fy ՈՒՑԱՆԵԼ (զուգաձայն փրկ. fier որ է աղաւաղեալն իտ. fare). յարի 'ի բաղում բայս. զոր օրինակ to pacify ԽԱՂԱՂՑՈՒՑԱՆԵԼ, to terrify ԵՐԿԵՂՈՒՑԱՆԵԼ, to signify ՆՇԱՆԱԿԵԼ (փր. pacifier, terrifier, signifier): — Բայց յանգլիականին նովին վերջադրով են ևս բաղում բայք՝ զորոց զզուգաձայնն չէ մարթ գտանել 'ի փրկ. բայց և յայնոսիկ յամենեսին գոյ նշանակութիւն տալոյ առնել. to nullify ՈՉԼԱՑՈՒՑԱՆԵԼ, to beautify ԳԵՂԵՑԿԱՑՈՒՑԱՆԵԼ, to frenchify ՖՐԱՆԿԱՑՈՒՑԱՆԵԼ:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Graphy գրոՒիւն, ձայն յունական γράφω գրէմ, յուսումնական անուանս մակացութեանց պատշաճեալ. զոր օրինակ geography աշխարհագրութիւն:

Hood ՒիւՒն. յարեալ ընդ գոյականս՝ նշանակէ զբարս սեպհականս, զպայման կենաց և հասակի և զյեղանակ ինչ լինելութեան. զոր օրինակ childhood մանկութիւն, neighbourhood դրացութիւն. (արմատքն child և neighbour).

Ia ոպան, վերջադիր յատուկ անուանց աշխարհաց, յորմէ լինի ածական անուն բնակչացն յաւելլով n. զոր օրինակ Armenia, Armenian; Persia, Persian.

Ian զուգաձայն փրկ. ien; զոր օրինակ magician, logician (փրկ. magicien, logicien).

Ible ման, լի, նոյն բառք են յերկոսին բարբառս. զոր օրինակ impossible; յանգլիականին երբեմն վարի փոխան վերջադրիս able.

Ic ման բազում ածականք և գոյականք ոմանք յանգեալք 'ի փրկ. ique, յանգին յանգլիականն ic. զոր օրինակ pathetic.

Ical ման. 'ի բառս ինչ նոյն է ընդ փրկ. զոր օրինակ radical, vertical. բայց սովորաբար հաւասարազօր է փրկ. ique. զոր օրինակ periodical, ironical (փրկ. periodique, ironique).

Ics ման. յանգեալքն մեծաւ մասամբ են յունական անուանք ուսումնականք, որք թէպէտ 'ի լինելն գոյական առնուն s, բայց առաւել յեզականն վարին քան յոքնական, զորս և կարգեսցուք առանձն. hysterics արգանդացաւ, physics բնականն կամ բնաբանութիւն, ethics բարոյականն, optics պեսականն, conics կոնականն, catoptrics հայելողականն, dioptrics ընդհայելողականն, acoustics լսողականն, pneumatics օդականն, statistics վիճակագրականն, statics կշռաբանականն, spherics գնդականն, tactics զինուորականն, economics տնտեսականն, mathematics ուսողականն, mechanics մեքենականն, hydraulics ջրաբաղնականն, hydrostatics ջրաչրականն, analytics լուծականն, politics քաղաքականն, ևն:

Ing Ա ով. նշան ներկայ դերբայի. զոր օրինակ loving սիրելով, filling լցուցանելով, writing գրելով:

Ի ող. նոյնն վարի և իբրու գոյական անուն. զոր օրինակ daring յանդուգն (յանդգնող), drinking արբեցող, eating կերող, building շինուածք, blessing օրհնութիւն:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Ion Ի՛ն, ոն՝ վերջադիր զուգաձայն ընդ փրկ. յոր յանգին յանգլիականին հաղար և երկերիւր բառք և աւելի ևս հաւասարաղօրք փրկ.: — Դարձեալ՝ ի յապաւեալ զվերջս ion գործին նոյնչափ ևս բայք. զոր օրինակ assertion, to assert, հաստատութիւն, հաստատել: — Այլ այս կանոն չէ անխախտ:

Ish Ա՛ն. յարեալ՝ ի գոյականս փոխէ զնոսին յածականս, ցուցիչ նմանութեան. զոր օրինակ child մանուկ, childish մանկական:

Բ՝ ի՛. յարեալ յածականս նուազեցուցանէ զնշանակութիւն նոցին. զոր օրինակ green կանաչ, greenish կանաչէ՛. pale դեղին (գոյն), palish դեղնորակ. late անագան, latish սակաս մի անագան. fool յիմար, foolish բախած:

Գ՝ վերջ բայից որք՝ ի փրկ. յանգին՝ ի ir. զոր օրինակ to furnish (փրկ. fournir).

Դ՝ ոյ՝. են դարձեալ յատուկ անուանք որոց ածականն տարօրինակ՝ ի գոյականէն յանգի ish. և են այսոքիկ Spaniard գոյ. spanish ած. սպանիոյ՝. Dane գոյ. danish ած. դանիոյ՝. Pole գոյ. polish ած. լեհոյ՝. Turk գոյ. turkish ած. Ռուրք. Moor գոյ. moorish ած. մաւրիտանոյ՝: — Իսկ այլ յատուկ անուանք նոյն են յածականն և՝ ի գոյական:

Ity Ի՛ն. սոյնպէս յանգին գրեա թէ ամենայն բառք յանգեալքն՝ ի փրկ.՝ի ité, և են նոյնանիշ ընդ նոսա. զոր օրինակ necessity, էն:

Ive Ա՛ն, այ՝ն. յանգին ածականք փրկ. յանգեալք՝ ի if: զոր օրինակ attentive, persuasive, pensive, corrosive.

Բ՝ յաւելու մասնիկս՝ ի բայս՝ ի գործել զնոսա ածականս, և տայ զնմաստ կարողութեան գործելոյ կամ առնելոյ ինչ:

Kin մասնիկ նուազական. զոր օրինակ napkin անձեռոցիկ:

Keeper փէր, պան (՝ի բառէս to keep ունել, պահել), զոր օրինակ housekeeper պանուտիր, shopkeeper հանրի փէր (հանրապան):

Less ան. ժխտական մասնիկ որ յարեալ՝ ի գոյականս առնէ զնոսին ածականս, և նշանակէ զզերկն լինել և զպակասել. զոր օրինակ doubtless անդարանոյս: — Այսպիսիք վարին երբեմն և փոխան մակբայի առանց յաւելլոյ զնշանն ly.

Like նման, պէս. նշանակէ նման, և վարի իբր վերջադիր

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

մանիկ (որպէս և համառօտութիւն նորին ly) առ առնել ածականս 'ի գոյականաց՝ նշանակողս նմանութեան . զոր օրինակ godlike աստուածանման , heavenly երկնանման :

Ly Ա պէս , բար . յարեալ 'ի բազմաթիւ ածականս գործէ զնոսին մակբայս . զոր օրինակ dearly սիրելապէս , probably հաւանականաբար , friendly մտերմաբար , easily հեշտաբար :

Բ . յարեալ 'ի գոյականս առնէ զնոսա ածականս :

Գ . յարեալ յածականս փոխէ զնոսա յայլ ածական , զոր օրինակ goodly .

Man նշանակէ մարդ , յարեալ 'ի գոյականս գործէ անուանս պաշտամանց , արուեստի , վիճակի և պատուոյ . զոր օրինակ statesman պաշտօնեայ պետութեան , horseman ձիաւոր (այրուձի) , seaman նաւաւոր (մարդ ծովու) , ևն :

Ment Ա գոյական անուանք ինչ յանգեալք 'ի ment նոյն են յերկոսին բարբառս . զոր օրինակ detriment , monument .

Բ ուն . յարի յարմատս ինչ բայից առ գործել զնոսին գոյականս . զոր օրինակ to refresh , refreshment .

Most ամենա . տեսաք 'ի դասս ածականաց զmost լինել նշան գերադրականին որ և սովորաբար դնի յառաջոյ ածականին կամ մակբային . այլ են ածականք ոմանք և մակբայք որ զինի իւրեանց առնուն զայն նշան իբրու վերջադիր . զոր օրինակ undermost , uppermost .

Ness ութիւն . յարի 'ի բազում ածականս 'ի գործել զնոսին գոյականս . զոր օրինակ mild փաղց , mildness փաղցութիւն :

Or Ա ող . (որպէս և er) յաւելեալ 'ի բայն առնէ գոյական՝ առնող գործոյն . զոր օրինակ to sail նաւել , sailor նաւապետ :

Բ . բազում անգամ զուգաձայն է փրկ . eur ; զոր օրինակ inferior .

Ory վարի յածականս և 'ի գոյականս համաձայն փրկ . oire ; զոր օրինակ glory , ivory ֆղոսկր :

Our զուգաձայն փրկ . eur ; բազումք յարդեաց գրեն պարզ or ; զոր օրինակ favor , honor , valor , rigor ըստ Ուեպստերի :

Ous զուգաձայն փրկ . eux , և նոյն ածականք են յերկոսին բարբառս :

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Ship ՇԻՆ. *ցուցանէ զպայման կամ զյեզանակ լինելու թեան կամ զիշխանական ինչ աշխատեան. զոր օրինակ* hard ԴԺՈՒԱՐ, ԱՆՀԱՐԸ, hardship ԱՆՀԱՐՈՒԹԻՒՆ. friendship ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ, lordship ՏԷՐՈՒԹԻՒՆ, ladyship ՏԻԿՆՈՒԹԻՒՆ, kingship ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ:

Sis. *յունական բառք յանգեալ յեզականն 'ի sis, 'ի յոքնական փոխեն զյեսին i 'ի e. զոր օրինակ* basis, bases; crisis, crises; ellipsis, ellipses; phasis, phases.

Some Ա ԻՒ, ԻՆ. *յարեալ յածականս սակաւ ինչ նուազ ղեցուցանէ զնշանակութիւն նոցա. զոր օրինակ* dark ԽՈՒԱՐ, darksome ԽՈՒԱՐԻՆ:

Ռ ԻԼ. *յաւելեալ 'ի գոյականս և 'ի բայս փոխէ զնոսին յածականս. զոր օրինակ* toil ՊԱՐԿԱՍՈՒՄ, toilsome ՊԱՐԿԱՍԱԷՆՈՒԻԼ. light ԼՈՅՍ, lightsome ԼՈՒՍԱՒՈՐ. game ԽԱՂ, gamesome ՂՈՒԱՐԸ. to tire ՊԱՂԿՈՑՈՒՑԱՆԷԼ, tiresome ՊԱՂԿՈՒԻ:

Teen ՏԱՍՆ (*այլայլեալն բառիս* ten ՏԱՍՆ) *յաւելեալ 'ի միաւորսն առնէ զնոսին դարձեալ բացարձակ թուականս վերադասս յերէքտասանէ ցիններեսասն (տես 'ի Դասն Ը.):*

Th Ա ԹԷԹ. *յարի 'ի բացարձակ թիւս և փոխէ զնոսա 'ի դասականս. (տես 'ի Դասն Ը.) որք 'ի բացարձակն յանգին 'ի ty, 'ի դասականին լինին tieth.*

Ռ. *յարի երբեմն յածականս և փոխէ զնոսա 'ի գոյական, այլայլելով սակաւ ինչ զուղղագրութիւն արմատականին. զոր օրինակ* slaw ԴԱՆԴԱՂ, sloth ԴԱՆԴԱՂՈՒԹԻՒՆ, ևն:

Ty Ա ՈՒՆ. *յարի 'ի միաւոր թիւս 'ի գործել զնոսա տասնաւորս. զոր օրինակ* six ՎԵՑ, sixty ՎԱԹՍՈՒՆ:

Ռ. *յանգս ty (զուգաձայն փրկ. té) յաւելու յածականս 'ի գործել գոյականս. զոր օրինակ* variety.

Ure *յանգեալ բառք բոլորովիմբ նոյն են ընդ փրկ. յանգելոց ure. 'ի սակաւս ուղղագրութիւնն զանազանի. զոր օրինակ* adventure, *փրկ.* aventure.

Wards *ցուցանէ զուղղութիւնն կամ զձկտումն առ իմն. դէպ, ՈՒՆ. և յարի 'ի նախագրութիւնս և 'ի մակբայս. զոր օրինակ* afterwards ԱՊԱ, 'Ի ՎԱԽՃԱՆԻ, inwards 'Ի ՆԵՐՍ, outwards ԱՐՏԱՍ, ևն:

Wise ՊԷՍ (*յիտալականէն* guisa ԻՆԵՐՊ, ԵՂԱՆԱԿ). *յարի 'ի բառս ինչ և գործէ զնոսին մակբայս. զոր օրինակ* otherwise

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

այլակերպ, այլապէս. զոր ոմանք գրեցին otherways (այլ ճանապարհ), առ չգիտելոյ զարմատականն բառին։

Y Ա. գրեա թէ ամենայն յանգեալքն 'ի փրկ. 'ի ie, յանգլիականին յանգին 'ի y զոր օրինակ tyranny, փրկ. tyrannie; և որք յառաջ քան զ y ունիցին զբաղաձայն տառ, յածանցականս փոխեն զ y 'ի i։ զոր օրինակ easy դի-րին, լինի մակբայ easily, և ոչ easyly.

Բ. յարի 'ի բաղում գոյականս և գործէ զնոսա ածականս. զոր օրինակ flower ծաղիկ, flowery ծաղկեալ. health առողջութիւն, healthy ֆաջառողջ. ease հանգիստ, դի-ր, easy դի-րին, ևն։

Շատ լեցի և վասն ածանցից ասացեալքս ցայսվայր, որով զանբաւ ճոխութիւն անգլիական բարբառոյ մարթ է 'ի սակաւ արմատականն բովանդակել, և ըստ վերոյգրեալ կանոնացդ գուշակել զնշանակութիւն իւրաքանչիւր ածանցականացն՝ և առանց իսկ բառագրոցն օժանդակութեան։

Յետ միանգամ զկազմութիւն անգլիական բառից առաջի առնելոյ, օրինակաւ միով ցուցցուք և զյառաջատուութիւն բարբառոյ նոցին, և իւրաքանչիւր տառիցն զփոփոխութիւն ըստ այլ և այլ դարուց գրութեան 1։

---

1 Օրինակս այս, որպէս և 'ի վեր անդր արմատականացն ծանօթութիւն, առեալ է յանուանեալ գրոցն **Recherches sur la fusion du franco-normand et de l' anglo-saxon, par M. J. P. Thommerel,** որ և տարեալ է զմրցանակ 'ի ճեմարանին Փարիզու։

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Ի լեզու Գոթացւոց 'ի Դ. դարու. — Uphilas.

Atta unsar, thu in himinam.
Weihnai namo thein.
Quimai thiudinassus theins.
Wairthai wilja theins, swe in himina, ja ana airthai.
Hlaif unsarana thana sinteinan gif uns himmadaga.
Jah aflet uns thatei skulans sijaima, swaswe jah weis afletam thaim skulam unsaraim.
Ja ni briggais uns in fraistubnjai.
Ak lausei uns of thamma ubilin. Amen.

Ի լեզու Սաքսոն-արևմտեայց 'ի ԺԱ. դարու. — Aelfric.

Faeder ure, thu the eart on heofenum,
Si thin nama gehalgod;
To be cume thin rice;
Gewurthe thin willa on eorthan swa swa on heofenum;
Urne daeghwamlican hlaf syle us to daeg;
And forgif us ure gyltas, swa swa we forgifath urum gyltendum.
And ne gelaed thu us on costnunge;
Ac alys us of yfele, sothlice.

Ի լեզու անգլիացի յ ԺԲ դարու. — Wanley.

Ure faeder, thu the on heofene eart,
Syo thin name gehaleged;
To cume thin rice;
Geworde thin wille on heofene and on eorthe;
Syle us to daig urne daighwamliehe hlaf;
And forgyf us ure geltes, swa we forgyfath aelcen thare the with us agylteth;
And ne laed thu us on costnunge;
Ac alys us fram yfele.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Ի լեզու անգլիացի յ ԺԳ դարու. — Chamberl.

Oure fader, that art in hevenes,
Halewid be thi name;
Thy kingdom come;
To be thi wille do as in hevene and in erthe;
Gyff to us this day oure brede over other substance;
And forgyve to us oure dettis as we forgyven to our dettours;
And lede us not into temptatioun;
But delyve us fro yvel. That is so be it.

Ի լեզու անգլիացի 'ի ԺԴ դարու. — Wicliffe.

Our fadyr, that art in heavenes,
Halloed be thy name;
Thy kingdom come to;
Be thy will done in erthe as in hevene;
Geve to us this day our bread, over other substance,
And forgif to us our dettis as we forgewen to our detters;
And leed us not into temptatioun;
But delever us from evel. Amen.

Ի լեզու անգլիացի 'ի ԺԵ դարու. — John Wilkins.

Ouré fadir, that art in hevenes,
Halewid be thi name;
Thi kingdom come to thee;
Be thi will don in eerthe as in hevene;
Give to us this day our breed over othre substance;
And forgive to us oure dettis, as we forgiven oure dettours;
And lede us not into temptation;
But deliver us from ivel. Amen.

Ի լեզու անգլիացի 'ի ԺԶ դարու. — Tindale.

Oure father, whyche arte in heauen,
Halowed be thy name;

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Lett thy kingdom come;
Thy wyll be fulfylled as well in earth as it is in heauen;
Geue vs this daye oure daylye bread;
And forgeue vs oure trespasses euen as we forgeue oure trespacers;
And leade us not into temptation;
But delyuer vs frome euyll. Amen.

Յարդի բարբառ անգլիացւոց.

Our father, who 1 art in heaven,
Hallowed be thy name.
Thy kingdom come;
Thy will be done on earth, as it is in heaven;
Give us this day our daily bread;
And forgive us our trespasses, as we forgive them that trespass against us;
And lead us not into temptation;
But deliver us from evil. Amen.

---

1 *Ներաղանդք ասեն* Our father which.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Դ· ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԲԱՑԻՑ

Օժանդակ բայս **To have** *ընդ անուանաց որք՝ի ձայ պատշաձիւն.*

Positively	Հաստատականապէս
I have a loaf,	Ես ունիմ նկանակ մի,
Thou hast some bread,	Դու ունիս հաց,
He has some broth,	Նա ունի արգանակ,
She has some soup,	Նա ունի զլթան,
We have boiled meat,	Մեք ունիմք զպախ միս,
You have roast meat,	Դուք ունիք զխորովեալ միս,
They have minced meat,	Նոքա ունին զյօշեալ.
I had stewed meat,	Ես ունէի միս՝ի փռանէ,
Thou hadst some beef,	Դու ունէիր միս եզին,
He had beef-steaks,	Նա ունէր եզենի՝ի կասկարայէ,
We had some veal,	Մեք ունէաք զմիս հորթու,
You had some mutton,	Դուք ունէիք միս ոչխարի,
They had mutton-chops,	Նոքա ունէին միս ոչխարի՝ի տապակէ.
I shall have some lamb,	Ես ունիցիմ զմիս գառին,
Thou wilt have some pork,	Դու ունիցիս զխոզենի,
He will have some bacon,	Նա ունիցի զապուխտ խոզի,
We shall have some venison,	Մեք ունիցիմք զմիս էրէոյ,
You will have some sausages,	Դուք ունիցիք զերշիկս,
They will have some ham,	Նոքա ունիցին զզիստ խոզի.
I should have a pie,	Ես ունիցիմ կարկանդակ ինչ,
Thou wouldst have a turkey,	Դու ունիցիս զհնդկահաւ,
He would have a rabbit,	Նա ունիցի զճագար,

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

We should have a chicken, Մեք ունիցիմք զվառեակ,
You would have a duck, Դուք ունիցիք զբադ,
They would have a pigeon, Նոքա ունիցին զձագ աղաւնոյ.

INTERROGATIVELY ՀԱՐՑԱԿԱՆԱՊԷՍ

Have I a hare? Ունիմ զնապաստակ մի,
Has he any larks? Ունի՞ նա արտուտս ինչ,
Have we a goose? Ունիմք մեք սագ մի,
Have you any mushrooms? Ունիք դուք զսունկս,
Have they any eggs? Ունի՞ն նոքա ձուս.

Had I any fishes? Ունէի՞ ես ձկունս,
Had he any oysters? Ունէր նա ոստրէս,
Had we a trout? Ունէաք մեք կարմրախայտ մի,
Had you an eel? Ունէիք դուք օձաձուկն մի,
Had they a pike? Ունէի՞ն նոքա կռնկաձուկն մի.

Shall I have beer? Ունիցի՞մ ես գարեջուր,
Will he have wine? Ունիցի՞ նա գինի,
Shall we have cider? Ունիցի՞մք մեք խնձորօղի,
Shall you have perry? Ունիցի՞ք դուք տանձօղի,
Will they have brandy? Ունիցի՞ն նոքա ցքի,
Would he have cheese? Ունիցի՞ նա պանիր,
Should you have butter? Ունիցի՞ք դուք զկոգի,
Would they have salad? Ունիցի՞ն նոքա զաղցան.

NEGATIVELY ԺԽՏԱԿԱՆԱՊԷՍ

I have no grapes, Չունիմ ես զխաղող,
Thou hast no apples, Չունիս դու խնձորս,
He has no pears, Չունի նա տանձս,
We have no walnuts, Չունիմք մեք ընկոյզս,
You have no figs, Չունիք դուք զթուզ,
They have no apricots, Չունին նոքա ծիրանս.

I had no peaches, Չունէի ես դեղձս,
Thou hadst no strawberries, Չունէիր դու ելակս,
He had no cherries, Չունէր նա կեռասս.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

We had no plums,	Չունէաք մեք դամոնս,
You had no pomegranates,	Չունէիք դուք նուռս,
They had no melons,	Չունէին նոքա սեխս.
I shall not have any cakes,	Չունիցիմ ինչ քաքարս,
He will not have any sweet-meats,	Չունիցի ինչ քաղցրաւենիս,
We shall not have any fritters,	Չունիցիմք ինչ հաստեայս,
You will not have any sugar-plums,	Չունիցիք ինչ շաքարեղէնս,
They will not have any tarts,	Չունիցին ինչ նաստիկս.
I should have no chocolate,	Չունիցիմ զչոքոլաթ,
He would have no coffee,	Չունիցի զխահվէ,
We should have no tea,	Չունիցիմք մեք զթէյ,
You would have no milk,	Չունիցիք դուք զկաթն,
They would have no sugar,	Չունիցին նոքա շաքար.

NEGATIVELY and INTERROGATIVELY	ԺԽՏԱԿԱՆԱՊԷՍ և ՀԱՐՑԱԿԱՆԱՊԷՍ
Has he not a napkin?	Չունի՞ նա անձեռոց,
Have we not a table cloth?	Չունի՞մք մեք սփռոց,
Have you no plates?	Չունի՞ք դուք պնակս,
Have they no knives?	Չունի՞ն նոքա դանակս.
Had he not a fork?	Չունէ՞ր նա պատառաքաղ,
Had we no spoons?	Չունէա՞ք մեք դրգալս,
Had you no salt?	Չունէի՞ք դուք աղ,
Had they no pepper 1?	Չունէի՞ն նոքա զպղպեղ.
Will he not have mustard?	Չունիցի՞ նա զմանանեխ,
Shall we not have a bottle?	Չունիցի՞մք մեք սրուակ մի,

1 Հնչեա զ pepper ֆէփփըր. առ որոշել 'ի paper ֆէյփըր, որ է թուղթ:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Shall you not have a cork-screw?	Չունիցիք դուք խցահան մի,
Will they not have a glass?	Չունիցին նոքա բաժակ մի.
Would he not have silver-plate?	Չունիցի նա ապասս արծաթի,
Should we not have a coffee-pot?	Չունիցինք մեք զանօթ մի խահ-վէի,
Should you not have tea-cups?	Չունիցիք դուք սկահակս թէյի,
Would they not have saucers?	Չունիցին նոքա համեմակալս:

Օժանդակ բայս **To be** *ընդ անուանց որք 'ի պայմանս կենաց պատշաճին*

Positively	Հաստատականապէս
I am physician,	Ես բժիշկ եմ,
Thou art an apothecary,	Դու դեղագործ ես,
He is a surgeon,	Նա վիրաբոյժ է,
We are printers,	Մեք տպագրողք ենք,
You are booksellers,	Դուք գրավաճառք էք,
They are stationers.	Նոքա թղթագործք են.
I was an architect,	Ես շինող (Ճարտարապետ) էի,
He was a dancing-master,	Նա վարժապետ էր պարու,
We were fencing-masters,	Մեք մարզապետք էաք զինա-խաղուց,
You were music-masters,	Դուք վարժապետք էիք երա-ժշտութեան,
They were drawing-masters.	Նոքա վարժապետք էին ու-ղուագրութեան.
I shall be a painter,	Ես եղէց նկարիչ,
He will be a gunsmith,	Նա լիցի հրազենագործ,
We shall be button-makers,	Մեք լիցուք Ճարմանդագործք,
You will be bakers,	Դուք եղիջիք հացագործք,
They will be butchers.	Նոքա եղիցին մսագործք.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

I should be a shoe-maker,	Ես եղէց մուճակակար,
He would be a cobbler,	Նա եղիցի հնակարկատ,
We should be boot-makers,	Մէք եղիցուք կօշկակար,
You would be coach-makers,	Դուք լինիցիք կառագործք,
They would be carpenters.	Նոքա լինիցին հիւսուն։

INTERROGATIVELY	ՀԱՐՑԱԿԱՆԱՊԷՍ
Am I a locksmith?	Ե՞մ ես դարբին բանալեաց,
Art thou a joiner?	Ե՞ս դու ատաղձագործ,
Is he a hat-maker?	Է՞ նա խոյրարար,
Is she a washer-woman?	Է՞ նա կին լուացարար (թա-փիչ),
Are we grocers?	Ե՞մք մէք դեղավաճառք,
Are you hair-dressers?	Է՞ք դուք հերայարդարք,
Are they barbers?	Ե՞ն նոքա վարսավիրայք։
Was I a watch-maker?	Էի՞ ես ժամագործ,
Was he a fan-maker?	Է՞ր նա հովահարագործ,
Were we jewellers?	Էա՞ք մէք ակնավաճառք,
Were you tinmen?	Էի՞ք դուք թանագագործք,
Were they haberdashers?	Էի՞ն նոքա փերեզակք։
Shall I be a goldsmith?	Եղէց ես ոսկէգործ (արծաթագործ),
Will he be a saddler?	Եղիցի՞ նա թամբագործ,
Shall we be millers?	Եղիցո՞ւք մէք մլաղացք կամ աղորէպանք,
Shall you be pastry-cooks?	Եղիջի՞ք դուք քաքարագործք,
Will they be confectioners?	Եղիցի՞ն նոքա շաքարագործք։
Should I be a tailor?	Լինիցի՞մ ես դերձակ,
Would he be a weaver?	Լինիցի՞ նա ոստայնանկ,
Would she be a seamstress?	Լինիցի՞ նա դերձակ (կին),
Should we be upholsterers?	Լինիցի՞մք մէք տնայարդարք,
Should you be diers?	Լինիցի՞ք դուք ներկարարք,
Would they be coopers?	Լինիցի՞ն նոքա տակառագործք։

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

NEGATIVELY	ԺԽՏԱԿԱՆԱԳԻՏ
I am not a broker,	Չեմ ես վաճառարկու,
Thou art not a hosier,	Չես դու վաճառող գուրպայից,
He is not a turner,	Չէ նա ճախարակագործ,
We are not innkeepers,	Չեմք մեք պանդոկապետք,
You are not gardeners,	Չէք դուք պարտիզապանք,
They are not fruiterers.	Չեն նոքա մրգավաճառք.
I was not a glazier,	Չէի ես ապակեգործ,
He was not a chimney-sweeper,	Չէր նա մաքրող ծխնելուզաց,
We were not basket-makers,	Չէաք մեք կողովահիւսք,
You were not wagoners,	Չէիք դուք սայլորդք,
They were not shop-keepers.	Չէին նոքա հանուրթպանք.
I shall not be a glover,	Չեղէց ես ձեռնոցագործ,
He will not be a workman,	Ոչ եղիցի նա գործաւոր,
We shall not be porters,	Ոչ եղիցուք մեք բեռնակիրք կամ դռնապանք,
You will not be sword-cutlers,	Ոչ եղիջիք դուք սրիչք,
They will not be curriers,	Ոչ եղիցին նոքա խաղախորդք.
I should not be a groom,	Չլինիցիմ ես ձիագարման,
He would not be a farrier,	Չլինիցի նա պայտառ,
We should not be potters,	Չլինիցիմք մեք բրուտք,
You would not be pewterers,	Չլինիցիք դուք անագագործք,
They would not be cutlers,	Չլինիցին նոքա դանակագործք.

NEGATIVELY and INTERROGATIVELY	ԺԽՏԱԿԱՆԱԳԻՏ և ՀԱՐՑԱԿԱՆԱԳԻՏ
Am I not a wine-merchant?	Չեմ՞ ես գինեվաճառ,
Is he not a looking-glass-maker?	Չէ՞ նա հայելագործ,
Are we not spectacle-makers?	Չեմ՞ք մեք դիտակագործք, աչկնոցագործք,

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

Are you not ribbon-makers?	Չէք դուք ժապաւինագործք,
Are they not perfumers?	Չիցեն նոքա խաղեփեաց.
Was I not a china-man?	Չէի՞ ես չինագործ,
Was he not a collier?	Չէր նա ածխագործ.
Were we not tanners?	Չէաք մեք խաղախորդք,
Were you not tallow-chandlers?	Չէիք դուք մոմագործք,
Were they not pork-butchers?	Չէին նոքա նպարավաճառք.
Shall I not be a cartwright?	Չեղէց ես սայլագործ,
Will he not be a sailor?	Ո՞չ եղիցի նա նաւավար,
Shall we not be watermen?	Ո՞չ եղիցուք նաւակավարք,
Shall you not be soldiers?	Ո՞չ եղիջիք դուք զօրականք,
Will they not be cooks?	Ո՞չ եղիցին նոքա խոհակերք.
Should I not be a steward?	Չլինիցիմ ես հազարապետ տան,
Would he not be a footman?	Չլինիցի՞ նա սուրհանդակ,
Would she not be a chamber-maid?	Չլինիցի՞ նա աղախին,
Should you not be brewers?	Չլինիցիք դուք յօրինողք գարեջրոյ,
Would they not be butlers?	Չլինիցի՞ն նոքա տաճարապետք:

Կիրառութիւն անկանոն բայից որ յառաջ մարին 'ի խօսս.

Ի կրթութիւնս յայսոսիկ դնեմք զպարզ կամ զարմատական բայս եւթ, յորոց և զածանցականս նոցին մարթի գուշակել. զոր օրինակ 'ի բայից come, hold, bear, bid, tell, են, մարթի մտաբերել զածանցս նոցին become, behold, forbear, forbid, foretell, են:

Ի բանս ուրեք յոր մի եւթ ժամանակն եդեալ իցէ, յայնոսիկ անկատարն և անցեալ դերբայն նոյն է, որպէս տեսանես և 'ի ցուցակի անկանոն բայից զոր յառաջնում մասին կարդեցաք (տես 'ի Դասն ԺԵ):

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

I *bore*[1] my sorrows with patience, and he has not *borne* his with the same resignation.	Տարայ ես վշտաց իմոց համբերութեամբ, և նա ոչ պարէաւ է իւրոցն նովին հպատակութեամբ.
He *beat*[2] all his enemies.	Եհար նա զամենայն զիւր թշնամիս.
We *began*[3] our exercise yesterday, and you have not yet *begun* yours.	Մեք սկսաք զհրահանգս մեր յերէկն, և դուք չէք տակաւին սկսեալ զձերն.
You *bent*[4] your course to England.	Դուք ուղղեցէք զգնացս ձեր 'ի Անգլիա.
They *bereft*[5] me of all my property.	'Նոքա զրկեցին զիս յամենայն ստացուածոց իմոց.
I *besought*[6] you to do it.	Աղաչէի ես զքեզ առնել զայդ.
He *bid*[7] me go home.	Նա հրամայէաց ինձ երթալ 'ի տուն.
We *bound*[8] two books.	Կապեցաք մեք երկուս գիրս.
The dog that *bit*[9] me, has not *bitten* you.	Շունն որ էխած զիս, չէ խածեալ զքեզ.
They *bled*[10] me three times.	Հապին ինձ երակ երիցս.
The wind *blew*[11] so hard, that several houses were *blown* down.	Հողմն այնպէս ուժգին ընէաց, զի բազում տունք կործանեալ եղեն.
I *broke*[12] my leg, and he has *broken* his arm.	Խորտակեցաւ ազդր իմ և նորա խորտակեալ եղև բազուկ.
He was *bred*[13] a scholar.	Նա անեալ եղև յաշակերտութիւն գրոց.
We *brought*[14] him to reason.	Մեք ածաք զնա 'ի միտս.
You *built*[15] a very fine house.	Կառուցէք դուք տուն մի կարի գեղեցիկ.
They *burnt*[16] their fingers.	Այրեցին զմատունս իւրեանց.

---

1 To bear, 2 To beat, 3 To begin, 4 To bend, 5 To bereave, 6 To beseech, 7 To bid, 8 To bind, 9 To bite, 10 To bleed, 11 To blow, 12 To break, 13 To breed, 14 To bring, 15 To build, 16 To burn.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

I *burst* [17] into tears.	Փլյիէցայ կամ լուծայ յարտասուս.
He *bought* [18] a fine horse.	Գնեաց նա չքնաղ երիվար մի.
We *cast* [19] ourselves at his feet.	Մեք արկաք զանձինս մեր առոտս նորա.
You *chose* [20] a few English books, but you have not *chosen* the best.	Դուք ընտրեցիք քանի ինչ անգլիացի գիրս, բայց զլաւագոյնն ոչ եք ընտրեալ.
They *came* [21] yesterday, but they are not *come* to-day.	Եկին նոքա յերէկն, այլ այսօր ոչ են եկեալ.
This lace *cost* [22] me twenty guineas.	Այս ժանեակ քան կինէից եղև ինձ.
This opinion *crept* [23] insensibly into people's minds.	Այս կարծիք ճարակեցաւ յանզգաստից 'ի միտս ժողովրդեան.
The whole army was *cut* [24] to pieces.	Բովանդակ բանակն յօշ յօշ կտրեցաւ.
He *dealt* [25] with me very honestly.	Վարեցաւ ընդ իս յոյժ արժանապէս.
My father *died* [26] last year, and my brother has been *dead* these fifteen years.	Հայր իմ մեռաւ յանցեալում ամի, և եղբայր իմ այս հնգետասան ամք են զի մեռեալ է.
I *did* [27] him a great kindness, and he has *done* me a great deal of harm.	Ես արարի նմա մեծամեծ բարիս, և նա արարեալ է* ինձ անիրաւութիւն մեծ.
Four horses *drew* [28] his carriage, and mine was *drawn* by two.	Չորք երիվարք յգեին զկառս նորա, և իմն յգեալ էր յերկուց.
I *dreamt* [29] all night long.	Ցերեկէի զգիշերն ողջոյն.
We *drank* [30] your health.	Արբաք մեք 'ի ձեր կենդանութի.

17 To burst, 18 To buy, 19 To cast, 20 To choose, 21 To come, 22 To cost, 23 To creep, 24 To cut, 25 To deal, 26 To die, 27 To do, 28 To draw, 29 To dream, 30 To drink.

* Բաղում անգամ 'ի Հ. օրինակսդ վարեմք զյարակատարն կամ զդերակատար առ 'ի մէջ բերել զկրկին ժամանակս խոտորեալս անգլիական բայից:

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

You *drove* [31] him mad, and he has *driven* you out of his house.	Դուք վարեցէք զնա 'ի բարկութիւն, և նա հալածեալ է զձեզ 'ի տանէ իւրմէ.
They *ate* [32] a deal of bread, but you have *eaten* very little.	Նոքա յոլովհաց կերին, այլ դուք սակաւ յոյժ կերեալ էք.
His reputation *fell* [33], and every thing is *fallen* with it.	Անկաւ քաջանուանութիւն նորա, և ամենայն ինչ ընդ նմա անկեալ է.
They *fed* [34] only upon rice, milks and herbs.	Սնանէին նոքա բրնձով եւ կաթամբ և բանջարօք.
I *felt* [35] a great pain in my head.	Զգացի ցաւ մեծ 'ի գլուխ իմ.
He *fought* [36] for the cause of liberty.	Մարտեաւ նա 'ի պատճառս ազատութեան.
We *found* [37] every day some new diversions.	Գտանէաք մեք զօր ամենայն ըզնորանոր զուարճութիւնս.
He *flung* [38] away his money.	Վտանէաց նա զդրամն իւր.
Your bird *flew* [39] away, and mine is *flown* too.	Թռչուն քո թռեաւ 'ի բաց, և իմն ևս թռուցեալ է.
All his friends *forsook* [40] him; but I was *forsaken* even by my nearest relations.	Ամենայն բարեկամք նորա լքին զնա, այլ և ես լքեալ եղէ յիմոց մերձաւորս ծանօթից.
It *froze* [41] very hard yesterday; but it has *frozen* harder to-day.	Յերէկին սաստկագոյնս պաղեցաւ, այլ այսօր և ևս սաստկագոյն սառուցեալ է.
He *got* [42] riches and glory.	Սպասաւ նա ինչս և փառս.
Your brother *gave* [43] me ten guineas, and you have *given* me five.	Եղբայր քո էր ինձ տասն կինիկ, և դուք տուեալ էք հինգ.
I *went* [44] to his house, and he was *gone* to the play.	Գնացի 'ի տուն նորա և նա գնացեալ էր 'ի թատրն.

---

31 To drive, 32 To eat, 33 To fall, 34 To feed, 35 To feel, 36 To fight, 37 To find, 38 To fling, 39 To fly, 40 To forsake, 41 To freeze, 42 To get, 43 To give, 44 To go.

Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd
Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Your cousin *grew*[45] rich, and you are *grown* poor.	Եղբօրորդի քո եղեալ մեծատուն, և դու լեալ ես աղքատ.
I never *heard*[46] of such a thing.	Զիք իմ բնաւ լուեալ այսպիսի ինչ.
He *hid*[47] his treasures; but where has he *hidden* them?	Ծածկէաց նա զդանձս իւր, այլ ո՞ւր ծածկեալ է զայնս.
You *hit*[48] it right.	Բարւոք գուշակեցեր դու զայդ.
They *held*[49] the dagger to his throat.	Նոքա ունէին զսուր իւրեանց 'ի վերայ պարանոցի նորա.
I never *hurt*[50] him.	Ոչ երբէք վնասեալ եմ նմա.
He *kept*[51] his promise.	Պահէաց նա զիւր խոստումն.
We *knew*[52] him before we were *known* by him.	Ճանաչէաք մեք զնա մինչև ծանուցեալ էաք 'ի նմանէ.
The rain has *laid*[53] the dust.	Անձրևն ցածոյց զփոշին.
He *led*[54] in the path of virtue.	Նա առաջնորդէաց մեզ 'ի շաւիղս առաքինութեան.
We *left*[55] it to your choice.	Թողաք մեք զսա 'ի ձեր ընտրութիւն.
They *lent*[56] us a great deal of money.	Ի քոյ էքսան նոքա մեզ մեծ իմն գումար արծաթոյ.
I *let*[57] him go out.	Թողի զնա ելանել.
He *lay*[58] in the same bed in which I have *lain* twenty times.	Ընկողմանէաւ նա 'ի նմին մահճի յորում քսանիցս ընկողմանեալ էի ես.
We have *lost*[59] our property.	Կորուսաք զինչս մեր.
You *made*[60] me happy.	Երջանիկ արարեր զիս.
They *meant*[61] no harm to us.	Ոչ համարէին նոքա չիսասել մեզ.
I *met*[62] him by chance.	Անկարծս դիպայ նմա.
He *paid*[63] me with ingratitude.	Փոխարինեաց ինձ զապաշնորհութիւն.

---

45 To grow, 46 To hear, 47 To hide, 48 To hit, 49 To hold, 50 To hurt, 51 To keep, 52 To know, 53 To lay, 54 To lead, 55 To leave, 56 To lend, 57 To let, 58 To lie, 59 To lose, 60 To make, 61 To mean, 62 To meet, 63 To pay.

Digitized by INTERNET ARCHIVE
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2015-03-12 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc2.ark:/13960/t5p846b8g
Public Domain / http://www.hathitrust.org/access_use#pd

We have *put* 64 every thing in its place.	Եդաք զամենայն ինչ յիւրում տեղւոջ.
You have *read* 65 many English books.	Դու ընթերցեալ ես յոլով անգլիացի գիրս,
They *rode* * 66 out with him in his coach.	Նոքա էին ընդ նմա ('ի ջրջագայել) 'ի կառս նորա.
The bells *rang* 67 in the morning, and have *rung* again in the afternoon.	Զանգակք հնչէին յառաւօտուն, և հնչեալ էին միւսանգամ յետ հասարակ աւուր.
I *rose* 68 before you were *risen*.	Յարեայ ես մինչև դու յարուցեալ էիր.
He *ran* 69 very fast, but you have *run* faster than he.	Ընթանայր նա արագագոյն, բայց դու յոյժ արագագոյն քան զնա ընթացեալ ես.
We *said* 70 many silly things.	Բազում բարբանջանաց իրս ասացաք.
You *saw* 71 your friend last night, and I have not *seen* him.	Տեսէք դուք զբարեկամ ձեր յանցեալում գիշերի, և ես չեմ տեսեալ զնա.
They have always *sought* 72 after truth.	Նոքա միշտ պէտք էին ճշմարտութեան.
I *sold* 73 all my books.	Վաճառէի զամենայն զգիրս իմ.
He *sent* 74 me a letter by the post.	Առաքէաց նա ինձ նամակ մի թղթատարաւ.
We *set* 75 the inkstand upon the table.	Եդաք մեք զկաղամարն 'ի վերայ գրասեղանոյն.
They have *shed* 77 tears.	Հեղին նոքա արտասուս.
I have *shewen կամ shown* 78 him a great deal of kindness.	Ցուցեալ եմ նմա մտերմութիւն մեծ.

---

64 To put, 65 To read, 66 To ride, 67 To ring, 68 To rise, 69 To run, 70 To say, 71 To see, 72 To seek, 73 To sell, 74 To send, 75 To set, 76 To shake, 77 To shed, 78 To shew *կամ* show.

* Անգլիացիք վարեն զբայս to ride վասն ջրջագայելոյ, յորժամ ոչ հեծիցեն ի ձի։

Digitized by INTERNET ARCHIVE
